Ճշմարիս է, որ եթէ Մարսը լեռներ
ունենար, ապա այդ լուսաւորող մոլո-
րակը ամբողջովին չէր երևալ: Յամե-
նայն դէպս եթէ Մարսը ներկայումս
լեռներ չունի, ապա դա չի նշանակում,
որ նա անցեալում չի ունեցել խոշոր
լեռներ և լեռնաշղթաներ, որոնք վեր-
ջերը անհետացել են:

Ի՞նչպիս են անենեացել այդ
լեռները: — Այս հարցին պատասխաննելու
համար, կը բաւի մեր շուրջը նայենք և
դիտենք մեր Երկրագունդը:

Երկրը հետզհետէ սառչելով սեղմը-
ւում է և այդ պատճառով Երկրի կեղեց
ծածկում է ծալքերով, իսկ այդ ծալ-
քերը կազմել են լեռներ և լեռնաշղդ-
թաներ:

Երկրի առաջին ծալքերից կազմել

է մի ճսկայական լեռնաշղթայ, որը ներ-

կայում ջրի ազդեցութեան տակ կա-

տարելավէս անհետացել է: Այսիդեղ, ուր

կային այդ ճսկայքեան շղթաները, այժմ

ձգում են կանադայի և հարաւային

Սիբիրի դաշտերը: Նոյն կերպարանա-

փոխութիւնը կատարւել է Երկրադնդի

նաև ուրիշ տեղերում:

Այսպէս ուրեմն, երթայով ծանօթից
դէպսի անծանօթից, ընդարձակելով և նոյն
նկատողութիւնները պարսին վերագրե-
լով մենք կարող ենք համարեա թէ հաս-
տատել, որ Մարսի վրայ եղել են լեռ-
ներ, որոնք ջրի ազդեցութեան շնորհիւ
անհետացել են և նրանց տեղը գոյացել
են տափարակ դաշտավայրեր: Ուրեմն
Մարսի վրայ կատարւել է այն, ինչ որ
տեղի է ունեցել նաև մեր Երկրագնդի
մի քանի մասերում:

Երկրագնդը կարող է են-
թարկել Մարսի վիճակին: — Ուրան
որ ժամը գատավիժին է, սակայն անմիտ
էնի է, որ, երբեմն ջրերով առաս Մար-
սը այսօր գուրք է ջրից, ուստի անկա-
րելի մի կարող լինել, որ մեր Երկրը
նոյն վախճանը ունենայ և երբ կը զրկի
ջրից, այն ժամանակ մարդիկ մոռանալով
իրենց անհատականութիւնը, կը միանան
և կըսկսեն փորել ջրանցքներ Երկրը
ջրերու և իրենց գոյութիւնը պահպանե-
լու համար, որովհետեւ առանց ջրի
կեանքը գոյութիւն չունի:

Երկիրը խմում է իր ջուրը և
մրնուրը: — Այժմ հարց է ծագում, թէ
Երկիրը ինչպէս կարող է զրկել այդ-
չափ հարուստ ջրերից: Երկիրը գեռ ևս
ջրի ահագին պաշար ունի Սակայն այն
էլ ճշշտ է, որ Երկրագնդի վրայ կան մի
քանի Երկիրներ, որոնք առաջ պահպարեր

և ճոխ բուսականութեամբ ծածկւած են
եղել, իսկ ներկայումս նրանք ներկա-
յանում են չոր անապատներ Այդաէս
են Սահարայի անապատը, Չինաստանի,
Թուրքեստանի և այլ անապատները,
Բացի գրանից, հաստատած է, որ բազ-
մաթիւ խոշոր գետեր և ջրհորներ, հետք-
հետէ անհետանում են, որովհետև Եր-
կիրը ներս է ծծում այդ ռուր ջրերը, և
կասկած չկայ, որ եթէ Երկիր ստումբ
կենարօնում արագ կատարւի, ասպ մի
օր մենք զրկւած կը լինինք ջրի բոլոր
պաշտրից, հետևապէս կենդանական և
ըուսական կետնքը կը վերանայ Երկրա-
գնդից:

առաջ վաստ առջև և մզ ուր զուր ա-
ռութիւն ունեցած ուղարք առ վա-
գացոց ցը ցու և ազգանձև զանազան ու մ-
խորացուն նայուն բանական առջև ուղա-
րութիւն ուղարկած առջանական ուղա-
րութիւն զանազան առջանական ու-
ղարկած առջանական առջանական ու-
ղարկած առջանական առջանական ու-
ղարկած առջանական առջանական ու-

[redacted]

առջանական առջանական առջանական ու-
ղարկած առջանական առջանական ու-

ՃԻՒԾՈՍՈՅԻՆ

ՔԵՒԵՐՈՎ ԲԱՇՅՈՒՄԸ

Դրենլանդական գաղութների վե-
րատեսուց Լիբրիկից հեռաղիր ստա-
ցաւ, որի մէջ հաղորդում էր, որ ապ-
րիլի 21-ին 1908 թ. դոկտ. Կուկր հա-
սկէ ճիւսիսային բևեռին: Դոկտ. Կու-
կը ճանապարհ էր ընկել 1907 թ. ամա-
ռը, մասնագէտների կարծիքով, բաւա-
կան ալբանուկի կաղմակերպութեամբ:
Նա մեր ժամանակի ականաւոր ճանա-
պարհորդներից մէկն է: Ճանապարհոր-
դութեան գժւարութիւններին ընտելա-
ցել է իր նախկին ճանապարհորդութիւն-
ների ընթացում: Նա իրքեւ ցիցի մաս-
նակցել էր Պիւրիի ճանապարհորդութիւն-
նեան (1891—92 թ.), ինչպէս և բէլ-
գիացիների ճանապարհորդութիւնն դէ-
պի հարաւային բևեռը (1897—99): Նա
ծնւել է 1865 թ. յունիսի 10-ին: Երի-
տասարդ ճասակից մեծ հակումն էր
զգում գէպի հետախուզութիւն ու ճա-
նապարհորդութիւնը: Նա առաջինն էր,
որ բարձրացաւ Ալեասկայի Մակարին-
ւէյ գագաթիր: Իր ճանապարհորդութիւ-
նը գէպի ճիւսիսային բևեռը իր, Լիբ-
րիկից, նոր տոմ սեպտ. 14-ին ուղարկած
ճանապարհում այսպէս է նկարագրում:

«Hans Egede» նաւով երկար ճա-
նապարհորդելուց և քաղցի ու ցըստի
հետ երկար մարտնչելուց յետոյ, մեղ
յաջողւեց համենել հիւսիսային բենեփին:
Մենք անցանք մի հոր և զիտական տե-
սենք սահական հետաքրքրական մի
սակէտից բառական հետաքրքրական մի
ճանապարհ: Գտանք վայրի զագաննե-
րով բնակւած երկրներ, որպէս զգալի
շափով կարող է բնյաբակւած ճամար-
ւել թէ տեղացի և թէ երրազացի որ-
սորդների գործունէութեան շըջանը:
Մեր «Bradley» նաւը օգոստոսի վերջե-
րին հասաւ Ամբախ ճաւանանդիսար, որ
գտնուում է Գրենլանդիայի ափերին:
Այժմեղ ձեռք բերնք ճանապար-
հորդութեան համար յարմար պայման-
ներ: Անատօկում ժողովւեց չպիմոննե-
րի մի մեծ քաղմութիւն բացմաթիւ շը-
յերով և մասի ու ճարպի ահագին պա-
շտով: Այդուեղ ձեռք բերնք պաշտար
և առաջնորդները: Այդ կէտը հեռու է
բերնք 700 անգիլիական մղնում: Մեր
ծրագիրն էր՝ անցնել Գրենլանդիայի ա-
րեմտեան ափով, Գրինլել երկրի միջով
և ուղարկել դէպի բենուը ճանապարհ ըն-
կանք. 1908 թ. փետրարի 19 էր: Ճա-
նապարհորդների վիճաւոր կամը առաջ
գնաց, իսկ մացեցները կանդ առան-
դրենլանդիայում միւսներին սպասելու:
Մենք 11 հորի էինք 103 շներով և 13
սահնակներով: Թովինք Գրենլանդիան և

արնելեան ուղղութեամբ դիմեցինք դէ-
պի սառոյցները: Շուտով զգացինք սաս-
տիկ ցուրտ: բարեխաւնութիւննը իջաւ
մինչև ֆարենհէյտի 83 սատիհանն: Շնե-
րից շատերը ճանապարհին ստուցան:
Որսացինք 101 մուկուսական ցուլեր, 7
արջ և 335 նապաստակ:

Մարտի 18-ին մուանք ըմեռային
ծովը և հառանք Հէլբերդ կղու հարա-
ւային ծայրը: Այդուեղ մեղնից բա-
ժանւեցին էսքիմոսները և մեր ճանա-
պարհորդներից 4 հոգի ու ես դարձան:
Բնենից հետո էինք 460 մղն: Մարտի
30-ին գտնուում էինք 84,47⁰ լայն. և
86,36⁰ երկայնութեան տակ: Այսուեղ
վերջին անգամ տեսանք կեանքի և հողի
հետքերը: Այնուեղ սկսեց մի սառ-
ցային անապատ՝ զորի կեանքի նշոյլ-
ներից: Ասպիլի 8-ին ճասանք 86,60⁰
լայնութեան և 94,2⁰ երկայնութեան:

Թէև 9 օրում անցանք 100 ծովա-
յին մղնից աւելի, բայց զժաղկաբար
կորցրինք մեր դիտողութեան դործիք-
ներից շատերը: Մեղ մինչև ըմեռը մը-
նում էր անցնել միայն 200 ծովային
մղոն:

Արգիլի 21-ին ճշտութեամբ չափե-
լով արկի բարձրութիւնը՝ եղրակացը ինք,
որ գտնուում ենք 89⁰ 59'^{46"} հիւռ,
լայնութեան տակ, ուրեմն բենուից հե-
ռու էինք 14⁰: Նորից ստուգեցինք այդ

հաշիւը և անցնելով մեզ բենոից բաժանող տարածութիւնը, սառույցների մէջ տնկեցինք ամերիկական դրօշակը: Եւետային քամին սառցապատ անսապատի մէջ ծածանում էր մեր դրօշը. այդ եղան 1908 թ. ապրիլի 21-ին: Այդ կտում ժամանակի մասին գաղափար կապելին անօգուտ աշխատանք է, որովհետեւ այդտեղ միանում են ըոլոր միջօրէականները: Բարեխառնութիւնը 38^o ցած էր 0-ից: Ծանրաչափը ցոյց էր տալիս 29,83, արևելքն, արևմուտքն ու հիւսիսը չքացան: ամեն տեղ, ուր մարդու աշք կտրում էր, հարաւան էր երեսում:

Թէս մեղ խիստ ուրախութիւն պատճեց այս հանգամանքը, որ հասնք մեր նպատակին, բայց միւս օրն արդէն կորցրինք մեր առողջութիւնն ու արխութիւնը: Մենակութիւնն ու ամառին ու սառոց էր, հող չէր նշմարւում: Ապրիլ 23-ին մենք դուլս ելանք անցնելու գերագարձի ծանր ուղին:

Մեզ հալածում էր ձեան փոթորիկը, և շատ գանգաղ էինք առաջ գնում: Սարսափահար նկատում էինք, թէ ինչպէս մեր պաշարը պակասում էր: Պէտք էր շատապել, բայց այնպէս թոյլ էինք, էր շատապել, բայց այնպէս թոյլ էինք անցորդ հազիւ օրսական 10 մզոն էինք անցնում: Յաճախ մեզ հանդիպում էին լո-

դայող սառույցներ: Իսկ երբ հասանք 83^o լայնութեան, բարեխառնութիւնը բարձրացաւ մինչև 0^o: Այսուհետեւ սկսւեցին շարունակական մշուշները:

Թսան օր քայլում էինք խիտ մառխուղի մէջ, Ստիպւած էինք կերակրի սովորական բաժինը պակասուցնել կիսով չափ: Վերջապէս տեսանք առաջին արջերը, որոնց ողջունեցինք իրեւ մեր ապատարարների: Հետևեալ ձանապարհը գէպի Գրենլանդիայի ափերը շատ դժւարին էլ մեր փոքրիկ խմբակի համար: Ծանը զրկանքների մէջ ստիպւած եղանք ձևան անցնել սառուցեալ երկըրներում (արկտիկայի страны) և միայն 1909 թ. փետրարի 18-ին դիմեցինք դէպի Գրենլանդիայի ափերը, որտեղ հասանք միայն 1909 թ. ապրիլի 15-ին:



Ա.ԱՏԴ.Ա.ԳԻՏՈՒԹ-ԻՒՆ

Տարայ յարատելով ինը

Տարի կոչւում է այն ժամանակա-
միջոցը, որի ընթացքում Երկրագունդը
պատռում է Արևի շուրջը։ Աստղային
տարին ունի 365 օր 6 ժամ 9 րոպէ 11
վայրկեան (միջին ժամանակը), իսկ Ա-
վայրկեան (միջին տարին) ունի 365 օր 5
ընադարձային տարին ունի 365 օր 5
ժամ 48 րոպէ 46 վայր։ Վաճառականա-
կան տարին հաշւում է 360 օր (այն է՝
12 ամիս 30 օրից)։ Տարին լինում է
հասարակ և նահանջ. այս տարին, 1910
թւականը հասարակ տարի է, որը սկզբ-
ում է ուրբաթ օրը՝ Յունիարի 1-ից և
վերջանում է ուրբաթ, Դեկտեմբերի
վերջանում է ուրբաթ, Դեկտեմբերի
31-ին։ Այս տարին ունի 365 օր կամ 52
շաբաթ և 1 օր։ Հետեւեալ նահանջ տա-
րին է 1912, 1916, 1920,
1924 և այլն։

Տ Ի Ե Զ Ե Բ Ք

Տարբական հասկացողութիւններ աստ-
ղագիտութիւնից

Արեգակը տալիս է Երկրագունդին
այն կենարար լուսը, որով պահուում է

Երկրագունդի գոյութիւնը։ Երկրագունդը
ամբողջ Տիեզերքի մէջ ոչ այլ ինչ է,
ոթէ ոչ մի փոքրիկ կէտ, մի փոշի։
Այն չերմութիւնը, որ ստանում է
Երկրի 1 քառակիուսի մետր մակերեսոյթը
մի վայրկեանում, հաւասար է $21/\frac{1}{4}$ միունյաժմ
մտակարարող գոլորշու 1 վայրկեանում
արտագրած չերմութեանը։ Այդ չերմու-
թիւնը 5,000 անգամ աւելի է շիկացած
հաւառ թուջի (ԿՄԿ) չերմութիւնից։
Սրկի և Երկրի միջև եղած տարա-
ծութիւնը 149,471,000 կիլոմետր է։
Սրկի լոյսը հասնում է Երկրին 8
րոպէտում։

Սրկի տրամագիծը 1,394,409 կիլո-
մետր է, իսկ ծաւալը 1,419,175,000 մի-
լիոն խոր. կիլոմետր, այսինքն Երկրի ծա-
ւալից մեծ է 1,305,000 անգամ։

Սրկը իր առանցքի շուրջը պտրո-
ւում է 25 օրում։ Նրա չերմութիւնը
մանրացննին հաշւով 5,000-ից մինչև
20,800⁰ աստիճան է Ցէլսիուսի չերմա-
չափով։

Հեռադիտակի մէջ Սրկի մակերեսոյ-
թը նման է լուսաւոր ձիւնի, որ լողում
է պակաս լուսաւոր արեգակնային մթնո-
ւորում (Փօթօքֆերա)։ Երեսը պատաժ
է զաղի մի շերտով, որ պարզ նկատելի
է Սրկի խաւարման ժամանակ։ Այդ շեր-
տի բարձրութիւնը 8,000-ից մինչև 16,000
կիլոմետր է։

Մոլորակները չունին ոչ լոյս և ոչ
դեր են, ինչպէս երկիրը, և իրենց լոյսը
ժռւն են, մինչդեռ աստղերը անշարժ

Մոլորակների համամա

Արևի շուրջը պատռում են	
Հերմէս (Մերկուր)	87 օր. 9.
Աստղիկ (Վենուս)	224 օր. 7.
(Արտօսեակ կամ Թիշերա. Երկիր	365 օր. 2.
Երէս կամ Հրատ (Մարս).	1ա. 321 Ճ 7.
Արամազդ (Բազիսեր).	11 Ճ 314 Ճ 8.
Երեակ (Սատիրն).	29 Ճ 166 Ճ 9.
Ուրանոս.	84 Ճ 7 Ճ 4.
Պոսիդոն (Նեպտուն).	164 Ճ 280 Ճ 1.

էլ ջերմութիւն. նրանք նոյնպիսի գուն-
ստանում են Արեկից: Մոլորակները շար-
են և հաստատուն:

տական աղիւսակ

Արևաւորութ. Արեգակից (Արդիոնից) Կիլոմետր	Հեռաւորութ. Երկրից միեւ. Կիլոմետր	Մատուցութ. Երանեակից Կիլոմետր	Մատուցութ. Երանեակից Կիլոմետր	Ասանցք շահումը Ալ
Մինչ.	Մաք.	Մինչ.	Մաք.	Մինչ.
57,9	91	207	18 ա.փ.*	88օր.
108,1	42	256	0,92	225օր.
			1	
149,5	—	—		23ժ.56
227,7	56	377	0,152	24ժ.37
777,2	593,7	960	1309ա. մ*	9ժ.55
1425,8	1197	1654	720 Ճ Ճ	10ժ.14
2900	2214,5	3185	65 Ճ Ճ	—
4506,4	4374	4738	85 Ճ Ճ	—

* Ա. Փ. նշանակում է այդքան ան-
շամ փոքր:

* Ա. Մ. նշանակում է այդքան ան-
շամ մեծ:

Աստղերը հետաւոր արեգակներ են.
մինչև այժմ քարտէզների վրայ դասաւ-
որել են 30,000 աստղ, բայց նրանց
թիւը հաշում են մինչև 100 միլիօն.
Քրանք տեսանելի լուսատու մարմիններն
են, իսկ անտեսանելի աստղերի թիւը
հասնում է միլիարդների:

Ենորհիւ աստղագիտական գործիք-
ների կատարելագործման՝ շարունակ
գանում են նոր աստղեր:

Երկիրը, Տիեզերքի միւս մարմին-
ների հետ համեմատած, կարողանում
ենք ներկայացնել աւելի ճիշտ և որոշ
թերութ:

Նրա ծառալը 1083 միլիարդ խո-
րանարդ կիլոմետր է:

Տրամագիծը հասարակածի մօտ —
12,756,600 մետր:

Տրամագիծը ըեւեռների մօտ —
12,717,120 մետր:

Մակարդակը — 510,082,000 ք. կիլո:
Ժանցութիւնը — 6 միլիօն միլիարդ
տոնն. 80 անգամ աւելի ծանր է լուսնից:
Երկիրը պատռում է իր առանցքի
շուրջը 24 ժամում, իսկ Արեւի շուրջը
պատռում է 365 օր $\frac{1}{4}$:

ԴԻՑԱԿԱՆ ԵՐԱԶՄԱՀԱՅ

Քնած ժամանակի մարդու ուղեղը
գործում և խառնում է մոռքերն ու
տպաւորութիւնները, որոնք մեծ մա-
սամբ հանգիսանում են իրականութեան
մտախարութիւններ: Երազը արտացո-
րում է թարմ եղելութիւնները և արթ-
նացնում լիշողութիւններ: Առող և հի-
ւանը ուղեղի երազները տարբերում են
միմեանցից, Կամքի անմիջական հսկո-
ղութիւնից աղատ երազները յաճախ տա-
լիս են բժիշկներին որոշ ցուցմունքներ
սպասելի հիւանդառութիւնների մասին:
Ֆրանսացի բժիշկների կատարած դի-
տողութիւնները գալիս են միանգամայն
հաստատելու, որ երազները հիւանդու-
թիւնների կարապեան են, որ երազնե-
րի միջոցով բժիշկը կարող է որոշել
հիւանդառութեան տեսակը և այդ ցուց-
մունքներով (դիագնոստիկ) կատարել իր
բժշկութիւնը:

Երազների վաղեմի բացատրութիւնները

Արգեօք երազները ապագայում պա-
տահող եղելութիւնների նախայայտա-
շարողը չէ:

Արգեօք երազների միջոցով չի

կարելի գուշակել, թէ ինչ պիտի պատահի: Անա ճարցեր, որոնց պիտի պատասխանի գիտական երազահանը:

Այս երազների միջոցով կարելի է գուշակել, բայց ոչ այն, ինչ որ գուշակում է եփիմերափին: Երազների միջոցով կարելի է նախօրօք իմանալ, թէ մարդու մարմնի (օրգանիզմի) մէջ ինչպիսի փոփոխութիւններ են կատարում, ինչպիսի հիւանդութիւններ են սկսում զարգանալ և դրանով շատ անդամ բըժիշկները կարողանում են որոշել հիւանդութեան տեսակը: Հնադարեան բժիշկներից չկապակրատը, Դալեկնը, շինացի և հնդկացի բժիշկները թէն զիտէին երազների կարելորութիւնը, սակայն լարում էին իրենց երեսակայութիւնը և երազներին տալիս այնպիսի բացարութիւններ, որ քսաներորդ դարու բժիշկները եթէ լսէին, ծիծաղից կը թուլանային:

Ժամանակները տարբեր են—տարբեր են և հասկացողութիւնները: Այժմ մենք ընկել ենք հակառակ ծայրայեղութեան մէջ՝ երազների նշանակութիւնը չենք ընդունում:

Երազները կեանքի արտացոլումներն են

Քնած ժամանակ անհատի ֆիզիքական և բարոյական յատկութիւնները տ-

ւել սերտ յարաբերութեան մէջ են, քան թէ արթուն ժամանակ, երբ կամքըն ու անդադար լարւած ուշադրութիւնը անհատը բաժանում են երկուսի: Քնած ժամանակ մարդու խեղճը արթուն է. այդ միջոցին նրա մտաւոր զգացումները (ըմբռնողութիւնը) ոչ այլ ինչ են, եթէ ոչ իր կեանքի, իր բնաւորութեան և շատ յաճախ իր ֆիզիքական գրութեան ջլային և հիւանդախօսական երայիթների ակամայ արտացոլումները:

Թին ընթացքում մարդու օրգանիզմը ընդունում է հանգիստ զրութիւն. այդպիսի զրութեան մէջ առաջ եկող զգացումները առաջ են բերում յուզմունք: Զգացութեան օրգանները (տեսողութիւնը, լսողութիւնը և այլն) քնած են և անկարող բացարել այդ զգացումները օբեկտիւ (առարկայօրէն), այսինքն արտաքին առարկաները հասկացողութեամբ թինած մարդը պահանջում է իր ննթախեղճը կամ իր «կիսա-խեղճը» սուզեկտիւ, այսինքն ներքին բացատրութիւն և ենթախեղճը պատասխանում է անհաւատալի արագութեամբ և, պիտի ասել, անհաւատալի ֆանտազիայով (մտախաբութեամբ):

Քնածը յանկարծ տեսնում է երազում, որ ապրում է սարսափների, տեսօրի կարմիր օրերում, նա կալանաւոր-

ւում է, բանատը կլում, տարւում յեղա-
փսական դատարան, ենթարկլում
հարցաքննութեան, հարցմունքներին պա-
տասխանում, յանցառութիւնը պա-
ցուցւում է և դատապարտում է մահ-
ւան. նրան նստեցնում են կառք և տա-
նում հրապարակաւ գլխատելու. վեր-
ջապէս զրւում է գիլօտինի տակ և գրւ-
խատում: Քնածը վեր է թռչում, արթ-
նանում է՝ լինչ է պատահել. նա նկա-
տում է միայն, որ իր մահճակալի վա-
րագոյրը քնկել է. աշխատում է բացա-
տրել այդ ուժգումը ցնցումը և երկու վայր-
կեան ապարած երեակայական դրաման:

Սական, ինչպէս ասել են Վաշիգը
և Մեծին *) իրենց աշխատութեան
մէջ, երազում մոքերի արագընթացու-
թիւնը զեռ ևս հաստատած չէ: Փար-
ձերը ցոյց են տալիս, որ թէ արթուն և
թէ քնած ժամանակ մեր մտածողութիւ-
նը ընթանում է զրեթէ համահաւասար
արագութեամբ:

Երազի հոգեբանութիւնը

Վերջերս Ֆրանսիայում հրատարակ-
ած «Երազի հոգեբանութիւնը» վեր-

*) N. Vaschide et Raymond Meur-
nier.

նազրով աշխատութեան մէջ գիտնական
հեղինակները՝ Վաշիգը և Պիերօն բե-
րում են մի շարք նոյնատեսակ, բայց
աւելի հիւանդութիւններ և ցոյց
տալիս, թէ ինչպէս օգտւել կարելի է
այնպիսի խաւար ու մութ զգացումնե-
րից, որոնց չէր կարող զգալ, ըմբռնել
խիղճը, սակայն ենթակիրդը ըմբռնում
և արտայայտում է այդպիսի ուժով:

Երբեմն կոկորդի կամ սրտի հիւան-
դութիւնները երազի մէջ արտայայտ-
ում են հետեւալ երեսյթով. քնած երե-
խային թուում է, թէ մէկը, օրինակ
սայլազանը, նրա կոկորդի վրայ գնում
է մի խորոց արկդ: Երբեմն սովերի բոր-
բորումն երազում արտայայտում է հե-
տեւալ ձեռով. իբրև թէ բժիշկը քնածի
զուլիս մամուլի տակ սեղմում է: Խո-
զութեան գործարանի հիւանդութիւնը
այսպէս, իբրև թէ քնածի բերանն է
մտնում մի օձ և բոյն է դնում նրա ա-
կանջի մէջ և այն, և այն:

Որոշել թէ ինչ նըազին ինչ հի-
ւանդութիւն է համապատասխանում,
շատ գմւար է, թէկ այդ ուղղութեամբ
աշխատել են և փորձեր կատարել:

Մի քանի նշանաւոր բժիշկներ, ինչ-
պէս Գրահամ Լիսլը, Տիսիէն և այլն,
փորձով հաստատել են, որ կայ որոշ
կապ մի շարք հիւանդութիւնների և ո-
րոշ տեսակի երազների միջև Արդէն տ-

պացուցաւած է, որ ալկօհօլիկները (ար-
բեցողները) երազում տեսնում են ճի-
ւաղներ, շրջապատւած են զանազան կեն-
դանիներով:

Երազների հոգեբանութեան տեսա-
կէտից հետաքրքրական է նաև մեր ե-
րազների մտաւոր պատկերների այն
բնորոշ յատկութիւնը, որ կոչում է
հոգիացումն: Երկար փորձերից յետոյ,
վերոյիշեալ հեղինակները եկել են այն
եղբակացութեան, որ երազի մէջ մեր
էութիւնը վերաբանում է հոգեկան
դրութեան, և մեղ թւում է, թէ դարձել
ենք հոգեղէն էակներ:

Երազները եւ մեր հիւանդութիւնները

Ներգային հիւանդների երազները,
անկախ անհատի դրսի զբաղմունքներից,
կարող են անհրաժեշտ և կարեոր ծա-
ռայութիւն մտաւուցանել բժիշներին:

Վերջներս իրենց հետազօտութիւն-
ների ժամանակ կարեոր տեղ պիտի
տան երազներին: Մարիանիի ասելով,
երազները ցոյց են տալիս անհատի
նոյն խակ անթափանցելի հոգեկան դրու-
թիւնը: Հաստատած է, որ շատ ոճա-
գործներ իրենց յանցագործութիւ-
նից առաջ տեսել են խորհրդաւոր երազ-
ներ: Այսպէս ժաք կէմանը երազում

տեսել է մի հրեշտակ, որ նրան Աս-
տուծոյ անունից պատկրում էր սպա-
նել Թրանսիայի թագաւորին և Ստառ-
կում երևացել է ինքն Աստած լուսնի
արտաքինով ու հրամայել, «ը սպանէ
նապօքէն Լին:

Այդ տեսակի հաւասարակշռութիւնը
կորցրած, մտաւորապէս թոյլ և այլա-
սերւածների, հիստերիկների և այլ
տկար ու թոյլ օրգանիզմների համար ե-
րազը աւելի շուտ ներշնչող ազդեցու-
թիւն ունի: Երազը այդ գէպքում կան-
խում է գործին և ուղղութիւն տալիս
նրան: Խելապարների երազը ոչ մի զա-
ռանցանքի տեղիք չի տալիս, ընդհակա-
ռակը՝ նրանք մերժում են երազի գո-
յութիւնը: Եթէ երազը յաճախ կրկնում
է, և ամբողջ ամիսներ հիւանդութեան
նշաններ չեն երեւում, այդ նշան է նրա
գաղանի հիւանդ գրութեան: Եթէ խելա-
զարութիւնը նոր է սկսւել, հիւանդի
երազները լինում են փոփոխակի, արա-
գընթաց և նօրմալ:

Երազը մի չարագուշակ հայելի է,
ուր վասարեր պատկերներ են երկում
միայն նրանց համար, որոնք երազ են
տեսնում: Մարդիկ պիտի հրաժարվեն
երազների հրաշալի բացարութիւննե-
րեց և միայն բժիշները կարող են
օգտուել երազներից իրենց հիւանդաբա-
նական հետազօտութիւնների ժամանակի:

Այսաեղ մենք տալիս ենք մի շաբք
երազների և նրանց համապատասխանող
հիւանդութիւնների ցանկը:

Երազները եւ նրանց նշանակութիւնը

Գիշերային յանկարծակի սարսափ-
ներ — շնչափողի հիւանդութիւն կամ
սրտի ցաւ:

Ժաման հիւալիներ (Վյջօվանց) — թո-
քերի հիւանդութիւն (շնչարգել և այլն):
Կարճ երազներ, յանկարծակի արթ-
նացում — արեան շըշանառութեան զոր-
ծարանի հիւանդութիւն:

Կենդանիներ երազել — յաճախ պա-
տահում է ալկօնօլիկներին (արբեցող-
ներին):

Գիշերային զառանցանքներ (երե-
խաների) — թոքախտի սկզբնաւորու-
թիւն (բորբոքումն թոք. թաղ.):

Գիշերային զառանցանքներ (երե-
խաների) — ուղեղի բորբոքման կամ
կարմրուկի սկիզբը:

Գիշերային զառանցանքներ (չափա-
համաների) — կապարային թունաւորումն
(ծխախտ, ալկօնօլ և այլն):

Երազում թունաւորել — աղիքնե-
րի կամ ստամոքսի հիւանդութիւն:
Բարձր ձայնով երազել — ներդրային

Թուլութիւն, ջղալին դրութիւն, տըլա-
մութիւն:

Խիստ տխուր երազ — հիստերիկա,
նեարդայնութիւն, ընդ. թուլութիւն:

Առանձնայատուկ երազներ (ձեռքե-
րը ծանրացած, սրունկները կարծրացած
և այլն) — անդամալուծութեան հակում-
ներ, ջղալին ծանը հիւանդութիւններ,
խելազարութիւն, զառանցանք և այլն:

Յաճախակի նոյնանման երազներ
— հիստերիկա, այլաւերումն, շատ ծանը
ջղայնութիւն:

Աղմկալից, յուգւած և այլն երազ-
ներ — ոճրազործութեան հակումն, մար-
դասպանութիւն, հրաձգութիւն և այլն:

Մարմի մասերի երազել — առաջիկայ
հիւանդութեան նշան, աչքի բորբոքումն,
խոլութիւն, փողացաւ և այլն:

Մարսափելի և տխուր երազներ —
թոքախտի նշան, ընդհ. անդամալուծու-
թիւն, ուղեղի հիւանդութիւն:

Արիւնալի երազներ — արիւնանո-
ուութիւն, ծանը վիրաւորել և այլն:

Զարհուրելի յոդնեցուցիչ երազներ
— հիստերիկա հիւանդութիւն, ծանը
ընկնաւորութիւն:

Ուրախ երազներ — թեթև հիստերի-
կա (արգանատախտ):



Ա.Ռ.ՌԱԶՄԱՐԱՆ

ՄԵՆՔ ՇԱՏ ԵՆՔ ՈՒՏՈՒՄ

«Բերանը ստամոքսի բժիշկն է» ասում է գերմանական առածը: Նա մի այնպիսի բժիշկ է, որ յաճախ անզգուշոթիւններ է գործում, որովհետեւ բերանը շատ անդամ ազահ է:

«Մենք շատ ենք ուսում, — ասում էր նշանաւոր բժիշկ Տիսոնը զեր ևս XVIII դարում. — աւելի ենք ուսում, քան հարցաւոր է, և այդ անզգուշոթեամբ տոիթ ենք տալիս զանազան տեսակ հիւնդութիւնների զարգացմանը»:

Ճատ երկրների գիտնականներ, բժժիշկներ և քիմիկոսներ տարիներ շարունակ աշխատել և ուսումնաբերել են այնպիսի մի մեթոդ, որ հաւասրապես յարմար լինի մարդու բուրբ հասակներին և պահպանէ մարդու առողջութիւնը:

Ներքեւ բերում ենք այդ գիտնականների կազմած ցանկը, կերպութների միօրւայ նօրմալ չափը: Այդամելքից տեսնում ենք, որ առողջ կեանք ունենալու համար միմիայն մաս չպիտի կերակըրւել, անհրաժեշտ է խոշոր քանակութեամբ բանջարելքն ևս խառնել մեր ամե-

նօրեայ սննդի հետ: Նոյն են հաստատում նաև բժիշկները և գիտնական հիգիենիստները: Ինչպէս տեսնում էք, սննդնդների մէջ առաջին տեղը բռնում է հացն ու ջուրը:

Ֆիզիքական աշխատանքով չպարապող մարդիկ պիտի ուտեն օրական 3 անգամ:

Առաջին անգամ 7—8 ժամին առաւտուեան, և անկողնից վեր կենալուց պիտի անցնի մի կամ աւելի ժամ մաքուր օդում աշխատելուց յետոյ, որ և կըրանայ ախորդակը:

Երկրորդ անգամ—ցերեկւայ 12—1 ժամին:

Երրորդ անգամ լաւ է ուտել երեկ. 7—8 ժամին: Թէ առաջինը և թէ երրորդը պիտի լինին թեթև:

Իսկ Փիզիքական աշխատանքով պարապողները և մանուկները, պրոնք զըստնը ուում են անելութեան հասակում, բացի այդ նշանակւած 3 անգամից, կարող են նախաճաշել և միջանկեալ 2 անգամ. Նըանց երկրորդ նախաճաշը կը լինի ժամի 10-ին, իսկ նախընթրիքը, այսինքն չորրորդ նախաճաշը ժամի 4-ին, հետեւով որ իւրաքանչիւր նախաճաշից մինչև միւսը անցնի ոչ պակաս 3 ժամից:

ՍՆՆԴԻ ՆՈՐՄԱՆ. ԲԱԺԻ

Զավահաս.	Հազ	Կոբ	Մին	Զաւ ¹⁾	Կահանին
Միջահասակ.					(Բայ)
Պարագ մարդը .	430	150	250	30	200
Բան աշխատելիս	520	300	200	—	200
Նստակեաց պաշտօն.	370	250	150	—	200
Մեծ քաղաք. բանւ.	370	250	125	—	200
Դիւղական բանտորը	855	—	154	—	212
Լեռնցիները	300	450	100	—	200

1) Վերոյիշեալ բաժինների մէջ
ձուն նաշանակւած է մսի հետ միասին.
60 դրամ ծանրութիւն ունեցող ձուն
ունի 50 դրամ մսի սննդական ուժ:

ՆԼ 24 ԺԱՄԻԱՅ ՀԱՄԱՐ

Կանաչեղ.	Կալորիֆ.	Բալնաձև	Կարմագ.	Մարգար.	Գրինդ.	Օտոր	Ջիլի	Վարդակ	Կարմագ.	Կարմագ.	Վարդակ	Վարդակ
40	100	28 12	60	—	40	650	900	1340				
30	500	40 40	200	1րժ.	80	1000	—	2110				
15	260	25 —	100	1րժ.	37	500	—	1307				
15	300	30 —	100	1րժ.	40	330	—	1430				
—	526	61 —	—	—	10	1250	—	1818				
—	1200	30 —	—	—	—	—	—	2280				

1) Մարդու համար օրական հարկաւոր է 2300 դրամ ջուր, որի մի մասը հաշւած է միւս նիւթերի հետ:

Զափերը հաշւած են դրամով, որ հաւասար է ոռուսական 22,516 դոլի, կամ 4,266 դրամը հաւասար է 1 զօլոտիկի:

Մաքսողութեան ցանկ

Բոլոր տեսակի մնունգները միա-
տեսակ և միաժամանակ չեն մաքսուում,
կան զիւրամարս և դժւարամարս կերպ-
կուրներ. ներքենի ցանկը ցոյց է տալիս
մննդի մաքսողութեան միջին ժամա-
նակը:

Միա	Ժամ			
Եփած կամա-		Ճարպ,	ա-	
ղած, տաւարի	4	պուխտ	.	4
Տապակ. տա-		Ուղեղ	.	1 ³ / ₄
ւարի միս	3 ¹ / ₂	Լեղու	.	3 ¹ / ₂
Սիրտը	4	Զուկ		
Եթիկամունք	3	Բրաձուկ	.	3 ¹ / ₂
Գառան միս	2 ¹ / ₂	Խեցգետին		4
Լերդը	3 ¹ / ₄	Տառելի	.	4
Եփած ոչխա-		Ոստրէ	.	3
բի միս.	3	Օրագուլ	.	4
Տապակ. ոչ-		Տափակածուկ	1	
խարի միս.	3 ¹ / ₄	Գեղարքունի		3
Եփ. խոզի մ.	4	Թարմ ձուկ	1	
Տապակած		Լօքօ	.	4
խոզի միս.	4 ¹ / ₂	Թոշուններ		
Աղիքները	1			
Հորթի միս.	4	Բաղ	.	4

Մագ	4	Կամեմ	1 ¹ / ₂
Հնդկահաւ	4 ¹ / ₄	Պտուղներ	
Աղաւնի	3 ¹ / ₃	Խնձոր	2 ¹ / ₂
Ֆաղան	3	Բանան	1 ³ / ₄
Տապակ. հաւ	3 ¹ / ₂	Կեռուս	2
Եփած	3	Թուզ	3
Բանջարեղիչն		Հաղարջենի	2 ¹ / ₂
Ծնեփակ	1 ¹ / ₂	Սելի	3
Կանաչ լոբի	2	Հնկոյզ	3
Լոբի կրմ. սպ.	2 ¹ / ₂	Եարինչ	2 ³ / ₄
Կաղամբ	4 ¹ / ₂	Խաղող	3 ³ / ₄
Գաղար	4 ¹ / ₄	Սալոր	2
Ծաղկէ կղմբ.	2	Մորենի	3
Կարոս	3 ¹ / ₄	Ելակ	2 ³ / ₄
Վարունգ	4 ³ / ₄	Այլ եւ այլ	
Սալատ	3	Պանիր	3
Սոխ	2	Հաւկիթ թոյլ	
Սանկ	1 ¹ / ₄	Եփած	2
Վայր. գաղար	3 ¹ / ₄	» պինդ	3
Դետնախ. եփ.	3 ¹ / ₂	Մակարօն	3
» տապակ.	2 ¹ / ₂	Կաթ	1 ¹ / ₂
Բողկ	4	Եռացրած	2
Բըինձ	1 ¹ / ₂	Հաց	3
Սպանախ	1 ¹ / ₂	Քաղցրաւե-	
Պամիզոր	2	նի պտուղ	2

Առողջապահական

Մածոն. — Պրօֆէսօր Մէջնիկովի
կատարած հետազօտութիւնները ցոյց
են տալիս, թէ մածոնը ինչպիսի բարե-
րար ներդրծութիւնը ունի մարդու
մարմին, մանաւանդ աղիքների վրայ:
Յարգելի պրօֆէս. իր գիտողութիւննե-
րը կատարել է զվարապաշտ Բօլգա-
րիս, ուր մածոնը մեծ գործածութիւն
ունի: Ծերութեան զվարապ պատճանն
այն է, որ աղիքները սկսում են փտել և
դանդաղ կերպով թունաւորում են ամ-
բողջ մարմինը, մինչդեռ մածոնը ազատ
է պահում աղիքները թունաւորութից,
հետեւապէ նաև վաղաճաս ծերութիւնից:
Ֆրանսացի նշանաւոր բժիշկ Կոնհնդի,
բժ. Բէլօնօվսկի նոյն կարծիք են
յայտնում մածոնի մասին և իսորհութ
են տալիս նրա գործածութիւնը մանա-
ւանդ աղիքների հիւանդութեան դէպ-
քում: Հայմերիս ալդէն յայտնի է մածո-
ռնի թէ սննդարարութեան և թէ առող-
ջապահիկ նշանակութիւնը:

Կէֆիր. — Անա ձեզ մէկ ուրիշ լաւ մի-
ջոց ոչ միայն աղիքների, այլ և ստամոք-
սի խանգարման և հիւանդութեան դէմ:
Կէֆիրը արժանի կերպով զնանաւուած
է եւրոպական բժիշկների կողմէց. Նրա
գործածութիւնը խորհուրդ են տալիս
մանաւանդ ֆրանսացի բժիշկները:

Կէֆիրը բաղկացած է մի մասը բու-
սական, միւս մասը կենդանական նիւ-
թերից. Նա մի տեսակ սունկ է, որ
խառներով կովի կաթի հետ զիւրացնում
է կաթի մարսաղութիւնը նոյն խկ ա-
մենաթոյլ ստամոքսների համար:

Կէֆիրի բժշկական ազգեցութիւնը
հաստաւած է ոչ միայն ստամոքսի և
աղիքների հիւանդութեան համար, այլև
կրծքի տկարութեան, սակաւարիւնու-
թեան համար:

Ահա թէ բժ. Պօղվիսօտակի, Ֆէօդո-
րովը, Իւկը և այլք ինչպիսի կարծիք են
յայտնում կէֆիրի մատին: Ճնա բարե-
լառում է սնունդը, աւելացնում է մարմ-
նի քաշը (գիրացնում է) և զրգում
է ամբողջ մարմնի կենսական էներգիան.
Նա չի ծանրացնում ստամոքսը, այլ
ընդհակառակը բանում է ախորժակը. մի
խօսքով՝ առողջութիւնը կերպանդնելու
համար նա միակ սնունդն է:

Մեղ արդէն յայտնի է կէֆիրի գոր-
ծածութիւնը սակայն չի ընդհանրացել.
չզիտենք ինչից զրդուած, շատ հայ
բժիշկներ արգելում են կէֆիրի գոր-
ծածութիւնը աղիքների և ստամոքսի
խանգարման դէպում, մինչդեռ եւրո-
պացի բժիշկները մեծ կարուրութիւն
են տալիս կէֆիրին և խորհուրդ են տա-
լիս յանախ գործածել, մանաւանդ որ նա
միւնյն ժամանակ զիւրացնող միջոց է:

Առողջ մարդու ննջարանը

Այս սենեկակը, ուր անց ենք կացնում մեր կիանքի մի երբորդ մասը, ուր զիշերայ քունը ոչնչացնում է օրւայ յոդնածութիւնը, պիտի լինի աւելի լուսաւոր և աւելի ընդարձակ, քան թէ միւս սենեկինը:

Ութ ժամեւայ քնի ընթացքում մեր թրքերը արտաշնչում են 160 լիտր ածխաթթու, այդ քանակութիւնը կարող է արատառել 3,300 լիտր օդը, որ մենք շնչում ենք քնի ժամերին:

Քնիցէք պատուանը բաց.—Եթէ վերցնենք 8 արշին երկարութիւն, $7\frac{1}{2}$ արշին լայնութիւն և 4 արշին բարձրութիւն ունեցող մի սենեկակ, ապա նա կը պարունակի 90 խոր. արշին ծաւալաչափ օդ, այսինքն մօտ 90,000 լիտր (կրուժկա) օդ:

Այդպիսի սենեկակը բաւականաչափ ընդարձակ սենեկ է, բայց այդտեղ էլ օդը շատ արագ է ապահանուում: Ածխաթթուն, որ մենք շնչում ենք ցերեկը, օդի մէջ շատ քիչ քանակութեամբ է գտնըւում, իսկ մեր արտաշնչածի մէջ համեմատաբար խոշոր քանակութեամբ է պարունակուում:

Ուստի հարկաւոր է, որ քնած ժամանակ չնշած օդը նոյնպէս մաքուր լինի, ինչպէս որ ցերեկը:

Սակայն մաքուր օդը ի՞նչպէս կտրող է ներս թափանցել, երբ քնելիս պատուհանները ամուր փակում, վարագոյրներով, բամբակով ծածկում ենք, վախնալով «օդի հոսանքից»:

Բայց հարկաւոր է դրա հակառակը անել, այն է՝ քնի ննջարանի պատուհանները բաց:

Եթէ կամենում էք խուսափել ամեն տեսակ հիւանդութիւններից, որոնք առաջանում են օդի անմաքրութիւնից, ապա սովորեցէք քնել պատուհանները բաց, նախ կարելի է բանալ պատուհանի մի մի փեղկը, յետոյ աստիճանաբար վարժելով ցրտին՝ պիտի բանալ պատուհանի երկու փեղկերը: Աշխատեցէք ձեր մարմինը վարժեցնել ցրտին և այն ժամանակ գուրք կը տեսնէք, որ ազատ էք ամեն տեսակ հիւանդութիւններից, որոնք առաջանում են ցրտից:

Ննջարանի պատերը պիտի իւղաներկով ծածկւած լինեն, որպէս զի փոշին չնատի պատերը պաստառների վրայ, կահ-կարասիքը պիտի լինի պարզ և ոչ թաւշից: ոչ մի գորդ կամ վարագոյրը, որոնք փոշիների ու զանազան տեսակ միկրոբների բոյն են հանդիսանում: Սենեկակը ներկւած պիտի լինի բաց-մոխրագոյն կամ բաց-զեղին գոյնով: Մահճակալը երկաթէ: անկողինը թեթէ, հարկաւոր չէ շատ ծածկւել.

առհասարակ զգուշացէք քըտնելուց, ո-
րից կարող էք գիւրութեամբ մըսել:

Ահաւասիկ առաջ մարդու ննջարա-
նի համառօտ նկարագիրը:

Հ Ա Գ Ո Ւ Ս Թ Ա Մ Ա Ր Ը

Հագուստի վերաբերմամբ առողջա-
պահութեան առաջին պահանջն է՝ որ
վերին ու ներքին հագուստը լինին ան-
պայման ծակօտիկաւոր այսինքն գիւրա-
թափանց: Սա առողջապահական ամե-
նանշանաւոր օրէնքն է, որ ծառայում է
իբրև հիմք ներկայումս կատարւող բարոր
բարենորդումների:

Վերին հագուստի համար այժմ ա-
մենահարմար կտորը համարւոմ է
բարդոց:

Ծեր, թոյլ և հիւանդուս մարդկանց
կարելի է խորհուրդ տալ որ հագնեն
բրդէ կամ մետաքսէ սպիտակեղենն.
իսկ ցուրտ և խոնաւ եղանակներին այդ կա-
րելի էր խորհուրդ տալ և տառջ ու
պնդակազմ մարդկանց: Վնասակար չէ
նաև քաթանէ ու կտաւէ հագուստը
միայն արն պայմանով որ օսլայած չլի-
նի, կամ լւացւած լինի այնքան, որ օ-
ւան իշնէ:



Գ Ի Ւ Պ Ա Ց Ն Ե Ս Ա Կ Ա Ն

ԵՐԿՐԱԳՈՒՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ
ՄԵՐԵՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գուցէ ոչ մի տեղ ամբողջ Ռուսաս-
տանում երկրագործական գործիքներն
ու մեքենաները այն աստիճան հալա-
ծւած չեն, որքան մեզնում Անդրկովկա-
սում:

Հայերը, որ ամենային երկրագործ
ժողովրդի համբաւն ունեն, դեռ մինչեւ
այսօր էլ պինդ կամ են պապենական
անձնունի գործիքնին ու արօրին, կամին
ու անձնական տանջանքին և դրանից
այն կողմը ուրիշ ոչ մի կատարելագոր-
ծութիւն երկրագործութեան մէջ չեն
ընդունում:

Միայն վերջին տաս տարում երկա-
թուզու զծերի ընդարձակւելով հայ գիւ-
ղեռում սկսում է փոքր առ փոքր մուտք
գործել նոր գութանն ու քամու տւող
մաշնէն, ջնն ու սերզատը, խաղողի
մամուլն (պրեսը) ու նոր խնոցին բայց
այնքան չնշին թւով և այնպիսի գլու-
ւարութեամբ, որ եթէ նոյն կերպ շա-
րունակւի մեր երկրագործական առա-
ջազիմութիւնը, մենք գոնէ այդ կողմից
միայն մի 100 տարուց յետոյ հազիւ
հասնենք Եւրոպայի այնպիսի փոքրիկ
երկրին, որպէս Շվեյցարիան է:

Այն ինչ ոչ մի բան այնպէս չէ օգուած երկարողական արդիւնքների էժանանալուն, որքան կատարելագործւած մեքենաներն ու գործիքները:

Որպէս օրինակ բերենք հինգ մեր հունձը՝ կատարած գերանդիով և համեմատենք հնձող մեքենայի կատարած գործի հետ:

Մի գեսեատին ցուրեն մի օրում գերանդիով հնձելու և խուրձ կապելու համար հարգաւոր են հինգ հնձւորներ և երեք հոգի էլ խուրձ կապուներ. հինգ հնձւորից իւրաքանչիւրը պէտք է ստանայ օրական մի մի ըռուբլի՝ ուրբեմ 5 ըռուբլի, երեք կապոցը 75 ական կոպէկ՝ 2 թ. 25 կոպ.՝ բոլոր ութ հոգին միասին ստանալու են 7 ըռուբլի 25 կոպէկ:

Այժմ գանք հնձող և միաժամանակ խուրձ կապող մեքենայի ծախքերին: Այդ մեքենան մի օրում կընծի և խուրձ կըկապի չորս գեսեատին: տարածութեան արտ և կընսափ:

երկու մշակ 1 ըռուբլիով 2 թ.

չորս ձի 75-ական կոպ. 3 թ.

թել (խուրձ կապելու համար) 1 թ.

մեքենայի իւղելը — 25 կ.

մեքենայի արժեքի հանգնելը
(պօրաշենիք) 1 թ.

մեքենայի նորոգելու (բէմնայ)

օրական — 60 կ.

Հնդամենը 8 թ. 85 կ.

Ուրեմն չորս զեսեատին ցորեն հընձելու և կապելու համար մեքենայով ծախը է նստում 8 թ. 85 կոպ., իսկ մի դեսեատինը կընսափ չորս անգամ քիչ — 2 թ. 22 կոպ., այս ինչ ձեռքով հնձածը նստում է 7 թ. 25 կոպ., ուրեմն մեքենան ձեռքով հնձածից երեք ու կէս անգամ էժան է նստում ելլիցադրի վրայ կամ մաս 350 %.

Տարբերութիւնը այնքան պարզ է, համոզեցուցիչ, որ ուրիշ բան աւելացնելով այն որ մեքենայով շատ հնձելով՝ շուտով աւարտում է աշխատանքը, որ շնորհիւ դրա՝ հացը ազատում է անձրևի, ցրտի, կարկուտի տակ ընկնելու և փշանալու վտանգից, նաև այն, որ մեքենայով հնձելիս երեք անգամ աւելի քիչ է ոտի տակ ընկնում, տրորում կամ շաղ զալիս արտօւմ, փշանում ու կորչում, և որ այդ ըուրարդի գեսեատինի վրայ 8—10 փութ ցորենի տարբերութիւն է անում, — այն ժամանակ արևի պէս պարզ կըլինի հունձի ժամանակ հնձող և կապող մեքենայ գործ ածելու առաւելութիւնն ու շահաւետութիւնը:

Պա միայն հնձող մեքենան:
իսկ լաւ գութանը, երկաթի ցաքանը, շարքացանն ու կասող մեքենան, իսկ մերմ մաքողն ու ջոկմլը, սերգա-

տըն ու խոտ շուռա տռող, հնձող ու ժողովող մեքենանիքը, իսկ խաղողի մամուն ու խաղող ջարդող մեքենան, սերդատն ու նոր խնոցին, պատուղ կլպող և չորացնող մեքենաները և այլն և այլն: Դրանք բոլորը իրենց հերթին կը կնակի, եռակի էծանացնում, հեշտացնում, արագցնում են երկրագործական և գիւղատնտեսական բոլոր աշխատանքները, իսկ մթերքը ստացնում է անհամեմատ լաւ, առողջ, մաքուր, մեծ արքէք ունեցող, ուրեմն և մեծ եկամուռ տռող:

Ահա հէնց զրանով էլ պէտք է բացարել այն ըստ երկոյթին տարօրինակ հանգամանքը, որ ներոպայում կամ Ամերիկայում, ուր հողի գինը մերի հետ համեմատած 10—15 անգամ բարձը է, ազգաբնակութիւնը մեզնից շատ է, իսկ աշխատավարձը կրկնակի բարձը է, —այստեղ ցորենն ու գարին, խոտն ու կաթը, իւղն ու գինին աւելի էժան արքեն, քան մեզնում:

Եւրոպայի գիւղատնտեսի, երկրագործի բոլոր աշխատանքները սկսում ե վերջանում են ընդամենը 35—40 օրում, իսկ մեջնում 60 օրից աւելի են տեսում. Եւրոպացին մի գեսեատինից ստանում է 150—200 փութ մաքուր, սոսող, ծանրաբաշ ցորեն, հաճար, մերգիւղացին նոյնքան նողից ստանում է չաղիւղացին 40—45 փութ և այն էլ զիբուտ,

անպէտք ապրանք և այլն և այլն: Եւ այս բոլորը ատած է գալիս մեծ մասմբ նրանից, որ եւրոպացի, ամերիկացի երկրագործի բոլոր աշխատանքները կատարում են մեքենաներով, իսկ մերը՝ զօնով ու տանշանքով:

Ահա թէ ինչու եւրոպացի գիւղացին կուշտ է, հարուստ, տունը առողջապահիկ, մասանն ու ամբարը լիքը, երեխան և ինքը զրագէտ բոլորով, լաւ, մաքուր հաղնած ու բաղդաւոր, իսկ մեր գիւղացին՝ միշտ սոված, միշտ աղքատ, միշտ մերկ ու բորիկ, միշտ հիւանդ ու տգէտ:

Դրա համար էլ մեր նորհուրդն է հայ երկրագործին, եթէ ուրիշ հնարչկայ, ծախել տաւալն ու կովը, չուլ ու փալասը և, հետեւելով իրենց ռուս և գերմանացի երկրագործի օրինակին՝ գընել երկրագործական կատարելագործւած գործիքներ ու մեքենաներ. Եթէ այդ գժւար ու թանկ է անել մենակ, թող անեն մի քանի ընտանիք, աղքական միացեալ ոյժերով, որովհետեւ այդ գործիքներով նրանք կարող են բեղմնաւորել ոչ թէ մի տան հողերու արգիւնքը, այլ չորս-հինգ տան:

Գիւղատնտեսական զանազան գործիքների ու մեքենաների համար թող խորհուրդ հարցնեն նամակով կամ անձմբ մեր երկրի զանազան քաղաքներում ապրող գիւղատնտեսներից, «Գիւղացին չ*

դամնտես» թերթի խմբագրութիւնից,
Կովկասեան հայութական Գիւղատնտե-
սական բիւրոյից կամ Թիվլիսի Հայ Դիւ-
ղատնտեսական - Տնայնագործական Ըն-
կերութեան վարչութիւնից:

Դրանք բոլորն էլ ուրախութեամբ
կըտան մեր զիւղացուն հարկաւոր խոր-
հուրդներ թէ մեքենայ ընտրելու, թէ
գնի և թէ նոյն իսկ զրանց բանեցնե-
լու մասին: Դիմեք նոր կատարելագործ-
ւած մեքենաներին:

Ահա մեր խորհուրդը հայ զիւղա-
ցուն ու երկրագործին:

Գիւղատնտես Աշ. Աթանասեան



ԿԻՑԱՎԱՍՆ

Զ Ո Ւ Բ Ը

Զուրը երկը վրայ բոլոր կենդա-
նիների և բոյսերի կեանքի համար ունի
և ունեցել է այնպիսի ականաւոր նշա-
նակութիւն, որ զեռմա հնագոյն ժամա-
նակներում մարզը վերագրել է նրան
ստեղծագործական ու աստածային
բնոյթ:

Գանգէս գետը, այժմ էլ, սրբազն է
համարում հնդիկների կարծերով: Նե-
ղոսը պաշտում էին հին եղիպատացիները,
Հոնենոսը՝ հին գերմանացիները, Դա-
նուբը՝ պատմական ուաւոնները: Այդ
նոյն հայեացը մինչև այժմ էլ զեռ
պահպանւել է քրիստոնեայ հասարակ
ամբոխի մէջ: Փողովուրդը այժմ էլ խա-
չալւայ ջուրը համարում է սոսուբը և
հաւատում, որ այդ ջուրը մնում է միշտ
թարմ:

Համեմատաբար աւելի քաղաքակիրթ
յոյները առաջ բերին այն ենթադրու-
թիւնը (Ֆալէս ֆիլիսօփան), որ ջուրը
այն հիմնական տարբն է, որից առաջ
են գալիս տիեզերքի բոլոր միւս մար-
մինները:

Թէ այդ ենթադրութիւնները

արդիւնք են կըօնական ու փիլիսոփայական վերացման և իր ժամանակին հերքեցին թէ դիտողութեամբ և թէ փաստերով, բայց և այնպէս դրանով ջուրը չկորցրեց և բարձր նշանակութիւնը:

Հէց միայն ովկիանոսների և ծովերի ջուրը բանում է 3,400,000 խոր. մդոն տարածութիւն, եթէ չաշւենք ջրի այն քանակութիւնը, որ շարունակ շըրջանառում է երկրի կեղեկի երեսին ու ներսում: Բացի զրանից, մարդկային մարմնի 70—80%՝ ջուր է նոյն բանը նկատում է և բոյների վերաբերմամբ. գետնախնձորը պարունակում է 75%, ճակնդեղը 88%, իսկ վարունկը 90% ջուր:

Եւ եթէ այս ամենի հետ նկատիուննանք և այն հանդամանքը, որ 110 տարւայ ընթացքում ծովերի և ովկիանոսների բոլոր ջուրը օդն է ցնդում ու այնտեղից թափում երկրի վրայ՝ կատարելով անագին աւերածութիւն և փոփոխութիւններ թէ երկրի մակերեսոյթի վրայ և թէ ներսում, այն ժամանակ կըդանք այն համոզման, որ մարդու համար անըմբանելի կը մնային շատ և շատ ընական երեսյթներ, եթէ նա նեղութիւն չկրէր աւելի մօտից ուսումնասիրելու այդ հօր գործոնը:

Երկրի վրայ ջուրը մեզ հանդիպում

է երեք ձևով. իբրև գոլորշի, որ տարածւած է օդի մէջ, իբրև հեղուկ՝ գետերի և ովկիանոսների մէջ և իբրև սառոց՝ բնեաներում: Գիտութեան մէջ ջուրը յաճախ ընդունում է իբրև միաւոր, որով չափում են զանազան կարգի մնածութիւններ: Այսպէս օրինակ մի գրամն է մի խորանարդ սանտիմետր գտած ծրի քաշը Ցելսի⁴⁾ Ցերմութեան ժամանակ: Միւս մարմինների խոռոշիւնը որոշելու ժամանակ ջրի խտութիւնը ընդունում է իբրև միաւոր: Այսպէս՝ երկ ասում են, որ երկաթի խտութիւնը 6 է, այդ նշանակում է, որ երկաթը 6 անգամ ծանր է իր ծաւալաշափ ջրից: Զերմութեան այն քանակութիւնը, որը ընդունակ է մի գրամմ ջրի շերմութիւնը բարձրացնել 10 Ցելսի՝ գիտութեան մէջ կոչում է 1 Կալօրիա: Փարձը ցոյց է տեև, որ ջուր տաքացնելու համար պահանջում է աւելի մնացերութիւն, քան որեւէ ուրիշ մարմնի համար: Սրանով է բացատրում այն հանգամանքը, որ ջուրը այնպէս սաստիկ է այրում կենդաններին: Ջրի այդ նոյն յատկութեան վրայ հիմւած է և սենեակները ջրով տաքացնելու ոկզրունքը: Շոգեկամայից դուրս գալով, շոգին իր հետ անդում է անագին քանակութեամբ ջերմութիւն ու հազորքում պաղսենեակներին: Զերմութէնից ջուրը,

ինչպէս և միւս մարմինները, լայնանում է, այսինքն թեթևանում է, բայց խտութեան այս փոփոխութիւնը կանոնաւոր չի ընթանում: Փորձը ցոյց է տալիս, որ ծելսի գործելիսանութեան ժամանակ ջուրը աւելի խիտ է, քան 3, 2, 1 և 0 աստիճանների ժամանակի. և ձմռան ցրտերին, լճերի ու գետերի ջրի կաթիները սառչելով մինչև Յելսի 4-ը, իրեւ աւելի ծանր մարմիններ՝ իշխում են ջրի յատակը, իսկ միւս կաթիները, որոնց ջերմութիւնը հանում է 0-ի, իրեւ աւելի թեթև մարմիններ՝ բարձրանում են դէպի մակերեսոյթը ու այնտեղ սառցանում: Եթէ այս հանգամանքը ըսլինէր, այսինքն՝ եթէ սառոյցը ծանր լինէր ջրից, այն ժամանակ ջրերը կը սկսէին սառչել յատակից և ամբողջովին սառոյցի փոխելով, վերջ կըտային իրենց մէջ եղած կեանքին:

Երկար ժամանակ անյայտ էր մնում ջրի քիմիական բաղադրութիւնը: Միայն վերջին ժամանակներում, 100 տարի մեղանից առաջ, ֆրանսիացի գիտնական Լաւուազէն, որին ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ զլիսատեցին, ապացուցեց, որ ջուրը՝ կազմած է երկու գաղերից՝ ջրածնից ու թթւածնից: Ջրածնը այն անգոյն թեթև ապն է, որով լցնում են ընդինէ զնդակները ու փողոցներում վաճառում: Թթւածէնը գըտ-

նրւում է օդի մէջ. նրան չնշում են կենդանիներն ու բոյսերը: Այդ երկու գաղերի խառնութղը կոչում է «թնդացող խառնութղ» (րըմցվան): Եթէ այդ խառնութղին մօտեցնենք վառւած լուց կը սարսափելի ուժով կը պայթի ու առաջ կը բերի ջրային գորոշշիներ:

Արևեստական եղանակով բացարձակապէս մաքուր ջուր ստանալու հանգամանքը կապւած է ահապին, համարեա անյաղթելի, գժւարութիւնների հետ: Գերմանացի գիտնական կոլլագուշը ամբողջ 10 տարի զործադրեց այդ հարցի լուծման համար, բայց և այնպէս չկարողացաւ ստանալ բացարձակապէս մաքուր ջուր: Դրա պատճառը այն հանգամանքն է, որ երկրագնդի վրայ չկայ այնպիսի նիւթ, որը ջրի մէջ չլուծելի: Բացառութիւն չեն կատմում նոյնիսկ սոկին, պլատինն ու ապակին: Ուրեմն, ջրի ամանը ինչ նիւթից էլ որ շինուած լինի, նրա պատերը կը լուծեին ջրի մէջ և գրանով ջուրը կը կորցնէ իր բացարձակ մաքրութիւնը: Բացի գրանից, ջրի մէջ լուծւում են և օդի բաղադրիչ մասերը:

Այս ամենից կարելի է եղբակացնել որ երկրի վրայ գոյութիւն չի կարող ունենալ բացարձակապէս մաքուր ջուր:

Բնական ջրերը կարելի է բաժանել

երկու կարգի. կակուղ և կոշտ: Որքան
չըի մէջ պահաս լինին աղերը, այնքան
նա աւելի կակուղ կը լինի: Հետեալպէս
ջրերից ամենակակուղը անձրեային ջուրն
է, որովհետեւ նրա մէջ լուծւած են
լինում այն աղերի չնչին մասնիկները
միայն, որոնք փոշու ձեռվ տարածւած
են օդի մէջ:

Անձրիկ ջուրը գետին թափւելով՝
մասսմբ հոսում է զեանի երեսով և ա-
ռաջ բերում գետեր ու լճեր, մասսմբ
էլ ծծում է երկրի ներսը ու սերտ յա-
րաբերութեան մանում զանազան հան-
քերի հետ:

Ինչպէս վերն արդէն ասել ենք,
ծովերի ու սվկիանոսների ջուրը 110
տարում անում է մի լիակատար շըջան,
առաջ Եերելով անագին քիմիական ու
մեքենայական փոփոխութիւններ թէ
երկրի մակերեսոյթի վլայ և թէ նրա
խորքերում: Զըի իւրաքանչիւր կաթիլլ
հոսելով թէք մակերեսոյթով եր հետ
տանում է հողի մի չնչին մասնիկ: Եռ
երբ այդ կաթիլները միանում, կաղմում
են գետակներ ու գետեր և տարելով
թափում ծովերն ու սվկիանոսները,
այն ժամանակ երկրի կեղակի պինդ բա-
ղադրիչ մասերի քանակը, թէ երես
լուծւած և թէ իրբեք մեքենայական
պղարուածք, համում է անհաւատալի
չափերի:

Օր. Հուէնոս գետը ծովն է թափում
տարեկան 59,000,000 խոր. Փուտ լուծ-
ւած նիւթեր: Հետև, Ամերիկայի Միսի-
սիալի գետի մի խոր. Կիլոմետր ջուրը
46,000 կիլոդրամմ նիւթեր է պարու-
նակում: Ամազոնի մի կիլոմետրը՝ 20,000
կիլոդր.: Դանուբինը՝ 36,000 կիլոդր.:
Բայց եթէ կամինայինք արտայայտել գե-
տերի տարած ամբողչ նիւթի քանակը
պղտորումի և թէ լուծւածքի ձեռու
կրստանայինք անհամեմատ աւելի մեծ
թէր: Միսիսիպի գետը իր հետ տանում
է տարեկան 368,875,000,000 կիլոդրամմ
հողացին նիւթեր իսկ Գանգէս գետը
խորմ է երկրի մակերեսոյթից տարեկան
այնափի պինդ մասնիկներ, որ եթէ ժո-
ղովելու լինինք, նրանցից կարող ենք
կառուցանել 66 եգիպտական ըուրգ:

Ծծեկով հողի մէջ, այնտեղ էլ ջու-
րը կատարում է բաւականաչափ փոփո-
խութիւններ: Եթէ հանդիպում է զիւրու-
թեամբ լուծւով նիւթերի, լուծում է
նրանց ու իր հետ տանելով առաջ է
ըերեւմ ստորերկրեայ ահազին դատար-
կութիւններ: Այդ դատարկ տարածու-
թիւններից յետոյ յաճախ առաջ են
դալիս այնպիսի մեծ փլածքներ, որ մի
քանի գիտնականների կարծիքով պատ-
ճառ են լինում երկրաշրջների:

Ստորերկրեայ ջրերը յաճախ ինո-
ների ստորոտին, խոր կիրճերում ու

ձորերում գուրս ևն զալիս գետնի երեսը և առաջ բերում աղբիւրներ ու ակոնք: Այդ տեսակ ջրերը հանքային են կոչում, եթէ նրանց մէջ լուծւած են լինում բաւականաչափ աղեր ու զաղեր: Մեզանում, կովկասում կան այդպիսի բազմաթիւ հանքային աղբեւրներ: Զեղանից ով եղել է Կիլավոզսկում, Բորժոմում, կամ ով ճանապարհորդել է Ռուզմալիբական (Յօհանոցը) ճանապարհով, ճաւանաբար տեսած կը ինի այդ աղբեւրները:

Մեզ յայտնի է, որ երկրի միջուկը ներկայացնում է մի հալւած զանգւած: Եթե ջուրը երկրի կեղեկ ճեղքւածներով շատ խոր է թափանցում դէպի ներս, տաքանում է. իսկ եթէ որևէ կերպով կարողանում է դուրս գալ երկրի երեսը, առաջ է բերում չերմ աղբիւրներ—չերմուկներ: Զերուկները առնասարակ օժտւած են լինում որևէ բուռական յատկութեամբ: Ցիխիսեղիք վազուց ի վեր օգտում են այդպիսի աղբեւրներից:

Խմելու համար մարդիկ գործ են ածում գճիտ (պրেսիա) ջուր, այսինքն գետերի, լճերի, հորերի և աղբիւրների ջուրը: Մարդկանց կեանքի համար խմելու ջուրը խաղում է չափազանց մեծ գեր, ուստի մեղանից իւրաքանչիւրը պարտաւոր է գիտենալ թէ վերոյիշեալ չըերից որն է ամենաօգտակարը: Խմե-

լու ջուրը պիտի լինի պարզ, առանց տիղմի, համեղ ու թարմ և չպիտի ունենայ անդուրեկան հոտ: Չպիտի լինի «թմրած» և ոչ էլ խիստ փափուկ, այլ մի փոքր կոշտ, այսինքն՝ պիտի պարունակի որոշ քանակութեամբ աղեր, որովհետև մեր կազմւածքը այդ պահանջում է: Գլխաւորապէս, խմելու ջուրը չպիտի պարունակէ փոտոյ ու լուծող օքանական նիւթերը:

Այս բոլոր պայմաններին ամենամեծ չափերով համապատասխանում է աղբերի ջուրը: Այս ջուրը պարզ է, պղտորութիւն չունի, որովհետև նա անցնելով հողի մի բաւական հաստ շերտ՝ մաքրում է: Ունի թարմ, գուրեկան համ, որովհետև իր մէջ պարունակում է գաղեր: Իր մէջ պարունակում է աւելի շատ աղբեր, քան գետի կամ լճի ջուրը, որովհետև աղբիւրի ջուրը գետնի տակ աւելի սերտ շփում է ունենում հանքերի հետ, քան գետի ջուրը, որ շարունակ հոսում է գետնի երեսով: Վերջապէս, որովհետև աղբիւրի ջուրը շարունակ անցնում է գետնի տակով ուստի նրա մէջ չեն կարող ընկնել լուծուղ ու փառող օրգանական մասնիկներ, ինչպէս այդ լինում է գետերի, լճերի ու հորերի վերաբերմամբ, նամանաւանդ երբ այդ վերջնիները գտնուում են իիտ բնակւած տեղերում:

Շատ յաճախ պատահում է, որ մարդիկ անզիստակցաբար վարակում են իրենց վճիտ աղբիւրները:

Այդ լինում է այն ժամանակ, երբ նրանք բնակում են իրենց աղբիւրներից բարձր, կառուցանում են այնտեղ ախոռներ, մսուրներ ու հարկաւորութիւններ: Այդ գէպքերում աղբի ու կղկղանքի նեխւած ջուրը ծծում է գետնի մէջ, հասնում աղբիւրի ջրին ու վարակում, փշացնում այդ ջուրը: Եւ այդ ջրի գործածելուց շատ յաճախ մարդիկ ստանում են տիֆ և այլ վարակիչ հիւանդութիւններ:

Առանձնապէս զգոյց պիտի վերաբերել խմելու ջրին, մանաւանդ խուլերայի ժամանակ: Խոյերան, ինչպէս յայտնի է, առաջ է զալիս որոշ մանրադիտական կենդանիներից, ուստի խուլերայի համաճարակի ժամանակ պիտի խմելու ջուրը եռացնել ու եռացած դրութեամբ լցնել գրաֆինների կամ խեցեղէն ամանների մէջ ու բերանը բամբակով ամուր փակել: Եթի ջուրը սառչում է, օդը անցնում է բամբակի միջով ու իր մէջ դանւող վարակիչ մասնիկները թողնում այնտեղ:

Զրհնիք ջուրը գործածելիս նմանապէս պիտի գործ դնել որոշ զգաւորութիւններ: Հոյի ջուրը իր յատկութիւններով բարորովին նման է աղբիւրի ջրին, բայց

որովհետեւ հորերը փորւում են միշտ բնակութեան տեղերին կից, ուստի մնձ մասամբ հորերի ջուրը կեղտոտած ու վարակւած է լինում:

Բարեկարգ քաղաքները, մաքուր ու առողջ ջուր ձեռք բերելու նպատակով, միշտ շինում են ջրանցքներ: Եթէ քաղաքի մօտերքում կան լեճնային աղբիւրներ, սովորաբար օգտառում են այդ ջրից: Հակառակ գէպքում առնում են որեւ մօտակայ լից կամ գետից: Շվէցյարիայում, ուր կան բազմաթիւ վճիտ ու անուշանամ լճակներ, քաղաքներից շատերը ջուրը առնում են այդ լճերից: Թիֆլիս քաղաքը առնում է ջուրը կոռը գետից Աւալայի մօտերքում: Բայց այն տեղերում, ուր նիւթական միջոցները ներում են, քաղաքները աշխատում են գետերի ջուրը փոխարինել աղբիւրի ջրով, որպէսնետեւ մարդուս համար գետերի ու լճերի ջրերը պակաս առողջարար են, քան աղբիւրների ջրերը:

Քաղաքային ջրանցքները միշտ ունենում են իրենց քամիչները (ՓԱԼԵ-ՏՐԱ), որոնցով ջուրը քամում ու մաքրում են պղտոր մասերից ու մանրէներից: Եթէ բնակում էր այնպիսի քաղաքու, ուր ջրանցքը չկայ և եթէ ձեր ջուրը պղտոր է, այդ գէպքում ձեզ խորհուրդ չեմ տալ խանութիւններում մաքրիչներ գնել (ՓԱԼԵՏՐԱ), որպէսնետեւ

պիտի աշխատէ խոնաւութիւն պահպանէլ հողի մէջ: Հողի մակերեսոյթը առաջ չորանում է երաշտից ու խիստ քամուց: և երբ հողի վերին շերտերը զուրը են ջրից: ստորին շերտերից զրկում են ջրից: ստորին շերտերը զուրը բարձրանում է. այդպիսով սկսում են չորանալ և հողի ստորին շերտերը: Ջրի ստորին շերտերից բարձրանալն արգելելու համար պէտք է ծափի շուրջը եղած հողը փորփորել և երեք չթողնել որվհետեւ կոշտ ջրից կաթսայի պատերը շուտով ծածկում են նստածքով, որի պատճառով նախ պահանջում է ջուրը եռացնելու համար աւելի մեծ ջերմութիւն և երկրորդ՝ երբեմն շողեկաթսաները դրանից պայթում են:

Յ. Ակոնեան

այդ մաքրիչները կարճ ժամանակում լցուում են բակարիաներով և աւելի շուտ կեղադառում են, քան թէ մաքրում ջուրը: Աւելի լաւ է ջուրը գեշերով լցնէք մի ամանի մէջ ու հանդիսատ թողնէք մինչև առաւօտ, որ տիղմը նստէ յատակին:

Լւացքի և լողանալու համար կակուր ջուրը գերադասելի է: Գետի, լճի կամ անձրիսի ջուրը գերադասելի է այդ դէպքում աղբեկրի ջրից, որովհետեւ կակուր ջրում սասանում ծախսում է անհամեմատ քիչ քանակութեամբ:

Նոյնը պիտի ի նկատի ունենալ և շոգեկաթսաների վերաբերմամբ: Այդտեղ էլ պիտի գերադասել կակուր ջուրը, որովհետեւ կոշտ ջրից կաթսայի պատերը շուտով ծածկում են նստածքով, որի պատճառով նախ պահանջում է ջուրը եռացնելու համար աւելի մեծ ջերմութիւն և երկրորդ՝ երբեմն շողեկաթսաները դրանից պայթում են:

Ինչ նշանակութիւն ունի ջուրը մարդու համար, նոյն նշանակութիւնն ունի և բայսերի ու կենդանիների համար:

Երբ այն հողի մէջ, ուր աճում է բոյսը, հետզհետէ պակասում է ջրի քանակութիւնը ու անցնում որոշ սահմանից, բոյսը սկսում է հիւանդանալ և մեռնել: Աւստի իւրաքանչիւր այդեղործ



ԼԵԶԻՍ.ԳԻՏԱ.Ա.Ա.Ն.

ԷՍՂԵՐԱՆՏՕ ԿԱՄ ՄԻԶԱԶԳԱՅՑԻՆ
ԼԵԶՈՒ

Մարդկութեան իդէալներից մէկը էղել է ստեղծել մի միջազգային լեզու, որ գիշացնէ մարդկանց միջազգային յարաքերութիւնները: Այդ իդէալը հետզհետէ իրագործում է: Ներկայումս երկրագնդում հաշում էն 500,000-ից աւելի էսպէրանտիստներ: Միմիայն ետպոնիան ունի 4,000-ից աւելի էսպէրանտիստ, որոնց գույն կանգնած է կուս չայեաշխն, արտաքին գործոց մինիստրը:

Յայտնի է, թէ որպիսի զիւրութեանը կարելի է սովորել էսպէրանտօն: Այդ լեզով հրատարակւած գրքերի թիւը հասնում է 2,000-ի, իսկ պարբերական հրատարակութիւնների և օրաթերթերի թիւը՝ 80-ի:

Ամեն տարի տեղի է ունենում էսպէրանտիստների համագումար, ուր հաւաքւամ էն բազմաթիւ պատգամաւորներ և հիւրեր: Առաջին համագումարը կայացել է Ֆրանսիայի էսպէրանտիստների նախաձեռնութեամբ և տեղի է ունեցել 1907 թիւն Բուլոնումու Փընկում:

Համագումարներից նշանաւորն է Դրէզդէնի համագումարը, որը կայացել էր 1908 թւականին և ուր ներկայ էր Մաքսոնիայի թագաւորը իր մինիստրըներով: Առաջին անգամ այդտեղ խաղացին էսպէրանտո լեզով «Iphigenie en Tauride» Գէօթէի 5 ար. դրաման, որ մեծ յաջողութիւն ունեցաւ:

Այս համագումարում տեղի ունեցան մի շարք կարեոր որոշումներ, որոնցից առաջինը Միջազգային հնասիտուտի (Internatioanl Instituto) հիմնաբրութիւնն է:

Յիշենք նաև այս, որ էսպէրանտօն աւանդում է հերոպայի շատ զպլոցներում և մի քանի տեղերում, նոյն իսկ, պարագիր է:

Ով ցանկանում է ծանօթանալ այդ լեզվի հետ, կարող է զիմել ներքեւում յիշած հասցեով և իսկոյն կրստանայ ձ ը ի բրօքիւր էսպէրանտո լեզով:
Հասցէն՝ Hachette et Co. 79 Boulevard St. Germain Paris.

ԳԼԽԱԽՈՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐ.

Չինարէն խօսում էն	400,000,000
Անգլիան,	143,000,000
որից Բրիտանակ, կղզիներ	44,200,000
Միացեալ Նահ. (Հիւս. Ամ.)	84,300,000

Աւստրալիայում	5,400,000
Կանադայում (Հար. Ամեր.)	3,725,000
Աֆրիկայում (Անգլ. գաղ.)	1,125,000
Դերմաներէն	68,000,000
Որից Գերմանիայում	51,900,000
Աւստրո-Ավստրիայում	11,300,000
Զելցերիայում	2313000
Ռուսէրէն,	85,000,000
Որից Եւրոպ. Ռուսաստ.	76,000,000
Պետութեան միւս մասէրում	9,000,000
Խապաներէն,	65,000,000
Որից Խապանիայում	19,600,000
Ամերիկայում	44,700,000
Ծափոներէն	52,000,000
Ֆրանսէրէն,	49,000,000
Որից Ֆրանսիայում	39,250,000
Բելգիայում	3,485,000
Էլզաս-Լոտարինգիայում	234,000
Պիեմոնտում	135,000
Զելցերիայում	731,000
Կանադայում	1,700,000
Անտիլեան կղզիներում	1,400,000
Արժիբում	1,000,000
Մադագասկարում	550,000
Ասիայի Փրանս. զաղութ.	100,000
Տունիսում	150,000
Աւստրալ. կղզ.	40,000
Աքարերէն	35,000,000

Իտալերէն,	35,000,000
Որից Իտալիայում	33,800,000
Աւստրո-Ավստրիայում	755,000
Պորտուգալերէն	23,000,000
Պորտուգալիայում	5,450,000
Բրազիլիայում	17,500,000
Լեհերէն	15,500,000
Ռումաներէն	10,000,000
Ցունարէն	9,100,000
Զեխերէն	9,000,000
Սլաւօներէն Սկրբ. և այլն	9,250,000
Բուգարերէն	5,250,000
Հայերէն	5,500,000
Տամլերէն (Եւրոպական)	1,350,000
Ալբաներէն	5,500,000

ԲԱՐԳԵՐ

ՄԵՌԵԼՆԵՐԻ ԱՅՐՈՒՄԸ

Պետական Դումա է մոցւած մի օրինագիծ՝ Վարչաւում կը եմատօրիս (մեռներն այսելու հոգաշան) հիմնելու մասին:

Դա լինելու է առաջին կը եմատօրինա ամբողջ Ռուսաստանում:

Մեռները այսումը ցանկալի է համարում զինաւորապէս նրա համար, որ գերեզմանատները չափազանց լըցում են մեռներով, Տեղ չլինելու պատճառով դագաղները հողի մէջ դրում են երար կպած և մի քանի շարք, շատ անգամ գերեզմանը չի փորում օրէնքով պահանջած խորութեամբ (երեք արշին), Դիակները դանդաղօրէն փառում են խոնաւ գետնի մէջ, վարակելով օդն ու ջուրը և առաջ բերում վտանգաւոր գաղեր ու միկրօբներ:

Մահից 12 ժամ յետոյ մեռնելի աշքերի խոռոչների և բերանի անկիւնների մէջ կարելի է գտնել ձանձների օրգեր: Հողի մէջ որգերը զարգանում են մըրջիւնների հետ, որնք մտնում են զարգու խոնաւ գետնից և նպաստում դիակների նեխմանը:

Ամենից առաջ նեխում է արիւնը, յետոյ կաշու տակի միսը: Այսուհետեւ աստիճանաբար և խիստ դանգաղօրէն սկսում են քայլայւել ամբողջ մարմնի փափուկ մասերը: Հասակաւոր մարդու փափուկ մասերի քայլայւմը Պետերբուրգի գերեզմանոցներում տեսում է երեք տարի: Զիղերի և կոճակների փոռումը հինգ տարի, ոսկորների ցամաքումը եօթը տարի: Այսպիսով, եօթ տարւայ ընթացքում դիակը հանգիւանում է նեխման և վարակման աղբիւր: Ուղեղը պահպանում է աւելի երկար, դառնալով սև ու լործուն մի զանգւած:

Դիակների այսման պաշտպանները իրենց կարծիքը պատճառաբանում են կենցանի թագւելու երկիւղով: Արտասահմանում դիակի այրում ցանկացողները կտակի մէջ գրում են սովորաբար՝ ոչչ մի ցանկութիւն չունենալով կենցանի թագւելու, խնդրում եմ իմ դիակը ուղարկել կը եմատօրիսա:

Իսկ հակառակորդներն ասում են, որ իրենց չեն ցանկանում կենցանի այրելը: Միակ միմիթարութիւնը մնում է այն, որ կը եմատօրիսայում արթնանալ անկարելի է:

Բազմաթիւ փորձեր են կատարել որոշելու համար, թէ որքան ժամանակում է ալրում մարդու մարմինը: Ծըծկեր երեխայի դիակը սենեակի սովորա-

կան վառարանում փայտի կլսակի մէջ
այրուում է երկու ժամում:

Հըգեհների մէջ մարդիկ չեն այր-
ուում մինչև վերջը, այլ մնում են ածխա-
ցած: Սպանիայում գտնուած միջնադա-
րեան մի գահճի յուշատերում ասւած
է, որ հերետիկովն այրելու համար չէր
բաւականանում երկու սաժէն փայտը,
այլ պէտք էր լինում նաև երկու ան-
գամ աւելի ցախ ու ծոստ:

Այժմ Արեմուտքում կրեմատօրիա-
ների մէջ զործալը ունեմ են Սիմենսի
բեկեներատօրեան հնոցներ, որոնց մէջ
տաքութիւնը համառում է այն աստիճանի,
որ ամենախոշոր մարդու դիմակը այր-
ուում է բոլորովին մի ժամում, նոյն իսկ
աւելի շուտ:

Տաօր առարի առաջ կրեմատօրիա-
ները ամեն մի մեռելի համար առնում
էին 1,500 ը., իսկ այժմ առանձին գը-
ներ են որոշւած ըստ կարգերի՝ 250-ից
մինչև 700 ըուրին: Երբոր դիմակներն
այրելու սովորութիւնը տարածւի, գներն
էլ հարկաւ կիջնեն:



ՖԵԼԻՑՈՒ

ԿԱՊԼ ԿՏՐԱԾ ԿԻՆԸ

Շատ լիբր էր երկրագործ Խաչանի
կին Սանամը, գիւղում էլ երիտասարդ
չէր մնացել որի երեսին չժամարար,
ժամանակ էլ որ մարդը տուն գունանար,
կնոջը միշտ որիէ երիտասարդի հետ կը-
տեսնէր: Ոչ խրատ, ոչ թակ-ոչինչ չէր
ազդում Սանամին, նա իր հշն էր քշում:
Ճարը կտրած՝ Խաչանն այնունետեւ ա-
ռաւուները դուռը փակում էր կնոջ
վրայ և զնում իր բանին. բայց երբ ե-
րեկոները վերապանում էր, որ կնոջ մօտ էլի
մարդ կայ:

Շատ, շատ մտածեց Խաչանը կապը
կտրած կնոջը խելքի բերելու և, վեր-
ջապէս, հետևեալ միջոցը հնարեց:

Մի առաօտ առաւ իրենց մեծ
մնդուկը, կնոջը նստեցրեց մէջը, խուփը
ծածկեց, կողաեց, բանալին գրապանը
դրաւ, յատոյ սնդուկը շալակեց ու գնաց
դաշտն աշխատելու Դաշտում մէկ ու-
զեց մնդուկը գետնին դնել, բայց մէկ
էլ մտածեց, թէ մի գուցէ գութանի եղ-
ները հեռացած ժամանակ կինը հնար
գտնէր միջից զուրս զալու և փախչելու

սիրեկանների մօտ, ուստի սնդուկը վայր չդրեց, այլ շալակին թողնելով՝ առաջ գութանի մաճն ու սկսեց վարել հողը: Մնդուկն իր ծանրութեան տակ ճնշում էր նրան, մէջքը կոտըւում էր, ծնկները թուլանում էին, քրտինքը կաթ-կաթ ծորում էր նրա ճակատից, բայց և այնպէս նա համբերութեամբ տանում էր այդ տանջանքը:

Երբ ճաշ եղաւ, արձակեց եզները, իսոյ սնդուկը վայր գրեց մէջքեց, որ մի քիչ հանդասանայ, հաց ուտի: Կնոջն էլ հարկաւոր եր բան տալ ուտերու: Ու երբ այդ նպատակով բաց արաւ սնդուկի խորիք, ապշած ետ-ետ դնաց:

Մնդուկի մէջ կնոջ կողքին նստած էր մի երիտասարդ...

Արդեօք սա խեղճ Խաչանի կասկածու երկայսութեան արդիւնք էր, թէ իրողութիւն, — այս բանը բացատրել կարող են միմիայն կանագը...

Նար-Դու

ԴՐԱՄԱՅԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՊԱԳԱՅՈՒՄ

Ինչպէս խօսելը երեխային չեն սովեցնում, այլ ինքն է սովորում լսելով և նոյն խոկ իրանից բառեր սուեղծելով, այսպէս էլ կըսակորի նա ապագայում զբել-կարգալը, զծագըելը, նկարելը, երգելը, հաշւելը և զանազան ձեռար-ւստաներ:

Խօսելը մանուկները սովորում են իրարեց, երգելը՝ նոյնպէս: Այսպէս են սովորում և զանազան հանելուկներ, շուտասելուկներ, բառախաղեր, նէքիաթեներ և մինչև անզամ ճնճղուկի լիզու: Եւ որցան էլ մանկական խաղեր, Անասանց պէս տարրական գիտելիքներն էլ կըսովորեն ինքնաբերաբար և ոչ չի իմանաւ, թէ ո՞վ ումնից է սովորել գրել-կարգալը, այսքան կըդառնայ բնական և սովորական: Մեր մանկավարժները այլ ևս գլուխ չեն կոտրիլ թէ ինչպէս սովեցնեն մանուկներին այս և այն տառը. նրանք այլ ևս գործ չեն ունենալ անգրագէտ մանուկների հետ:

Այս համեմատութեամբ կը հեշտանայ և բարձր զիտութիւնների աւանդումը: Ուսուցումը հեշտացնելու համար

կողմնակի հնարներ շատ կը դանեն, և
ինչ որ մեր ժամանակ մի տարումն են
սովորեցնում, նոյնը կը սովորեցնեն մի
տամումը: Սինօմօտօգրաֆը, գրամօֆօ-
նը, բէմինդապոնը, զանազան հաշւարա-
րական գործիքներն ու աղիւսակները
ապագայի ուսուցումը հեշտացնող և ա-
րագացնող հնարների նախելեռթիներն
են:

Ուսանող սերնդի ուղեղը ձնշւելուց
և յոդնելուց ազատ կը մնայ. նա կաճի,
կը զարգանայ բնականաբար և առաջ
կը բերի մի նոր սերունդ իրանից էլ ա-
ւելի ընդունակ, աւելի հնարագէտ: Եւ
այդ ապագայում մեր ներկայ ժամանա-
կը անցած կը լինի վաղանցեալ բար-
բարու և խաւար զարերի կարգը:

Դ. Աղայեան

ԱՊԱԳԱՅԻ ԴՊՐՈՑԸ

«Ազատ մանկան տունը» Կ. Վենցերի

«Ազատ գլորոց», «Ազատ կը թու-
թիւն»—ահա այս է ապագայ մանկա-
վարժութեան հիմնաբարը:

Ազատել մանուկը ուսուցման սո-

վորովթիւնների լծից, առաջ կատարեալ
ազատութիւն մանուկի ինքնատիւզ ան-
հատականութեան ու բնածին ստեղծա-
գործող ոյժերի զարգացմանը՝ ահա այս
է այն զաղափարական նպատակը, որին
ձգտում է հասնել նոր ազատ գլորոցը:

Դպրոցի ու ընտանիքի լաւագոյն
ոյժերը այժմս ուղղւած են լուսաբանե-
լու և պարզելու այն հարցերը, թէ ինչ-
պէս ստեղծել ազատ գլորոցը, թէ ինչ
ձև կը ստանայ և պիտի ստանայ ապա-
գայի գլորոցը:

Եւ այդ ուղղութեամբ իւրաքանչիւր
ձեռնարկութիւն զարթեցնում է հասա-
րակութեան ուշագրութիւնը, բոռվհետեւ
այդ հարցերը չեն կարող չգրաւել, չըգ-
րադեցնել ամեն մի խոնուն անհատի:

Պարն Վենցելը իր «Ի՞նչպէս ստեղ-
ծել ազատ գլորոցը» աշխատութեան մէջ
փորձում է մանրամասն ձեակերպել ա-
պագայի զաղափարական գլորոցը:

Մովկաւի պլիտեխնիքական դպր-
ոցում 1909 թ. մարտի 1-ին իր կար-
գացած դասախոսութեան մէջ (տես
«Ազատ կրթութիւն» ամսագիրը № 8)
նա ընդհանուր գոյներով գծագրում է
այն ձեր, որ պիտի ընդունի այդ զա-
ղափարական ու զարգացուցիչ հաստա-
տութիւնը:

Նա անւանում է այդ նոր գլորոցը
«Ազատ մանկան տուն»: Այդ հաստա-

առութիւնը ներկայ դպրոցից կը տարբերւի թէ իր սաեղծագործով մեթողով և թէ այն սկզբունքներով, որոնք պիտի լինին նրա հիմնաբարը:

Մեր ժամանակի դպրոցներում մասուկները ոչ մի մասնակցութիւն չունին դպրոցի կազմակերպութեան մէջ. իսկ ապագայի դպրոցը պիտի ստեղծւի մասուկների մասնակցութեամբ:

«Ազատ մանկան տառնը» մի մանկագրժական համայնք. է: Նրա անդամներն են՝ մահառակները, զեկավարներն ու ծնողները. Համայնքի բոլոր անդամները զպատակամ ու գիտակցութէն միացել են ծառայելու ընդհանուր գործին՝ կրթութեան ու զարգացման գործին:

Որքան պարզ ու գիտակցութէն ըմբռնի իւրաքանչիւր անդամ այդ գործի էւռթիւնը, այնքան աւելի հաստատուն կը լինի այդ համայնքը, այնքան աւելի կանոնաւոր ու արագ կը նթանայ նրա զարգացումը:

Հետեւապէս, հէնց սկզբից, զեկավարների սառաջ դրւում է մի շատ նշանաւոր ինչպիս, այն է գործ դնել ամեն ջանք, որպէսզի իւրաքանչիւր՝ «անկախ մանկան տառնը» մանուկ մանուկ պարզ ու որոշակի ըմբռնէ թէ այդ հաստատութեան նպատակը և թէ իր այդ հաստատութիւնը յաճախելու պատճառը:

Եթէ երեխան հարց տար, թէ ինչ է

«Ազատ մանկան տառն» նպատակը, նրան կը պատասխանեն, որ այդ տունը, ուր նրան բերել են, «Երջանկութեան, ուրախութեան ու ազատութեան» տուն է, թէ նա եկել է այդտեղ «ապրելու լիակատար կենաքով, ազատ աշխատանքի, ազատ խաղի նւիրւելու իր հասակակեցների հետ և ազատորէն հաղորդակցութեան մէջ մտնելու այն հասակաւորների հետ, որոնք իրենց գիտութիւնից ու փորձառութիւնից կարող են մաս համել մանուկներին: Եկել են աղատաշխատելու թէ իրենց անձի և թէ այն համայնքի օժտին, որի մէջ նրանք ընդունել են, աշխատելու՝ որպէս զի թէ իրենք և թէ համայնքը նետզնետէ բարույսպէս բարձրանան, երկուսն էլ գտնան աւելի ազնիւ ու կատարեալ»:

Ի հարկէ, նախ «ազատ մանկան տունը» իր գրութեամբ, իր կենաքով առանց խօսքերի պիտի ապացուցանէ նոր եկող մանուկին, որ այդ է իր նըպատակը: Շրջապատը զլիաւորապէս պիտի զարգացնէ և ամրապնդէ փոխազարձ իրաւունքները յարգել և մտցնէ այն գիտակցութիւնը, թէ նրանք, մանուկները զպատ համայնքի հաւասար իրաւունքներով օժտւած անդամներ են և նրանք էլ այդ տան կենցաղի վերաբերմար հաւասարազօր ստեղծագործողներ են:

ինչ վերաբերում է դպրոցական գործի հիմնական ուղղունքներին, այդտեղ արդէն ժամանակակից դպրոցի և «Ազատ մանկան տան» միջն պիտի գանենք արմատական և էական տարբերութիւն։ Մեր դպրոցներում առաջին տեղը տրւած է ուսումնին, մտաւոր զարգացման, որ յաճախ լինում է միակողմանի, յաշմանդամ և կայանում է գլխաւորապէս յիշողութեան զարգացումի մէջ։ «Ազատ մանկան առևնը» ուսումնարան չէ. զա մի կրթիչ և զարգացուցիչ հաստատութիւն է, որի մէջ առաջին տեղը արտօւմ է այսպիսի կրթութեան, որը ի նկատի ունի մարդու ամբողջութիւնը և ապահովում է նոգեկան կեանքի բոլոր կողմերի կատարեալ ու առողջ անումը։

Ուսումը, մտաւոր զարգացումը մտնում է նրա մէջ իբրև մի մաս, իբրև մի երկրորդական ու ստորադաս տարբ։ Գլխաւորապէս աշխատում են ազատ ներգործութեամբ ու ինքնուրոյն ստեղծագործութեամբ մանուկի կամքին տալ կանոնաւոր զարգացում։ «Ազատ մանկան տունը» ընդգրկելով մարդկային կեանքի բոլոր կողմերը, իր վրայ առնում է մանկան հասարակական, ճաշակագիտական (էստետիկական) ու բարոյական պահանջներին կատարելապէս գոհացում տալու հոգսը. այդ նոյն ժամանակ ձգտում է, որ համայնքի բոլոր

կեանքը կարելիին չափ կը է «ամսողական ու ներդաշնակ (հարմոնիք) բնաւորութիւն»։ Բոլոր ղեկավարները գործում են համերաշխ, չեն փափչում փոխադարձ կոնտրոլից ու աղատ անկեղծ կրիակայից։ Ամեն բան նպաստում է համայնքի անդամների մէջ սերտ ու բարեկամական կապի հասաւմնան։ Մանուկների ու հասակաւորների խտոն և մանուկների առանձին համախմբումները բարեկարգում են կենսական յարաբերութիւնները։

Հասարակաց անձրաժէշտ օգտակար աշխատանքը «ապատ մանուկի տան» մէջ խաղում է նախատաս և հիմնական դեր։ «Ազատ մանկան տունը» ներկայացնում է մի փոքրիկ աշխատաւորական համախմբում. այդ ընկերութեան թէ մանուկ և թէ հասակաւոր անդամներից իւրաքանչիւր համաձայն իւր ոյժերին, ընդունակութեանն ու ըմբռնուրութեանը կատարում է յօդուտ համայնքի այսինչ կամ այսինչ աշխատանքը։

Այդ աշխատանքի մէջ նշանաւոր տեղ է տրւում ֆիջիվական աշխատանքին, մտաւոր աշխատանքի հետ զուգընթացարար մանկանը հարմոնիք զարգացում տարու համար զա այնքան անհրաժեշտ է։ Եթէ «ազատ մանուկի տունը» շինած է քաղաքից դուրս, բնութեան ծոցում, անտառների գաշտերի ու մար-

գերի մէջ, կարելի է կազմակերպել ամեն կարդի երկրագործական աշխատանք—անանապահութիւն, թռչնաբուժութիւն, կաթնամսանեսութիւն, գարբնոց և այլն.: Եթէ «ա. մ. տ.» առաջ է գալիս սակաւ բարեյաշող պայմաններում, քաղաքի մէջ, յամենայն դէպո նապիտի կազմէ մի ուքրիկ տնտեսական մըլովին և ամսնուները պիտի ունենան այդ տնտեսութեան մէջ գործնական մասնակցութիւն (մաքուր և անվընաս պահեն շինութիւններն ու իրենքները, մթերքներ գնեն, խոհանոցի հաշիւը պահեն, նախաճաշ պատրաստեն, լւան ամանները, սրբիչները, շինեն անհրաժեշտ իրերը—սեղաններ, նստարաններ, գլուցներ, խաղալիքներ, ուսումնական պիտույքներ, գործիքներ, կադմեր, հսկեն կենդանիներին ու բուսականութեանը, ակւարիումներ և տերացիումների կազմեն):

Գիտական առարկանների ուսումը պիտի կատարելապէս շաղկապւած լինի մանուկների կեանքի, նրանց փորձնական պաշտը ու կատարած աշխատանքի հետ: Ուսուցումը պիտի գրւի այնպէս, որ մանուկներ առաջ դրած նպատակների լուծումն հանդիսանայ: Մանկան վրայ պիտի նայել իրեւ մի փոքրիկ ճշմարտութիւն որոնողի, զարգացնել, սնուցանել նրա մէջ որնող, հե-

տագօասոր, ստեղծագործող ողի, պահպանել փայփայել, ամրապնդել նրա մէջ զիտութեան արթնացող ծարաւը: Ուսուցչի պատականութիւնն է տալ նըրան մշտական շօշափելի օրինակ, որպէսզի մանուկն որբան կարելի է՝ ինքնագլուխ աշխատանքով հասնի հարցերի այս կամ այն լուծմանը: Ուսուցչը, միանգամ ընդմիշտ հրաժարւելով տիւրապիտողի և մանկան մտաւոր ոյժերի կարուկ կարգադրիչի գերից՝ պիտի ձգտէ զարգացնել ինքնուրոյնութիւն, արթնացնել մանկան ստեղծագործող ոյժերը և ներշնչել զիտակցօրէն վերաբերքունք գեպի սեպհական զարգացումը:

Զբաղմունիքների գասաւանդութեան ծրագիրները կազմում է ուսուցչը մանուկների մասնակցութեամբ, այնպէս որ այդ ծրագիրների իրագործումը ոչ միայն ուսուցչի, այլև աշակերտների ցանկութիւնների իրագործումն է:

Այսպիսով «Ազատ մանկան տան» մէջ ստեղծւում է մի բնական ծրագիր, որ յարմարեցւած է լինում նրա մէջ կրթուզ մանուկների կեանքին ու բնութեանը:

Վերոյիշեալ ստեղծագործող ոյժնը ազատող և մանկանը ամենաեռանդուն գործունէութեան դնող մեթոդի դորժագրութեան ժամանակ անհամեմատ

թեթևանում է դասաւանգումը անհատականացնելու հարցը: Մանուկյանի
ըստ հասակի պատահական բաժանումը
փոխարինում է նրանց ընական դասաւառութեամբ, որ որոշում է համանման
ձգումներով և նոյն աւարկաներով հետաքրքրութեամբ:

Հնդաբակապէս օգտեկրով փորձերից, կենդանի խօսքերից և ակներկն փաստերից, երեխանները կազմաւեն դասագրքեր զործադրելու անհարաժեշտութիւնից—այդ չոր ու ձանձրալի մողովաճուներից, որնց մէջ ամեն բան յանգում է սիստեմայի ու տարազի (փորձաբայի) և որոնց վերաբերմամբ մարդկի զգանք են զգում՝ սկսած աշակերտական հստարաններից մինչեւ կեանքի վերջը: Այդ դեռ չէ նշանակում, որ այս կամ այնինչ գիտութիւնը անցնելիս մանուկները չպիտի օգտեն գրքելից կամ չպիտի զբաղւեն ինքնազդութ ընթերցանութեամբ: Նրանք իրենք կարող են իրենց համար դասագրքեր կազմել, —այսպիսի զքքեր, որոնք կարող են պատկերացնել նրանց այս կամ այնինչ առարկայի վերաբերմամբ ձեռք բերած զիտութիւնը և յիշեցնել այն պայքարն ու աշխատանքը, որ գործադրելով է դիտութիւն ձեռք բերելու ճակատամարտում: Պահանով արդին կատարած կը իմի յաղթանակ-ների նշանաբանը:

(«Բազու») Ե. Ա.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՄԱՏԹԵՈՍ Ա. ԿԱԹՈՒՂՋԻԿՈՍ ԱՄԵ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մեր արդի կաթուղիկոսի աշխարհիկ կոչումն է Սիմէօն Իզմիրեան: Նա ծննել է Կ. Պօլում 1845 թւականի փետրար ամսի 12-ին: Նախական կը թութիւնը ստացել է ծխական դպրոցում, իսկ յետոյ անցել է Կում-Կափուի ո. Պօղոսի վարժարանը: Ուսումն աւարտել է 1862 թ.: Երկու տարի վարել է ուսուցչական պաշտօն Կ. Պօլսի գպրոցներում: 1864 թ. ձեռնազբեկ է սարկաւագ, իսկ 1869 թ. վարդապետ: 1870 թ. Մատթէոսը Արիմեանի հրաւերով ստանձնել է նրա անձնական քարտուղարի պաշտօնը: Իր գործունէութեան հենց սկզբեց երիտասարդ վարդապետը ցոյց է տեսլ մեծ ընդունակութիւններ և աղքային կարիքների խոր ըմբռնողութիւն:

1871 թ. նա ընտրւել է անդամ ազգային ժողովի: 1876-ին ստացել է հպիսկոպոսի աստիճանն: Երկու տարի անց նա արդէն նախագահում էր հոգեսրժիւնի, իսկ յետոյ վարում պատրիարք Քի փոխանորդի պաշտօնը: 1881 թ. նա

լոյս ընծայեց մի աշխատութիւն, որի
մէջ երեան հանեց իր պատմական ու
աստվածաբանական հմտութիւնը: Հե-
տեւեալ հինգ տարիները նախքեց ազ-
դային ժողովին և առնասարակ հասա-
րակական գործունէութեան: 1886 թ.
ընտրւեց Եղիպառի առաջնորդ, ուր իր
կարճատե պաշտօնավարութեան ընթաց-
քում ցոյց տաւ վարչական փայլուն
ընդունակութիւններ: 1892 թ. Խրիմեա-
նի հետ միաժին քէսարկւեց իրք կա-
թուղիկոսական գահի երկրորդ կան-
դիտատ: 1894 թ. թւականին ազգային
ժողովը նրան պատրիարք ընտրեց: Այդ
ժամանակը հայերի համար ամենավատ
ժամանակներից մէկն էր, և նորընտեր
պատրիարքը պիտի ենթարկւեր ծանր
փորձութիւնների: Հայ ժողովրդին
սպառնում էր գլխովին կոտորած: Պի-
տի բողոքւէր: Այդ ժամանակ իմքիրկեա-
նը մնաց իր պատօնի մէջ մինչև փոր-
ձութեան վերջը և կոտորածների ժա-
մանակ շարունակ կարուկ զարձւածք-
ներով բողոքում էր գէպքիրի դէմ, չէր
վարանում ճշմարտութիւնը զարկել «մէծ
մարդասովան» Արդիւ Համիդի երեսովը:
Իսկ յետոյ, տեսներով այդ գիմումների
անօգաւոր լինելը, դիմում էր մեծ պե-
տութիւններին: Բայց ինչպէս տեսանք,
այդ վերջին դիմումներն էլ արդիւնք
չունեցան: Իսկ սուլթանը, տեսնելով

այդ և համոզւելով որ անպատճիք է
մնալու, «անհանգիստ պատրիարքին»
աքսորեց Երուսաղէմ: Ժողովուրդը նրա
անյողողողի բնաւութեան համար Իգ-
մէրիմանին անւանեց «Երկաթէ պատ-
րիարք»: Իգմէրիմանը մնաց աքսորա-
վայրում մինչև սահմանադրութեան
հաստատումը, բայց շարունակ հետա-
քրքրում և տեղեկութիւններ էր ստա-
նում թէ Թիւրքաց Հայաստանի և թէ
ուրիշ հայրանակ վայրերի մասին: Սահ-
մանադրութեան յայտարարումից յետոյ
նա վերադարձաւ կ. Պօլիս և ցնծու-
թեամբ ընդունեց: 1908 թ. հոկտ. 23-ին
նա վերատին պատրիարք ընտրւեց, իսկ
մի ամիս անց ընտրւեց ամենայն հայոց
կաթողիկոս:

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ

Կ. Պօլիսի ազգային ժողովի նախա-
դան Մինաս Զերազը, որ ուղեկցում էր
իգմէրիմանին նրա Ռուսաստան ձանա-
պարհորդելու միջոցին, մէկն է թուր-
քանայ ամենանշանաւոր քաղաքականե-
րից և հրապարակախօսներից:

Իր հասարակական գործունէութիւ-
նը սկսել է 20 տարեկան հասակից:
Ծննել է կ. Պօլսում 50-ական թւական-
ներին: Իր թութիւնը ստացել է նուպար

Շահնազարեանի դպրոցում: Այդ դպրոցը սնուցել է մի կարգ յայտնի հայ գործիչներ:

Վաթունական թւականներին, երբ սկսեց այսպէս կոչւած «վերածնութիւնը» Թուրքաց Հայաստանում, երբ հայերը ստացան «աղքային սահմանադրութիւն», այդ դպրոցը նոր շարժման կենտրոն հանդիսացաւ:

1879 թ. Մինաս Զերազը աւարտելով իր ուսումը՝ ուսուցիչ դարձաւ: Նա միաժամանակ և պարապում էր գրական աշխատանքով, նախագահում էր Միացեալ Ընկերութիւններին (բարեգործական) և ճանաչում էր իրքի աղքային ժողովի ականաւոր անդամներից մէկը: Նա, բացի դրանից, փարում էր ներսէս պատրիարքի անձնական քարտուղարի պաշտօնը:

Երբ մեզ համար յիշատակելի 1878 թ. հայերի կողմից պատրիակութիւն գնաց Բերլինի վեհաժողովը, Մինաս Զերազը ընտրւեց իրքե այդ պատգամաւորութեան քարտուղար:

Պատւիրակները շրջեցին զբեթէ բոլոր երսպական արքայական տները՝ ցանկանալով կապ հաստատել բարձրագիր անձերի ու քաղաքագէտների հետ:

Վերադառնալով կ. Պոլիս, Զերազը տեսուչ հաստատւեց (1883 թ.) կ. Պոլ-

սի բարձրագոյն կենտրոնական վարժապահնի:

Բայց հէնց այն ժամանակւանից թուրքաց կառավարութիւնը սկսեց հաւածել նրան և նա ստիպւեց թողնել հայրենիքը ու Անգլիա գաղթել (1885 թ.): Այստեղ նա սկսեց հրատարակել իր «Armenia» անունով թերթը, որ նւիրւած էր հայկական հարցի պաշտպանութեան և սկզբում տպագրում էր անդիերէն ու ֆրանսերէն, իսկ յետոյ միմիայն ֆրանսերէն:

Տասնեհնդ տարի նա իր արդ թերթը վարեց Անգլիայում, իսկ յետոյ տեղափոխւեց Պարիս ու շարունակեց «Արտեմիա»-ի հրատարակութիւնը մինչև վերջին յիշափիտութիւնը, որ թէ նրա և թէ ուրիշ շատերի համար մի անսպասվելի երեսովթ էր:

Սահմանադրութեան յայտարարութից յետոյ նա վերագրածաւ կ. Պոլիս և ընտրւեց նախագահ աղքային ժողովի ու Միացեալ Ընկերութիւնների, որոնք նոր ըէժիմի օքերում վերստին սկսել էին իրենց գործունէութիւնը:

Մինաս Զերազը չափաւոր աղատամիտ հայեացներ ունի և յայտնի է իրեն աղքայնական և ուսասեր:

ՍՈՒԵԽԾՐԱ-

ԱՐԴԻՌԵԱՌԵՐԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱԲԿ

Քանիներորդ գարու սկիզբը ականաւոր է նրանով, որ բոլոր ապերը զարմանալի տոկունութիւն են ցոյց տալիս արդիւնաբերական աշխարհում՝ զբաւելու ապահով դիրքեր - շուկաներ, որոնք պիտի վճռեն այս կամ այն ազդի վիճակը միջազգային առևտութիւն մէջ: Առևտու-արդիւնաբերական միջազգային ցուցանանդեսները, որոնք տեղի ունեցան անցեալ զարու կերծերու և քսաներորդ գարու սկզբին, ցոյց են տալիս թէ որպիսի նսկայական քայլերով յառաջադիմում է արդիւնաբերութիւնը նոյն զարմանալի արդիւնքն է ցոյց տալիս նաև ապրանքների և արժեքների փոխանակութեան սւասմնասիրութեան ստասիսիկան: Համաշխարհային այս եռանդուն դորձունէութիւնը կարծեն թէ պատրաստուում է հիմնական փոփոխութիւններ և նորութիւններ մացնել միջազգային առևտութիւնաների մէջ: Ներկայ վաճառականութիւնը այլևս չունի տեղական բնոյթ: Նա օրբստօրէ ընդարձակուում է, օրբու-

տօրէ զբաւում է նոր նոր շուկաներ և շնորհիւ ճանապարհների հարզութակցութեան զիրութեան՝ վաճառականութիւնը զբաւել է երկագնդի բոլոր շուկաները: Եթեան են գալիս նոր մրցակիցներ, կրթւոծ, նախապատրաստած, ուժեղ մրցակիցներ, որոնց զիմագրելու համար հարկաւոր է համահաւասար զէնքերով - առևտութեան զիմութիւններով զիւնել: Հյա ազգի այն գասը, որը պարապում է առևտու-արդիւնաբերութեամբ, չափափ կարողանայ ընդդիմանալ ներսպայի կրթւած կապիտալիստներին: Զրկելով միջազգային շուկաներից, նա կը զիջի իր ուժեղ մրցակցին նաև տեղական շուկաները և մահարկը հարւած ստանալով՝ կորստեան կը մատնի իր ազգային առևտու-արժեանաբերութիւնը:

Բոլոր ազգերը եռանդով պատրաստում են այդպիսի զիմութեաների առաջնառնելու և ուժգին կերպով մրցում են զարգացնելու թէ բանալրների, թէ արհեստաւորների, թէ արդիւնաբերողների, թէ վաճառականների և թէ գործակատարների անհատական կարողութիւնները: Բոլոր ազգերն աշխատում են մասնագիտական կրթութիւններով անցնել բոլոր նրանց մտաւոր պաշարը, որոնք այսպէս թէ արնակէս աշխատակցում են հասարակութեան բարդաւած-

ման գործին: Նոյն պարտականութիւնը է ընկնում նաև հայ արդինաբերողների վրայ. մասնագիտական կըրթական հաստատութիւններ հիմնելով, հնարաւորութիւն պիտի առաջ բանւորակներին, արհեստաւորներին, վաճառահանքարիններին, մի կանոներին, գործակատարներին, մի խօսքով բոլոր նրանց, որոնք աջակցում են հայ ժողովրդի տնտեսական բարգաւաճման, կատարելագործելու իրենց անհատական կարգութիւնները:

Բոլոր ազգերի մէջ Գերմանիան կարձնում է իր վրայ առանձին ուշադրութիւն: Ֆրանս-պրուսական պատեղագիր յետոյ տեղի ունեցած մի խոր պատմական դէպք — Գերմանիայի քաղաքական և առևտնական միացումը: Այդ օրից Գերմանիան սկսում է հսկայական քայլերով առաջ գնալ թէ առետրական և թէ տեխնիքական աշխարհում: Գերմանական պետութեան այդ սքանչելի յառաջադիմութիւնը գրաւեց տնտեսագէտների ուշադրութիւնը, որոնք յատուկ սւսումնափրաթիւններով գտան այն պատճառները, որոնց վրայ հիմնած է գերմանական առևտրա-արդիւնաբերական նոր շէնքը: Գերմանիայի հզօր շէնքը, առևտրական և տեխնիքական գործունէութիւնը, միաւոր այս այստեղ ուսումնափրաթիւններում է այն բոլոր մեթոդները, որոնց միջոցով նա մեքենայօրէն գործունէութեան փոխարէն գործադրում է իր խելացի հմտութիւնը, տաղանդը, ընդունակութիւնները և զիտութիւնը:

Բնդիանուոր և մասնագիտական կըրթութիւններն արթնացըին գերմանացու ցեղական բնածին յատկութիւնները, ուրոնք և պատճառ զարձան անտեսական և առևտրական մեթոդների փայլուն ու յաջող զարգացմանը:

Առևտրի և արդիւնաբերութեան զարգացման ընդհանուր պատճառներն են՝ պետութեան միջամտութիւնը, ընդհանուր պարագաների ուսումը և մանաւանդ մասնագիտական ու առևտրական կրթութիւնները: այս վերջինս կազմում է Գերմանիայի անտեսական հզօր շենութեան հիմքը: Ոչ մի երկրում բոլոր կատեգորիայի ապագայ աշխատաւորն այնպիսի հետաքրքրութեամբ և եռանգով չի հետեւում առևտրա-արդիւնաբերութեան միջոցների և տեխնիկայի զարգացմանը, ինչպէս գերմանացի աշխատաւորը: Այստեղ նաև մի առանձին ողորութեամբ ուսումնափրաթիւնը է այն բոլոր մեթոդները, որոնց միջոցով նա մեքենայօրէն գործունէութեան փոխարէն գործադրում է իր խելացի հմտութիւնը, տաղանդը, ընդունակութիւնները և զիտութիւնը:

Առևտրական զիտութիւններն այստեղ նոյնչափ կարևոր և անհրաժեշտ են, որչափ տեխնիքական գիտութիւնները: Անտայդ է պատճառը, որ արեմտեան երրորդայի ազգերը, մանաւանդ

գերմանացիք, հոկայական քայլերով յառաջադիմում են քաղաքակրթութեան ուղիով, տարածելով ամեն տեղ կուլտուրայի պատուղները:

Ս. Դալաշեան

ԱՌԵԽՏՐԱԿԱՆ ԵՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ *

Բանկ. — Քաղաքակրթութեան բնույթոց յատկութիւններից մէկը այս է, որ աշխատանքին տալիս է մասնագիտական բնաւորութիւն: Մասնագիտութեան զարգացումը մենք տեսնում ենք ոչ միայն տեխնիկայի, այլ և առևտրի և արդինարերութեան մէջ: Ահա այդ է պատճառը, որ այսօր տեսքը և արդիւնաբերութեան աշխարհում գոյութիւն ունին մի շարք հաստատութիւններ, որոնք մասնագիտական բնաւորութիւն են կրում: Այդ հաստատութիւններից առաջին տեղը բռնում են բանկերը, որոնց մասին կը խօսենք այս անդամ:

*) Այս տեսակ բոլոր հաստատութիւնների մասին տալ տեղեկութիւններ միանգամից անկարող ենք, տեղի սղութեան պատճառով, բայց ամեն անգամ կը տանք մէկի նկարագիրը, որոնք ե կը կազմեն միմեանց յաջորդութիւն:

Բանկերը շատ հին ծագում ունին, սակայն նրանց գործունէութեան սահմանները ընդարձակել են տասնկիններորդ դարու սկզբից:

Ներկայումս բանկերը պարագում են երեք տեսակ տարբեր գործողութիւններով՝

1) Դրամ փոխ տալ նրանց, որոնք կարիք ունին և ներկայացնում են որոշ գրաւական կամ երաշխաւորութիւն, ուրեմն խօսովից վարկային գործողութիւն: 2) Փոխազգել գրամազգութիւնը մի քաղաքից մի այլ քաղաք, կամ մի երկրից մի այլ երկրու: 3) Ստանալ, գանձել յաճախորդների գրամները, վճարել նրանց փոխարէն կամ նրանց հաշելն և այլն:

Ներկայումս գոյութիւն ունին մի քանի տեսակ բանկային հաստատութիւններ, որոնք պարագում են յատուկ գործողութիւններով:

Ահաւասիկ Ռուսասահնի բանկային

հաստատութիւնների համառօտ նկարագիրը:

Պետական բանկ, որը ունի բաժանմունքներ կամ գրասենեակներ Բուռաստանի համարեա թէ բոլոր քաղաքներում:

Պետական բանկը կատարում է հետեւալ գործողութիւնները՝ թղթագրամների փոխանակութիւն և փոխելը, հին թղթագրամների փոխելը և այլն:

Այն հին թղթադրամները, որոնց
3/4-ը մնացել է և պարզ կարգացուում են
համարը, սերիան և երկու ստորագրու-
թիւնները, կամ կտրտուած թղթադրամի
մանր կտորները, որոնք նոյն թղթ-
թադրամի կտօրներ լինելով են ցոյց տա-
լիս, պետական բանկը և պետական
գանձարանը փոխուում են և նրանց փո-
խարէն տալիս են նորերը կամ նոյնչափ
արծաթ կամ ոսկի դրամներ:

Պետական բանկը կատարուում է ար-
ժէթղթերի վիճակահանութիւնը, վճա-
րուում է վիճակահանութեան ժամանակ
խաղացւած տոմսերը, թէ առնեղ և թէ
ապահովագրուած տոմսերի գումարը,
վճարուում է արժէթղթերի կուպօնները,
փոխանակուում է արժէթղթերի զեղչուում
է առետրական մուրհակներ, զանազան
արժէթղթեր և այլն:

Բացի գրանից, պետական բանկը
կատարուում է մի շարք առևտրական
գործողութիւններ՝ մասնաւոր մարդ-
կանցից ընդունում է մուրհակներ, կա-
տարուում է ստանալիքներ այդ մուրհակ-
ների երեսով, բաց է անում ընթացիկ
հաշիւններ, փոխառութիւն է տալիս
արժէթղթերի և ապրանքների գրաւա-
կանով, ընդունում է ամեն տեսակ գը-
րաւներ, ընդունում և տալիս է փոխա-
նակագրեր, փոխառութիւն է կատա-
րում շաքարի և ցորենի գրաւականով:

Պետական բանկը բաց է ամեն օր,
բացի կիրակի և տօն օրերից, առա-
ւոտեան ժամը 10-ից: (Պետական բան-
կի թիֆլիսի բաժան, տես հասցէների
ցանկը):

Ազնւականների հողային բանկը
հիմնել է 1885 թւականին և նրա նը-
պատակն է գրամ փոխ տալ աղջուական-
ներին, նրանց անշարժ գոյքի գրաւա-
կանով:

Ազնւականների բանկը գրամ փոխ
տալիս է կամ ազատ անշարժ գոյքի
գրաւականով, կամ թէ արգէն մի ան-
գրամ գրաւ գրւած անշարժ գոյքի վրայ,
միայն թէ առաջին գրաւատերով համա-
ձայնութիւնը պիտի առնել:

Եթէ ազն. կալածը անցնուում է
ոչ աղջուականների ձեռքը, ապա վերջին
սեփականատէրը պարտաւոր է վճարել
կալւածի պարտքը ծ տարրի ընթաց-
քում, հակառակ զէպքուում կալւածը կը-
ծախւի հրապարակային աճուրդով:

Որեէ կալւածք գրաւ դնելու համար
պիտի ներկայացնել գոյքի վերաբերեալ
ըոլոր օրինական փասաթթիւնը: Փոխ
տալիս է 48 տարի և 8 ամսով կամ 36
տարի և 7 ամսով: Փախատութիւն քա-
նակն է 60%: Հազար ըսւբլուց պակաս
արժեկայոց կալւածքի համար փոխա-
ռուութիւն չի կատարուում: Փոխատու-
թիւնը կատարուում է գրաւական թղթե-

ըով, որ տալիս տարեկան 5% շահ և
պարտաշչչ (ուղաշենք) է լինում վե-
ճականանութեամբ (տրայտ):

Գիւղական հողային բանկը և նրա
բաժանմունքները գրամ են փոխ տալիս
գիւղական համայնքներին, գիւղական
ընկերութիւններին և մասնառոր գիւղա-
ցիների, նրանց հողերի գրաւականով:

Հողային բանկը փոխ է տալիս գրամ
զանազան ժամանակամիջոցով, հողերի
գրաւականով:

Մամաւոր բանկերը կատարում
են ամեն տեսակ առևտրական և ֆի-
նանսական գործողութիւններ, համա-
ձայն հաստատած կանոնադրութեան:

Քաղաքային հասարակական բանկե-
րը եւ փոխարար վարկի ընկերութիւնն-
երը մուլիակների կամ այլ պարտա-
թղթերի միջոցով գրամ են փոխ տալիս
իրենց յաճախորդներին և առնասարակ
նրանց, որոնք պարագում են առևտրով
կամ արդիւնաբերութեամբ:

Ահաւասիկ սրանք են բանկային
հաստատութիւնների տեսակները: Բացի
վերոյիշեամերից կան նաև լինայողական
գանձարաններ, որոնք ընդունում են
գրամ, 25 հոդա-ից մինչև 50 բուրլի, իսկ
մի մուրզով գրաւի ընդհանուր գումարը
1,000 բուրլուց աւելի չպիտի լինի:

ԴԻՀՂԱԿԱՆ ԲԱՆԿԵՐ

Գիւղատնտեսական ընկերութիւնն-
երը ահազին օգուտ են տալիս գիւղա-
ցիներին, ծանօթացնելով նրանց գիւ-
ղատնտեսութեան զարգացման հետ,
գիւղատնտեսական տեխնիկայի կատա-
րելագործութիւնների և նորութիւնների
հետ, տալիս են օգասակար խորհուրդները
և այլն, և այլն: Սակայն այդ բոլորը
անկարելի է անել առանց միջոցների:
ճարկաւոր է գիւղացիներին նախ ազա-
տել վաշխառուներից, ապա թէ կազ-
մակերսկան զանազան տեսակ գիւղական
միութիւններ: Այդ նպատակով հիմնում
են գիւղական բանկեր կամ մանր վար-
կի ընկերութիւններ: Որուաստանու և
գոյութիւն ունեցող բոլոր վարկային
ընկերութիւններից ամենանպատակա-
յարմարը մանր վարկի ընկերութիւն-
ներն են, որոնց առաւելաւութիւնները հե-
տևեալիներն են:

1) Մանր վարկային ընկերութիւն
կազմելու համար, պետական բանկը 13
տարի ժամանակով տալիս է հիմնական
գրամագլուխ 1,000-ից մինչև 3,000 ր.:
Բացի հիմնական գրամագլուխց պետա-
կան բանկը բաց է անում նոյն ընկե-
րութեան համար կարճ ժամանակայ
գարկ մինչև 10,000 բուրլի:

Այսպիսով թէ հիմնական դրամագլուխը և թէ վարկը միանգամայն ապահոված է:

2) Ընկերութեան անդամ կարող է լինել ամեն ոք, առանց անդամագնարի կամ բաժնէքնարի: Այսպիսով առանց իրենց փողի քաղլը բանալու, նրանք կարող են անդամագրւել և պարտաւորւմ են միայն, որ բոլոր անդամները իրենց գործով փոփաքարձարար պատասխանատու են ընկերութեան պարտքերի դիմաց:

3) Ընկերութեան անդամագրւելը և ընկերութիւնից դուրս դալը միանգամայն պատ է:

4) Ընկերութեան կանոնագրութեան համաձայն, որ անդամների ընդունելու թիւնը կամ մերժելը կախված է միւս անդամների կամքից:

Այս հիմնական կէտերից պարզ երեսում է, թէ մանր վարկային ընկերութիւնները որպիսի առաւելութիւններ ունին համայնական կամ խնայողական գանձարանների դիմաց: Մանր վարկային ընկերութիւնը հնարաւորութիւն է տալիս նոյն իսկ ամենաչքաւոր գիւղացուն օգտուելու գիւղական բանկերից, աժան տոկոսով փոխ առնելով իր գիւղանտեսական կարիքների համար: Իսկ վերոյիշեալ չըրորդ կետը հնարաւորութիւնը է տալիս նոյն պահելու դիւ-

դական տպրուկներին, մի չարիք, որ Դամոկլեան սրի նման կախած է խեղճ գիւղացու զլիքին:

Պարզ է, որ մեր գիւղերում պիտի աշխատենք հիմնել մանր վարկի ընկերութիւններ, որոնք ահագին բարիք են անում գիւղացիներին, տալով նրանց միջոցներ և ազատելով աղքուկներից:

Բայց ի՞նչպէս հիմնել մանր վարկի ընկերութիւնները:

Եթէ որևէ զիւղում կամ մի քանի հարեան գիւղերում մի խումբ գիւղացիներ (ոչ պակաս 20 հոգուց) ցանկութիւն են յայտնում մանր վարկային ընկերութիւն կամ զիւղական բանկ հիմնելու, ապա առանց գասակարգի խըստըութեան կազմում են մի ընկերութիւն, որի անդամները պարտաւորում են փոխարձ պատասխանաւորութեամբ իրենց գործով, ընկերութեան պարտքերի դիմաց: Ի՞նչպէս սատցինք, ոչ ոք անդամականը չի տալիս, այլ միայն ստորագրում է խնդրի տակ և յանձն է առնում ընկերութեան բոլոր գործերի պատասխանաւորութիւնը:

Նախ քան ընկերութիւն կազմելը և ստորագրութիւն ժողովելը, պիտի ձեռք բերել մանր վարկի ընկերութիւնների կանոնագրութիւնը (որ կարելի է ստանալ պիտական բանկի բաժանմունքի մանր վարկի վերատեսչի մօտ (ԱՀԾՈՅԵ-

торъ мелкаго кредита), կարդալ, ժանօթանալ և ապա թէ խնդիր դրեւ ներկայացնելով նաև ընկերութեան կանոնադրութիւնը:

Ամեն տեսակ խորհուրդներ, խնդրի պատճենը, կանոնադրութիւնը, գործին վերաբերեալ բանկները և այն կարելի է ստանալ դարձեալ մանր վարկի վերաբեսչեց, դրա համար կը բարի կամ զիմել անձամբ կամ նամակով հետևեալ հասցէով^{*)} Տիֆլու^{*)}, ուժութեան ուժութեան ուղարկել:

Վերաբեսչը ձեզ կուղարկի բոլոր անհրաժեշտ թղթերը և խորհուրդները, այնուհետեւ խնդիրը գրելով և ստորագրելով (հիմնադիր անդամների անունները), ուղարկում էք նահանգտպակեալն, Այդ խնդիրները ազատ են գրօշմատութեց:

Եթէ թոյլառութիւն կը ստացի, ապա հրատիրում էք ընդհանուր ժողով, կարդում էք հաստատւած կանոնադրութիւնը և յարտարարում էք ընկերութիւնը բացաւած: Այնուհետեւ անցնում էք վարչութեան երեք անդամների և քննիչ

^{*)} Կամ ուր որ պետք բանկի սահմանը կայ:

յանձնաժողովի ընտրութեանը: Պիտի աշխատել, որ վարչութեան անդամները ընտրւեն գիւղական վաշխառուներից:

Ընկերութեան բացւելու օրից, պետական բանկը տալիս է 6 տոկոսով և մուրհակով 1,000 ըութիւն որպէս հիմնական վրամագլուխութիւն: Այդ ընկերութիւնների աւելինմանը բարագրեց կը գտնէք մեր աշխատութեան մէջ՝ «Գիւղատնեսական կօպերատիւ ընկերութիւն» վերնագրով:

ՀԱՐԿԵՐ ԵՒ ՑՈՒՐՔԵՐ

Դրօշմատութք (Гербовий сборъ).

Դրօշմատութքը երկու տեսակ է՝ հասարակ և համեմատական: Հասարակ դրօշմատութք հաւաքելու համար գործ էն ածում 5 կ. 10 կ. 15 կ. 40 կ. 60 կ. և 1 ր. մարկաներ և դրօշմակիր (гербоվայ) թղթեր 60 կ. և 1 ր.:

Համեմատական դրօշմատութքը երկու տեսակ է. 1) Մուրհակախն-իւրաքանչիւրը 100 ըութուց. 15 կազ. 2) Վաւելերազրի կամ կապակցութեան, որը նոյնպէս երկու տեսակ ունի՝ 1) բարձր երբիւրաքանչիւր 100—1000 ր. վաւերաթղթի համար առնւում է 50 կ., 1000—10000

բ. և աւելի գումարներից 5 ր., պակաս հարվերներն ու հազարները լրիւ հաշւելով, և 2) ցածր տեսակի, երր իւրաքանչիւր 100—1000 ր. գաւերագրից առնւում է 5 կ., և 1000 ր.—10000 ր. և աւելի գումարներից 50 կ. պակաս հարվերներն ու հազարները հաշւելով լրիւ:

Ինչպէս հասարակ, նոյնպէս և վաւերագրերի (ոչ մուրհակների) տուրքը կարելի է վճարել գրօշմանիշերով (մարկա) և գրօշմակիր թղթերով. օրինակ խնդիրը կարելի է գրել գրօշմակիր թղթի վրայ և պատասխանի համար հետո ուղարկել դարձեալ գրօշմակիր թուղթ. նոյնպէս չի արգելում պայմանագրեր գրել հասարակ թղթի վրայ փակցնելով պահանջած քանակութեամբ մարկաներ (ի միջի այլոց ասենք, որ ընտանիկան բնաւորութիւն կրող պայմանագրերի վրայ որի գումարը 20 ր. աւելի է, մարկաներ չի փակցըլում):

Եթէ պայմանը կապում է պաշտօնաւոր անձի, օրինակ նօտարի մասնակցութեամբ, այդ դէպքում տուրքը կարելի չէ վճարել մարկաներով, ինչ գումարի էլ հասնելու լինի:

1 ր. 25 կ. գրօշմատուրք է վերցւում 1) այն խնդիրներից, յայտարարութիւններից, գանգատներից, որոնք տրում են ա) ընկերութիւնները հիմնե-

լու և նրանց կանոնագրութիւնները փոխելու, բ) ֆաբրիկաներ և գործարաններ բաց անելու: Այդպիսի խնդիրների պատասխանի համար պէտք է ուղարկել նաև 1 ր. մարկա: 2) Ամեն տեսակ արհեստ և պարապմոնք ունենալու թոյլտութիւն ստանալիս: 3) Դատաստանական պալատներն ու Կառավարչական Սենատն այս հիմնարկութիւններին ուղղած զանգատներից ստորին ինստանցիաների դէմ: 4) Ամեն տեսակ հաւատարմաթղթերից: 5) Կատակներից: 6) Պայմանագրերից և այնպիսի առետրական ձեռնարկութիւններից, որոնց գումարը չտութեամբ որոշելը սկսելիս անկարելի է լինում: 7) Առուգանքի պայմանագրերից, երբ գումարը 50 բուր, աւելի է: 8) Այն վկայագրերից ի անդորրագրերից, որ տալիս են պետական և ուրիշ վարկային ընկերութիւնները պահպանութեան վերցրած (բացի ընթացիկ հաշիվներից) 1000 ր.—2500 ր. գանձի կամ արժեքաւոր իրի համար: 9) 300 ր. ոչ աւելի գումարի արժողութիւն ունեցող կալւածքի գնման թղթից (եյպահ էր փոստ): 10) Կրակից պալանվող ընկերութեան տւած զօլիմներից ու անդորրագրերից, որոնց պահպանութեան պրէմիան 10 ր.—300 ր. է: 75 կոպէէ, դրօշմատուրքի ենթարկում են՝ 1) Ապմինխատրացիական հիմ-

նարկութիւնները և պաշտօննեաներից
ներկայացրած խնդիրները, յայտարա-
րութիւնները, զանգատները, սասարկու-
թիւնները և այլն, նոյնպէս որանց
կցած դործի պատճէնները: 2) Խնդիր-
ները, բողոքները, բացարձութիւնները,
առարկութիւնները, և այլն (բացի պատ-
ճէններից), որոնք ներկայացւում են
ընդհանուր դատաստանական տեղերն
ու առևտրական դատարանները: 3) Այդ-
պիսի ինդիբների, յայտարարութիւն-
ների և այլն ամեն տեսակ պատասխան-
ները, պաշտօնական տեղեկութիւնները
(սուրակա), վկայականներն ու ամեն
տեսակ գտւեցագրերը (ստուգիա):
4) Ապահովագրութեան անդորրագրերը,
երբ պահպանութեան յանձնած կայքի
արժեքը 300 ր. աւել է և հասնում է
մինչև 1000 ր.:

Քան կոպէկանոց դրօշմատուրքի
առնուում է: 1) Պատճէնների իւրաքան-
չիւր թիրթից, որոնք ըստ օրինի ներ-
կայացւում են խնդրի հետ ընդհանուր
դատաստանական տեղերն ու առևտրա-
կան դատարանները: 2) Տոմսակներից,
հաշիւններից, անդորրագրերից, արտի-
մենտի բնաւորութիւն ունեցող գրքուկ-
ներից (թատրոնական, երկաթուղարին,
յիշատակարանական), երբ նրանք վաճառ-
ուում են ամբողջ տարին 50 ր., աւելի
գումարով:

15 Կոպէկանոց դրօշմատուրքի են-
թարկուում են՝ 1) Ռոճիկ, կենսաթոշակ
և այլն 50 ր. աւելիք գումար ստանալու
համար աւած հաւատարմաթղթերը: 2)
Գինի, սպիրտ և ծխախոտ ուրիշ տեղ
փոխագրելու վկայականները: 3) Ապա-
հովութեան յանձնած կայքը երբ, նա 300
ր. աւել արժէ: 4) Գաւառական և շէ-
նային կառավարութիւնների գործերից
քաղաքածները 200 ր. աւելիք գումար-
ների:

Տասը կոպէկանոց դրօշմատուրքի
ենթարկուում են՝ 1) Ապահովութեան
պօլիսներն ու անդորրագրերը 3-9 ր.
պըէմիայով; 2) Փաստաթղթերը 50 ր.
ոչ աւելի: 3) Գաւառային և շէնային
կառավարութիւնների գործերից քաղ-
աքները 100-200 ր. գումարի:

Հինգ կոպէկանոց դրօշմատուրքի
ենթարկուում են՝ 1) Հաշիւնները, ստա-
ցականները և այլ նմանօրինակ թղթեր,
երբ նրանց գումարը 5 բուբլուց աւել է
և չի անցնում 50 ր.: 2) Տոմսակները,
աբոնիմենտի բնաւորութիւն կրող գըր-
քոյները, երբ նրանք տըւում են ամ-
բողջ տարին 50 ր. գումարի:

Մուրհակալին թղթերը գործ են
ածուում միայն մուրհակներ գըրելու հա-
մար:

Կապակցութեան բարձր տեսակի
տուրք վերցուում է՝ 1) Կայքի, ստաց-

ւածքի վերաբերեալ կապակցութիւններից, որոնց զումարը 50 ր. աւել է, այն է այնպիսի պայմանագրերից, որոնցով իրաւունք է տրւում շարժական և անշարժ կալածածքներ զնելու, տիրելու, օգտւելու, զրաւ զնելու, քրէնելու և այլն: 2) Պայմանագրերից, որոնցով կաղմակերպում են ընկերակցութիւններ, կապալով վերցով են գործեր, յանձնեն առնեւում մատակարարել կարելով իրեր, և այլն: 3) Ալյուաներից, պայերից, օրինագիրներից, զրաւաթղթերից և այլն: 4) Ապահովութեան պօլիմներից և անդորրագրերից, որոնց ապահովութեան պրէմիան 300 ր. բարձր է:

Ստորին տեսակի տուրքի ենթարկւում են՝ ամեն տեսակ զումարի բոլոր կապակցութիւնները՝ 1) Վաճառականական գործուղութիւնները աշղանք զնելու—ծախելու մասին (առևտրական նամակները, հաշիվները, հեռագիրները, յիշատակարանները և այլն: 2) Գորքը վաճառելու նախնական կապակցութիւնը (запродаյա): 3) Ապրանքներ տեղափոխելու համար նաւեր վարձու վերցը նելու կապակցութիւնը: 4) Պայմանաթղթի վրայ արած մակագրութիւնը, որով պարտաւորաթուղթը յանձնուում է ուղիւնքն:

Դրոշմատուրքից ազատ են հետեւալ թղթերը. 1) Զինուրակոչութեան: 2)

Դատաստանական քրէական բաժնի և բալոր այն գրլեցերի, որոնք վերջանում են քաղաքային հաշարաբար զատաւութիւնների, զեմսկի նախանիկների և նահանգական զատարանի գաւառական անդամների ձեռքով: 3) Խնամակալական որոշամմաները: 4) Ծողովրդական կրթութեան վերաբերեալ թղթերի մեծ մասը: 5) Գիւղական աշխատանքներ վարձելու պայմանագրերը, բանւորական գրքերը, տետրակները: 6) Չեկերը: 7) Հաշիւները ու ամեն տեսակ վաւերաթղթերը, որոնց գործարը 5 ր. աւել չէ: 8) «Կարմիր-Խաչի»: 9) Խելոցուղներին ազատող» և այլ բարեգործական հաստատութիւնների թղթերը:

Այս պայմանները չկատարուները հնթարկւում են առևգանքի տասն անգամ աւելի կատարած զեղծման չափից:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՀԱՐԿԵՐ

Այս հարկերից ազատ են՝ 1) հասարակական, քաղաքային և գիւղական և փոխատու խնայողութեան զանձարանները, նոյնպէս բոլոր գիւղական վարկային հիմնարկութիւնները և սպառողական ընկերութիւնները, որոնց հիմնական դրամագլուխը 10000 ր. աւելի չէ: 2) Աշխատաւորական ընկերու-

թիւնները (արտէլ) 2-ից ոչ աւելի
բանուրներով և 10000 ը. ոչ աւել գրա-
մագլուղ: 3) Առողջապահական և բժշ-
կական հիմնարկութիւնները: 4) Գրա-
դարաններն ու ընթերցարանները: 5)
Գրքերի հրատարակչական ընկերութիւն-
ները: 6) Բարեգործական նպատակով
եղած ձեռնարկութիւնները: 7) Հասա-
րակական տեսարանները, թատրոններն
ու զւարճութեան վայրերը: 8) Գիւղա-
տնեսական արագի գործարանները: 9)
Ուսկու, արծաթի և լուսնոսկու մշակու-
թիւնները: 10) Արհեստանոցները, ուր
աշխատում է տէրը մի վարձու բանուր-
ուղ, և չորսից ոչ աւելի բանուրով բեռ-
նակութեամբ պարապոնները: 11) Զար-
շինները, որոնք տարածում են ժողովրդի
մէջ կեանքի հարկաւոր արժանագին ի-
րեր ու գրքեր. նոյնպէս ծաղիկներ,
բայսեր, երգող թաշուններ վաճառողները:
12) 500 ը. ոչ աւելի զումարի կապա-
ները: 13) Գիշերելու համար և
կահաւորւած սենհակներ (առանց սե-
ղանի) պահողները, եթէ մէկ տէրը 6-ից
աւելի սենեակ չի ունենում: 14) Իր
իսկական գործարանի արտադրութիւն-
ները մեծ և փոքր քանակութեամբ
ժախողները՝ եթէ այդ առևտուրը կա-
տարւում է հէնց գործարանում: 15) Ա-
մենայն տեսակ առևտուր 14 օրից ոչ
աւել տեսող տօնավաճառում: 16) Բ.

կարգի գործակատարները, որոնք գոր-
ծարան չեն կառավարում, այլ հանդի-
սանում են որպէս օգնական գլխաւոր
գործակատարի:

Պարապմնանքի հարկը երկու տեսակ
է լինում: 1) միմական և լրացուցիչ:

Հիմնական հարկ վերցում է պա-
րապմնանքի վկայագրերի միջոցով, իւ-
րաքանչիւր առևտուրական և արհեստա-
ւորական հիմնարկութիւնից կամ առան-
ձին զբաղմունքից: Այս նպատակով
ամբողջ Առևտուսանում առևտուրական և
արդիական առևտուրական հիմնարկութիւնները
բաժանւած են զառակարգերի:

Լրացուցիչ հարկ վերցում է. 1)
Բաժնետոմսերով և այլն կազմած ձեռ-
նակութիւններից, որոնք ենթարկում
են հասարակական հաշվետութեան. ա)՝
դրամագլուխց և բ)՝ զուտ արգիւնքից ո-
րոշեալ տոկոս: 2) Այն արգիւնքի բա-
կան ձեռնարկութիւններից, որոնք ա-
զատ չեն լրացուցիչ հարկից ա) բաժա-
նելու տուրք (ռաքլաճօնուն ըօօրъ) և
բ) տոկոսային տուրք զուտ արգիւնքից,
որ գերազանցում է այդ ձեռնարկութեան
համար վճարած հիմնական հարկի 30
անգամից.

Առևտուրական ձեռնարկութիւնները
երկու կարգի են:

Ա. Կարգ. Տուրք—500 ը.—և 30 ը.
ամենայն տեղի պահեստների համար:

Բ. կարգ. Տուբք—20 թ.—կ 6 թ.
քաղաքից գումար դանարած պահեստների
համար:

Արդիւնաբերական ձեռնարկութիւն-
ները բաժանւում են հետևեալ դասա-
կարգերի. ա. դասակարգ—1500 թ.—
թ.—1000 թ. գ. —500 թ. դ.—150 թ. ե. —
50 թ. ամենայն տեղ:

Տուբքեր (բուբլիներով).
Քաղաքներում.

Դասակ. Մայրաքաղ. Ա.կ. Բ.կ. Գ.կ. Դ.կ.
Զ 30 թ. 25 թ. 20 թ. 15 թ. 10 թ.
է 15 > 12 > 10 > 7 > 5 >
Է 6 > 5 > 4 > 3 > 2 >

ՆՕՏԱՐԱԿԱՆ ԾԱԼՔԵՐ

1) Ամեն մի նօտարական արձա-
նազութիւն (ակտե) կազմելու համար
մինչև 500 թ. գումարը պէտք է վճարել
2 թ. 500-ից 1000 թ. 3 թ. 1000-ից ա-
ւելի գումարին 4 թ. և բացի այդ պայ-
մանազից իւրաքանչիւր 10 թ.—1 կ.:

2) Մուրհակներ վաւերացնելու և
բողոքներ գրելու համար 500 թ. գու-
մարը—50 կ. իսկ նրանից աւելի—1 թ.
և բացի այդ մուրհակագումարի իւրա-
քանչիւր 10 թ.—1 կ.:

3) Պայմանազրեր վաւերացնելու
համար մինչև 500 թ.—1 թ. 500—1000
թ. 1 թ. 50 կ. 1000-ից բարձր գումարին
2 թ. և բացի այդ պայմանազրի մէջ

նշանակւած իւրաքանչիւր 10 թ. 1 կոպ.:
Երբ արձանազրութեան կամ պայմա-
նազրի գումարը ձատիւ որոշել չի կարելի,
այդ գէպքում պէտք է վճարել այնքան,
որքան վճարում է սովորաբար 1000 թ.
արձանազրութեան համար:

4) Պատճեններ վաւերացնելու հա-
մար պէտք է վճարել առաջին թերթին
25 կ., հետեւեալ իւրաքանչիւր թերթին
10 կ. (թերթ հաջում էն 25 տողը):
Ստորագրութիւն վաւերացնելու համար
վճ. է 10 կ. իւրաքանչիւր ստորագրու-
թիւն:

5) Հաւատարմաթղթեր (ՃՈՅՔ-
ԽՈՏԵՎՈՒԹԻՒՆ թղթեր (мировая
запись)) և միջնորդական թղթեր (тре-
тейская запись) վաւերացնելու համար
պէտք է վճարել առաջին թերթին 1 թ.,
հետեւեալ թերթերին 30-ական կոպէկ:

6) Փաստաթղթերի ներկայացնելու
ժամանակը վաւերացնելու համար—25
կոպ.: Մէկի կողմից մի ուրիշն յարտա-
րակութիւն տալու և զրա մասին վկա-
յալթուղթ տալու մասին 50 կ.:

7) Ամենայն տեսակ թղթեր նօտա-
րական զրքի մէջ անցկացնելու ժամա-
նակ իւրաքանչիւր տողի համար պէտք
է վճարել 2 կոպ.:

8) Պետական գանձարանից կենուա-
թոշակ ստացողի կենուանութիւնը վկա-
յւլու համար 3 կ., երբ կենուաթոշակի

գումարը տարեկան 30 լ. աւել չէ, 10 կ., եթե գումարը հասնում է մինչև 300 լ. և 20 կ., եթե 300-ից, աւել չի նույնիշտ դէպքերում նոյնպիսի վկայութեան համար առնեում է 50 կոպ.:

9) Նօտարների մօտ վաստաթղթեր պահ տարու համար իւրաքանչիւր թըրդին պէտք է վճարել ամսական 25 կոպ., իսկ փակ ծրաբներին ամսական 50 կ.:

10) Նօտարական որ և է արձանադրութեան ժամանակն իմանալու և այդ մասին վկայագիր ձեռք բերելու համար վճարելու է 50 կոպ.:

11) Նօտարական գրասենեակից գուրս կատարած դործորութիւնների համար բացի վերոյիշեաներից պէտք է վճարել մայրաքաղաքներում 3 ը., նաև հանգական քաղաքներում 2 ը., գաւառական քաղաքներում 1 ը., իսկ եթէ հարկաւորութիւն լինի քաղաքի սահմաններից դուրս ևս տանել, այդ գէպքում պէտք է վճարել նաև ճանապարհածախար թէ գնալիս և թէ վերադառնալիս, իւրաքանչիւր վերստին 10 կ. իսկ ուր որ կայ երկաթուղի, այնտեղ պէտք է տալ Բ. կարգի առմսակի արժեքը: Բացի ճանապարհածախար պէտք է վճարել նաև օրավարձ—մայրաքաղաքներում 5 ը., նաև ճանգական քաղաքներում—3 ը. և գաւառական քաղաքներում 2 ը.:

Դրամական համեստութիւն.

Ազգերը և նրանց դրամական մի- ութիւնը.	Ուռւու-		Փրանս		Դնել.	
	Բ.	Կ.	Ֆր.	Ա.	Մթ.	Պ.
Առուսաստան —						
Ըուլը.	.	.	1	—	2	66
Անգլիա—Փունտ	9	46	25	22	20	43
Անգլիանդ	—	37	1	—	—	81
Ֆրանսիա—Փը- րանկ	—	47	1	25	1	—
Գերմ.—մարկ	—	—	—	—	—	—
Աւստր.—Ռենդ.	—	—	—	—	—	—
Հրոն	—	39	1	05	—	85
Ամերիկ.—օլլար	1	94	5	19	4	20
Եազոնիա—իէն	—	97	2	58	2	10
Տաճկաստան —						
պիտամր.	.	.	09	—	24	—
Պարսկ. 1 թում.	—	—	—	—	—	—
—10 նոր դռան	—	—	—	—	—	—
—100 սենար	—	—	—	—	—	—
—1000 բին.—	—	—	—	—	—	—
10000 դին.	3	32	8	83	7	17
1 ն. զրան	—	—	33	—	88	71
1 սենար	—	—	03	—	07	07

Վերընկարի, մատնաշափերի և սան-
տիմությանը համեմատական
աղիպակը:

Վերը.	Մատն.	Սանտ.	Մանտ.	Մատն. Վերը.
-------	-------	-------	-------	-------------

1 — 1,75 — 4,44	1 — 0,39 — 0,22
2 — 3,50 — 8,89	2 — 0,79 — 0,45
3 — 5,25 — 13,33	3 — 1,18 — 0,67
4 — 7,00 — 17,78	4 — 1,57 — 0,90
Նախիջևան (Երևան. նահ.) 9,739, մեծ. հ.
Նոր-Բայազեդ (Երև. նահ.) 9,872, մեծ. հ.
Նովօրոսիյսկ (Սևծով. շրջ.) 44,043, մեծ.
ոռւս.

Նուխի (Գանձ. նահ.) 29,884, մեծ. լիզ.
Օգուլգէթ (Քութ. նահ.) 5,532, մեծ.
գուրիացիք։

Օրգուրաթ (Երևան. նահ.) 5,102, մեծ.
հայ և թուրք։

Պետրովսկ (Խաղոս. շրջ.) 17,968, մեծ.
ոռւսներ։

Փոթի (Քութ. ն.) 10,460, մեծ. մինդել.
Պետրովսկ (Թէրիք. շրջ.) 26,773, մեծ.

ոռւս։

Սղնախ (Թէփ. նահ.) 8,994, մեծ. վրաց.
Սուխում (Սուխ, շրջ.) 7,998, մեծ. ոռւս.

մինզել.

Թէլաւ (Թէփ. նահ.) 11,810, մեծ. հայ և
վրացի։

Թէմիլ-խան-Շուրա (Գալատանի շրջ.)
10,685, մեծ. լեզզ. և ոռւս.

Թէմիլիկ (Կուբ. ողջ.) 1,7378, մեծ. ոռւս.
Թէֆլիս (նահ. քաղ.) 244,060, մեծ. հայ.
վրացի և ոռւս.

Շամախի (Բաղ. նահ.) 22,692, մեծամ.
թուրք, հայ և ոռւս։

Շուշի (Գանձ. նահ.) 33,825, մեծ. հայ
և թուրք։

Երևան (Երևանի նահ.) 30,670, մեծ.
հայ և թուրք։

ՀԱՅԵՐԻ ԹԻՒԾ ԿՈՎԿԱՐԱԿԱՐ

Բագւայ նահանգում	.	.	89
Գանձակի	.	.	294 լ
Երևանի	.	.	506 լ
Թէփլիսի.	.	.	221 լ
Կարսի շր.	.	.	83 լ
Կովկասի Արևմտեան մասում	.	.	21 լ
» Հիւսիսային	.	.	29

Ընդամենը = 1,240,000

Այսպիսով, համաձայն վերջին վիճա-
կադրութեան, հայերի թիւը Կովկասում
հասնում է մօտ 1,250,000-ի, չհաշւած
Ռուսաստանի հայերը, ինչպէս Նոր-Նա-
խիջևան, Ռուսովի և այլն։

ՍՏԱՏԻՍՏԻԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ոսկու արտադրութիւնը

1907 թվականի մայիսի է 2,006,640,
000 ֆրանկ ոսկի, հետեւալ ստորաբա-
ժանութերով՝

Եթեղբարքը Ֆրանկ

Միացեալ-Նահանգ. (Ամեր.)	446,000,000
Տրանզակալ .	669,000,000
Աւստրալիա .	392,080,000
Ռուսաստան .	111,800,000
Մեքսիկա .	89,440,000
Կանադա .	49,400,000
Չինաստ., Եազոն., Կորէա .	59,800,000
Ռուբենիք .	58,200,000
Հնդկաստան .	52,000,000
Աֆրիկա (արևմտան) .	29,112,000
Աւրի երկիրներ .	119,000,000
Տրանզակալի ոսկու արտադրութիւնը աւելացել է 45 միլիոն ֆրանկի 1907 թւականին.	

Մեծ պետութիւնների շարժական հա-
րստութիւնը

Մեծ-Բրիտանիա .	130 միլիարդ
Միացեալ-Նահանգ. (Հիւ- սիսային Ամեր.) .	115 „
Ֆրանսիա .	100 „

Գերմանիա .	75 „
Ռուսաստան .	25 „
Աւստրօ-Ռւսդարիա .	22 „
Իտալիա .	12 „
Բելգիա .	12 „

ԴԱԴՈՎԱԿԱՆ ՈՒԹԵԱՆ ՇԱՐԺՈՒԹԸԼ

Դադթականութիւնը գէպի Ամերի- կայի Միացեալ-Նահանգները սկսած 1821 թւականից հետեւալ պատկերն է ներկայացնում:	
1841—50 .	1,713,251
1851—60 .	2,598,214
1861—70 .	2,314,824
1871—80 .	2,612,191
1881—90 .	5,246,613
1891—1900 .	3,844,420
1901—1907 .	6,219,160
Հաշւերով նաև 1821-ից մինչև 1841 թւի գաղթածները, կըստանանք մի խոշոր թիւ—25,491,237 հոգի:	
Փաղթականութեան ամենամեծ տո- կոսը սկզբում տևել է Անգլիան (Անգ- լիա, Իրլանդիա և այլն). .	30%/ ₀
Գերմանիա .	21%/ ₀
Իտալիա .	10%/ ₀
Աւստրօ-Ռւսդ. .	10%/ ₀
Ռուսաստան .	8%/ ₀
Սկանդինավար .	7%/ ₀
Ֆրանսիա .	20%/ ₀

1906—1907 թւին գաղթել են գէպի Միացեալ . Նահանգները ընդամենը	1,285,300 գաղթական, որոնց մեծ մասը՝
338 հազար գաղթել են Աւարո-Ռևգա- րիայից, իսկ 285,700 հոգի գաղթել են Խոտալիայից, այնուհետև՝	259,000
Բուլգարներ և Սերբ.	11,000
Յոյներ . . .	36,500
Ռումանացիք	4,400
Երոպ. Տաճկաստանից . . .	21,000
Իբրերներ . . .	15,000

ԹԵԹԵՒ ՍՏԱՏԻՍՏԻԿԱ

—Երկրագնդի վրայ մի ըոաբում
սպառում է 3 միլիոն լուցին:

—Երկրագնդի վրայ ներկայումս
գոյութիւն ունին 13,000 տեսակի տար-
բեր նամակագոշմներ (մարկա):

—Ժմանացոյցը սապկացած է 98
կտորից և շինելու համար պահանջում
է 2,000 ից աւելի գործողութիւնն Նլա
գլխաւոր անիւր մի տարւայ ընթացքում
անում է 460 պտոյտ, կենտրոնական ա-
նիւր—8,760, երրորդ անիւր—70,080,
չորրորդ անիւր—525,600, և վերջապէս
խուսափող անիւր—731,860 է ճոճում:

—Երկրագնդի $\frac{1}{10}$ մասը գեռ և
ուսումնատիւած չէ:

—Նոյն հաստութեան կրկաթէ, պը-

դնձէ և ոռկէ լարերը ունին տարբեր
դիմացկունութիւն, այսպէս եթէ ոսկեայ
լարը դիմանում է 150 ֆ. ծանրութեան,
նոյն հաստութեան պղնձի լարը կարող
է կրել 302 ֆ., իսկ պարզ երկաթէ լա-
րը—549 ֆ.:

—Քրիստոնէութեան երեք գլխաւոր
ճիւղերը ունին հետեւյնների հետեւեալ
քանակութիւնը. կաթոլիկութիւնը—250
միլիոն, բողոքականութիւնը—180 մի-
լիոն, իսկ յունական և արևելեան հկե-
ղցին—110 միլիոն:

—Ալտանդեան ովկիանոսի 1,000
լիոր ջուրը ($12\frac{1}{2}$ լիտրը=1 վերյօնի)
կուրօշիալով տալիս է 81 ֆունտ աղ:
Խաղաղ ովկիանոսի նոյնչափ ջուրը՝ 79
ֆ. իսկ Մեռեալ ծովի հազար լիտր ջու-
րը տալիս է 187 ֆունտ աղ:

—Երկրագնդի վրայ շահագործւող
հանքերում աշխատում են մօտ 5 մի-
լիոն բանտու:

—Բրազիլիան (Հար. Ամեր.) 1907
թւին արտադրել է 60 միլիոն գրւան-
քա կակաօ:

—Մեռնողների ստատիստիկան ցոյց
է տալիս, որ յանկարծաման եղողներից
8-ը տղամարդ է, իսկ 1-ը կին:

—Եապոնիան ներկայումս արտահա-
նում է տարեկան 11 միլիոն նովհար:

—Իսպանիան միակ երկիրն է, ուր
կան բազմաթիւ սապատաւոր մարդեկ:

— Եապոնիայի ազգաբնակութեան
ինսուլն տոկոսը գրագէտ է:

— Կորէայի 20 միլիօն բնակիչները
ծխում են օրական միջին թւով՝ 840
միլիօն ծխախոտ:

— Երկրագունդը տարեկան միջին
թւով՝ 2,172 նաև է կորցնում, որոնցից
94-ը անհետանում են վերջնականագէտ,
առանց հետք անդամ թաղնելու:

— Երկրագոնդի վրայ ներկայումս
գործածելող հետախօսների թիւը հաս-
նում է 9,500,000-ի, որից 7 միլիօնը
գտնում է Ամերիկայում, իսկ 2 մի-
լիօնը Եւրոպայում:

— Աւստրիայի մայրաքաղաք Վէն-
սայի փողոցներում շրջում են մօտ
30,000 մուրացկաններ:

— Զւիյցերիան ճանապարհորդներից
տարեկան ստանում է մօտ 300 միլիօն
ֆլ. հկամուտ:

— Շամպանեայի շիշը, նախ քան
կատարելագէտ պատրաստելը, անցնում
է 45 ձեռքերից:

— Խաղաղ ովկիանոսի տարածու-
թիւնը հաւասար է 55 միլիօն քառակ.
մղնի, այսինքն նրա մակերեսյթը հա-
ւասար է Երկրագոնդի բոլոր ցամաքների
մակերեսյթներին միասին առած:

— Երկրագոնդի վրայ ներկայումս
գործում են 280 հրաբուխ:

ԶԻՍՈՐՃՈՎԻ ԹՐ

ՑՈՐԵՆԻ ՀԱՏԻԿՆԵՐԸ ԵՒ ՇԱԽՄԱՏԻ
ՏԱԽՏԱԿԸ

Ճիշտ յայանի չէ, թէ ով է հարեւ
շախմատի խաղը, բայց արդ խաղի մա-
սին կայ մի բաւական հին հնդկական
լեզուալ, որ արժանի է յիշատակու-
թեան:

Ինչպէս պատմում է լեզնողան,
Հնդկաստանի թագաւորը հիանալով այդ
նոր խաղի վրայ, կանչում է իր մօտ
հնարողին և առաջարկում է բնարեւ իր
կամքով որևէ վարձարութիւն:

«Թող հրամայի թագաւորը, պա-
տասխանում է հնարողը, որ շախմատի
տախտակի վանդակներում գնեն ցորենի
հատեկներ, միայն այսպէս՝ տասջին
վանդակում մի հատեկ, 2-րդ վանդա-
կում 2 հատեկ, 3-րդում 4 և այլն այս-
պէս շարունակաբար կրկնապատկելով
մինչև 64-րդ վանդակը»:

Թագաւորը լսելով այդ համեստ
ինդիրքը՝ մնաց ապշառ: Նա իսկոյն հր-
բամայեց անմիջապէս կատարեւ: Բայց
աւելի ևս զարմացաւ, եթք լսեր տւին,
թէ անկարելի է իրազործել թագաւորի
հրամանը: Այդ հրամանը իրագործելու

համար, հարկաւոր էր տարեկան ութ հունձ, և նիթաղբերով, որ երկը մակերևոյթը ամբողջապէս ցանած է ցորենի հատիկներով:

Շախմատի հնարքողի պահանջած ցորենի հատիկների թիւը ներկայացնում է հետեւել պրօդրեսսիայի անդամների գումարը՝ 1, 2, 2², 2²³, որը՝ հաւասար է 2²⁴—1, իսկ եթէ այդ թիւը զրենք տասնորդական սիստեմով, կրատանանք՝ 18,446,744,073,709,551,615. Ինչպէս տեսնում էր, ստացում է քսան թւանշանից բարկացած մի գումար: Չփորձենք կարդալ այդ թիւը, քանի որ արտասանած բառերը շատ բան չեն հադորողի մեր մտքին:

ԱՐԺԱՆԱԳԻՆ ՏՈՒՆԸ

Մէր բարեկամներից մէկը, որ հաւանորէն գիտէր շախմատի հնարքողի պատմութիւնը, շինէլ տւեց միայարկ փոքրիկ տունն Այդ տունը շինեցին այնպէս, որ գետնից որոշ աստիճան բարձր էր և մինչև մուտքը աանդուխտներով պէտք էր բարձրանալ, որից յետոյ զալիս էին սենեակները: Սանդուխտները ունէին բնդամնը 26 աստիճան:

Մէր բանի տարուց յետոյ նա ստիպւած եղաւ ծախելու իր փոքրիկ ստկայն հաճոյատես տունը: Եթէ ներկայացաւ

առաջին դնորդիր, տանտէր Դիւտօնը արաւ նեսեեալ առաջարկել:

«Ես շատ չեմ պահանջիւ քանի որ կամինում եմ շուտով ծախել առւնս. դուք կը դնէք շէմքի սանդուխտների առաջին աստիճանի վրայ 1 սանտիմ (1 քր.=100 սանտիմ=37½ կոպ.), երկու սանտիմ կը դնէք երկրորդ աստիճանի վրայ, յետոյ չորս սանտիմ երրորդ աստիճանի վրայ և այդպէս շարունակարար գումարի կը կրկնապատճէք, մինչեւ սանդուխտի վերջին աստիճանը: Տեսէք թէ որքան չնշին գնով եմ տալիս. իմ տան սանդուխտը ընդամենը 26 աստիճան ունի:

«Կաց, համաձայն հմք, աղաղակեց Լանգլուէն:

Հետեւել օրը Լանգլուէն նախօրօք մի լու նախաձաշ տաւ տնատէր Դիւտօնին, յետոյ զիմեց զէսլի նոր տունը, որպէսզի վճարէ 2²⁵—1 սանտիմը:

Մինչև շէմքի սանդուխտների վերջին աստիճանները գործը շատ լաւ էր գնում, սանդուխտների առաջին աստիճանները բաւական գիւրին էր բարձրանալը, բայց տես, որ Լանգլուէի փողի քսակը դաստիպւեց, և այդ բանը նա չէր կարողացել նախատեսնել:

Տուն նախալը քաղքավարի կերպով ասաւաջարկեց ներկայացնել ամբողջ հաշիւը, փոխանակ նեղութիւն կրե-

լու աստիճանները բարձրանալու:
«Իմ սիրելի կանգուէ, աղաղակեց
նա, դուք ինձ պիտի վճարէք 671,088
ֆր. 63 սանտիմ, բայց ձեզ նուան բարե-
կամի համար ես կը զիջեմ 63 սանտիմը»:

Այս բացատրութեան վրայ և անդուռ-
էի քիթը երկարացաւ և այդ ժամանակ-
ւանից նա վճռեց, որ իր երեխանիրին
սովորցնէ, թէ ինչ բան է պրօքէսսիան
կամ յառաջաւութիւնը:

Իսկ ինքը շատ լաւ իմացաւ թէ
ինչ բան է պրօքէսսիան, միայն թէ այդ
իրեն արժան չնատեց:



ՍԱԼՈՆԻ ԽԱՂԵՐ

ԱԱՍՆԵՐԿՈՒ ԱՆՅԱԶՈՂ, ՓՈՐՉԵՐ

Խցանի հարածը.—Վերցրէք զինու-
սովորական շիշ (գատարկ) և մի փոք-
րիկ խցան, որը աղատ մտնել կարողա-
նայ շշի մէջ, Զետեղեցէք խցանը շշի
բերանում և շիշը բռնելով հորիզոնական
ուղղութեամբ՝ փշեցէք, պրակէսպի խցանը
ընկնի շշի յատակու Զեր ջանքերը ի
զուր կը լինին. հէնց որ փշէք, շշի մէջ
եղած օդը կը ճնշէ խցանը, որ դուրս
նետելով շշից՝ ուժին կը զեղացի ձեր
դէմքին:

Ամօթահար եղած չերքուէս.—Տղա-
մարդիկ ընդհանրապէս պարծենում են
իրենց մկանունքների ուժով, բայց անա
մի խաղ, ուր աղամարդկանց փիղիքա-
կան ուժը յաղթւում է կանացի ուժի
առաջ: Խնդրեցէք մի տիկնոջ կամ օրի-
որդի իրար միացնել ցուցամատերի
ծայրերը, ձեռքերը բռնել հորիզոնական
ուղղութեամբ, արմունկները պահել ու-
սերի բարձրութեամբ. յետոյ խնդրեցէք
ներկայ եղող չերքուէսի ուժ ունեցող
մի տղամարդի, որ արկնոջ կամ օրիորդի
ցուցամատերը բաժանի իրարից: Մեր
չերքուէսը բռնելով տիկնոջ ձեռքերը,

սովորաբար ձգում է հորիզոնական ուղղութեամբ և աշխատում անջատել իրարից ցուցամատերը, սակայն տասը փորձից ութը անցնում է անյաջող և մեծ գւարճութիւն պատճառում ներկայ եղողներին:

Եթէ տեկինը իր ձեռքը դնի գլխի վրայ այն ձևով, որ արմունկը կազմի ուղիղ անկիւն, և եթէ ինզրէք ներկայ եղող պարոններից մէկին՝ բարձրացնել տիկնաջ ձեռքը դլիից, ապա կը տեսնէք, որ չի կարող այդ անել, եթէ միայն բարձրացնէ ուղղանայեաց ուղղութեամբ: Այս խաղը թէկ կապտա է, բայց միտ գւարճութիւն է պատճառում, եթր տեսնում են տղամարդու անյաջող փորձերը:

Հերքովէսը յաղթասձ.—Անտասովիկ մէկ ուրիշ զւարճակի փորձ: Երկու հոգի, մի տղամարդ և մի կին, կանգնում են դէմ առ դէմ: Տղամարդը իր երկու բռունցքները իրար վրայ զնելով՝ պահում է ուղղանայեաց դիրքով, իսկ տիկնը իր երկու ցուցամատով խփում է նրա բռունցքներին աշխատելով իրարից հեռացնել: Տղամարդը որքան աշխատի պահել իր բռունցքները այդ դիրքով՝ անկարող է, միայն թէ տեկինը խփելու ժամանակ ուղագրութիւն պիտի զարձնի, որ աջ ձեռքի ցուցամատով խփի տղամարդու աջ բռունցքին, իսկ ձախով

ձախ բռունցքին: Այս խաղի ժամանակ ալէտք է ուղագրութիւն դարձնել որ տղամարդը իր բթամատը չըննի միւս ձեռքի ափով, բռունցքները պիտի իրար վրայ դրւած լինին միանգամայն ազատ և պիտի սեղմել վերկից ներքեւ:

Տնտողութեան սիսալը. — Անդանի անկիւնի վրայ պրէք մի կոպէկանոց, այժմ հարկաւոր է այդ կոպէկը վայր նետել: Դա շատ հասարակ խաղ է, բայց տեսէք, թէ որքան գժւար է: Եթէ փակէք մէկ ձեռքով ձեւ աչքերից մէկը, իսկ միւսով փորձէք խփել կոպէկանոցին վայր նետելու նպատակով, ձեզ չի յաջորդիլ: Այս փորձը կատարելիս սեղանից որոշ աւրածութեամբ հեռու կանգնել:

Անշնորն ծարպիկութիւն. — Դուք ճարպիկ էք, տեկին, անկասկած գուր հեշտութեամբ կարող էք մի քանի գընդակը նետել յատակի վրայ, զիխարկի մէջ, բայց փորձեցէք զնդակի փոխարէն վերջնել խաղաթղթեր (կարս) և կը տեսնէք, որ դուք ճարպիկ շէք: Վերցըէք հերպական ձևի մի գլխարկ (աւելի լաւ է ցիկնդր) և դրէք յատակի վրայ, յիսոյ կանգնեցէք զիխարկից ՅՇ արշէն հեռաւորութեան վրայ և նետեցէք մէկ-մէկ ձեր ձեռքի խաղաթղթերը (կարտերը) զիխարկի մէջ: Մէկ, երկու, երեք, և ոչ մէկը ձեր թղթերից չի ընկնիլ գլխարկի մէջ, շնորհիւ օգի ընկղեմո-

դրութեան ձեր բոլոր խաղաթղթերը կը-
ցրւեն զիմարկի շուրջը:

Ասընդունակ էք նոյնիսկ վշտուու.—
Վերցրէք թելի մի փոքրիկ կոճ (քատու-
կա), պոկեցէք թղթի էտիկէտները, կոճի
մի ծայրին գրէք մի, երկու կամ քսան
կոպէկնոց, երեք բորսով ամբացրէք
այնպէս, որ եթէ հորիզոնական դիրքով
պահէք, գրամը վայր չընկնի, և յետոյ
փշեցէք կոճի միւս ծայրից (անցրից),
կը տեսնէք, որ գրամը փախանակ վայր
ընկնելու, աւելի ամուր կպշռւմ է կոճի
անցրին:

Փորձեցէք եւ կը տեսնէք, որ եթէ
ձեր աշքերը կապեն թաշկինակով, չէք
կարող հինգ բոպէ անզամ մալ անշարժ:

Չէք կարող կանցնել պատի առաջ
այնպէս, որ ձեր սաները լիովին (իրենց
ամբողջ երկարութեամբ) կպշեն պատին:

Չէք կարող հաւկիթը կստրել, եթէ
սեղմելու լինէք նրա ծայրերից:

Չէք կարող աթուից վեր բարձրա-
նալ, առանց ձեր մարմինը առաջ թէ-
քելու, կամ ձեր սաները գեանին դնելու:

Դուք չէք կարող կոտրել լուցկին
գնելով միշտամտի եղունգի վրայ և
սեղմելով երկու հարեան մասներով:

Սրանք թէ զարձութիւն են պատ-
ճառում ներկայ եղողներին և թէ զար-
մացնում մասնակցողներին:

ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵԼ ՄԵԿԻ ՏԱՐԻՔԸ

Ներքեկի ցանկը ցոյց տւշք նրան, որի
տարիքը ուղղում էք իմանալ և առաջար-
կեցէք ցոյց տալ այն սիւնակները, ո-
րոնց մէջ գտնւում են նրա տարիքի
թւերը: Նրա ցոյց տւած սիւնակների
առաջին թւանշանները գումարելով՝ կը-
դունէք նրա տարիքը:

1	2	4	8	16	32	1	2	4	8	16	32
1	2	4	8	16	32	33	34	36	40	48	48
3	3	5	9	17	33	35	35	37	41	49	49
5	6	6	10	18	34	37	38	38	42	50	50
7	7	7	11	19	35	39	39	39	43	51	51
9	10	12	12	20	36	41	42	44	44	52	52
11	11	13	13	21	37	43	43	45	45	53	53
13	14	14	14	22	38	45	46	46	46	54	54
15	15	15	15	23	39	47	47	47	47	55	55
17	18	20	24	24	40	49	50	52	56	56	56
19	19	21	25	25	41	51	51	53	57	57	57
21	22	22	26	26	42	53	54	54	58	58	58
23	23	23	27	27	43	55	55	55	59	59	59
25	26	28	28	28	44	57	58	60	60	60	60
27	27	29	29	29	45	59	59	61	61	61	61
29	30	30	30	30	46	61	62	62	62	62	62
31	31	31	31	31	47	63	63	63	63	63	63

Օրինակ՝ կամենում էք իմանալ ձեր
ծանօթ օրիսրպի տարիքը կամ մտածած
թիւը: Ենթալլենք նրա տարիքն չ 20 և

նա ձեզ ցոյց է տալիս 3-րդ և 5-րդ սիւ-
նակները, ուր դտնւում է 20 թիւը,
այժմ ևթէ գումարէք 3-րդ և 5-րդ սիւ-
նակի առաջին թւանշանները 4 և 16,
իբրանաւք 20:

Մի հետաքրքրիք խնդիր

(Լուծովք ստանում է պրեմիս)

Հարսանիքի պատրաստութիւն աես-
նելու համար գնեցին եզներ, ոչխարներ
և սագիր, ամեն մի եզան վճարել են 10
բուրլի, ոչխարին 3 բուրլի և սագին 50
երազէկ: Իմանալ քանի ոչխար, քանի
սագ և քանի եղ են գնել, ևթէ ընդա-
մենը դնել են 100 զեւխ և վճարել են
100 բուրլի:

Յանւարի 15-ին այս խնդիրը լու-
ծած առաջին ներկայացնողը ստանում
է 1 բուրլանաց զիւք, դիմելով օրացոյ-
ցիս կազմողին:



ԹԱԻՍԱՀԱՅԱՅ ԳՐԱԴՆԵԼ

ՅԱԻԵԼԻՇ

«ՓԱՐՈՍ» ՕՐԱՑՈՅՑԻ



ԹԻՖԼԻՍ


Տպարան «ԷԽՈԽԱԱ», Գանովսկայա № 3.
1909.

ԵՐԿՐԻ ԽԾԱԳ

Այս տարի մենք տալիս ենք ոռոսահայ
գրողներից միայն մի մասի համառօտ կենսա-
գրութիւններ։ Եկող տարի այս ուզգութեամբ
կըշաբունակենք մնացեալների մասին։ Տեղի և
ժամանակի ողութիւնը և կլիշէներ պատրաս-
տելու անյարմարութիւնը մեզ թոյլ չտեին այս
տարի յաւելւածը տալ լիակատար։

Գրողները գասաւորւած են այբուբենա-
կան կարգով,

ԱԲՈՎԵԱՆ ԽԱԶԱՏՈՒԻՐ



Առաջին բանաստեղծ՝ վիճասանը սուսահայերի մէջ, որ գրեց աշխարհաբարը: Ծննել է 1803—4 թւականներին և անհետացել 1848-ին՝ երեանում: Նրա առաջին գլխաւոր աշխատութիւնն է «Վէրք Հայաստանի» կոչւող ողեշունչ և խորին զգացմունքով տոգորուած միծ վէպը: Գրւած է երեանի Քանաքեռ գիւղի բարբառով, աշուղական, էպիթական ոճով և առատարութիւն անկեղծ, յուղիչ արտայայտութիւններով: Այդ վէպը լոյս տեսաւ առաջին անգամ 1858 թւին:

Սբովեանը համարւում է սուսանայ գեղարեսական գրականութեան առաջին հանդիրան: Ունի նաև ուրիշ գրւածքներ՝ նոյն բարբառով—«Օսաննա» (պատմւածք), զանազան առակներ ու մասնի պատկերներ և ոտանաւորներ: Բոլոր գրւածքները ի մի ամփոփած, հեղինակի ընդարձակ կենսագրութիւնով, այլէ բառարանով և պատկերով լոյս տեսան մի՛ հատորի մէջ 1897-ին: «Վէրք Հայաստանին» երրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ նաև 1908 թ.

Խ. Սբովեանի մեզ հասած գրւածքներն են — «Վէրք Հայաստանի», «Պարապ վախտի խաղալիք» (որի մէջն են առակները և ոտանաւորները), «Ֆէօդորա կամ Որդիական սէր» պիէսը երեանի բարբառով, գրաքար մի՛ քանի ոտանաւորներ, «Օսաննա», «Ճանապարհորդութիւն Պարբուի և Խ. Սբովեանի» և «Նախաշալիդ կրթութեան» դասագիրքը:



ԱՀԱՐՈՆԵԱՆ ԱՒԵՏԻՄ

Ծնվել է 1866 թ. Խոդիբում: Սկսել է գրել 1890-ական թ. ականներից: Առաջին գեղարվեստական գրւածքն է «Պուտ մը կաթ», որ տպւել է «Մշակում»: Այսուհետեւ նա գրել է թիւրքահայերի կեանքից, յետոյ Մետերլինկի և ուրիշ նոյնանձան հեղինակների ազգեցութեան տակ՝ գրում է զգացմունքնոր յուղոր մի շարք պատկերներ, որոնցից նշանաւորները զետեղուած են նրա «Ազատութեան ճամբին», «Խեղճերը», «Պատկերներ», «Արագը» և այլ աշխատութիւնների մէջ:

Բացի զրանցից, Ահարոնեանը ունի նկարագրական շքեղ էջեր՝ իտալիայից՝ «Իտալիայում» գրքի մէջ, «Հոռ կինը» ազգագրական ուսումնասիրութիւնը և մի շարք գեղարվեստական սիմբոլիք արտադրութիւններ:

Ունի նաև թատերական գրւածքներ—«Արցունքի հովիաց», որ այնքան ընդունելութիւն է գտել, այլև «Սև թուչուն» դրամաները:



ԱԴՐՅԵԱՆ ԴԱԶԱՐՈՍ

Մանկական գրող, բանաստեղծ՝ վիպասան
և մանկավարժ, ծնւած 1840-ին Բօնիս-Խաչին
գիւղում: Նր ս առաջին գրւածքն է «Օգնեցէք
խեցէրին» բանաստեղծութիւնը, որ լոյս է տե-
սել «Մեղու» լրագրում 1862-ին: 1902-ին կատար-
ուեց բանաստեղծի քառամանամեայ յօբեկանը:

Դ. Աղայեանը, որ համարում է հայոց
Անդէքսէնը, ոչ միայն վիպասան է («Երութին
և Մանւէլ», «Երկու քոյր» ևն), այլ և առաջին
մանկական գրողը, որի գրւածքները անգիր
գիտէ գրեթէ իւրաքանչիւր հայ մանւկ: «Տորք
Անգեղ» անդրւգական ազէմայից յետոյ, Աղա-
յեանի մանկական յայտնի գրւածքներից պիտի
յիշատակել—«Դիւլնազ տատի հեթիաթը», «Ա-
նահիտ», «Արեգնազան» և այն:

Բացի գրանցից, Դ. Աղայեանը յայտնի է
իր անհնան դասագրքերով—գիւղք «Մայրնի
լեզի» ուսուցման, որոնք մեր ըոլոր պարոց-
ներում ընդունած դասագրքերն են և որոն-
ցում է զետեղել Աղայեանը իր մանկական գրւ-
ածքները և մանուկների համար մշակած աշ-
խատութիւնները:

Ի-ի ուղղագրութիւնը, որ Աղայեանի գոր-
ծն է, այժմ գրեթէ ամեն տեղ—գրականու-
թեան և դպրոցների մէջ ընդունած է:

Դ. Աղայեանը ոսուանայ առաջին գրողն է,
որ ըոլոր միւսներից աւելի յատուկ ուշագրու-
թեամբ մշակել է աշխարհաբար մի սահուն ու
փափուկ գրական լիոն և գործածութեան մէջ
է գրել այն:





Ա Տ Բ Պ Պ Ե Տ

(Սարդիս Մուբայեանեան)

Ծնւել է 1850 թւին Կարս քաղաքում, Ա-
սաջին վիպական գրւածքն է «Խե Կարապետ»,
տպւած է 1889 թւին: Ունի բազմաթիւ գրւածք-
ներ, թեղմնաւոր գրող է և թիւթանայոց կեան-
քին տեղեակ, աշխատող մարդ: Գրւածքների
մեծ մասը թիւթանայերի կեանքից է: Մեծ
վեպերից յայտնի են «Խե Կարապետ» և «Ալ-
մաստ»:

Աւգաղբութեան արժանի են նրա սւսում-
նասիրական յօգւածն երը՝ «Իմամաթ», «Խա-
լիֆաթ», «Կալւածական խնդիր Ամրապատակա-
նում», «Բարիներ» և այլն, որոնք ցոյց են
տալիս հեղինակի աշխատելու սէրը և գրելու
տհնչանքը:



ԲԱՇԻՆՉԱՂԵԱՆ ԳԼՈՐԳ

Յայտնի նկարիչ՝ պէիզամբիստ: Ծնւել է 1858-ին Սղնախում: Նրանշանաւոր նկարներն են — «Քաղթականութիւնը Պարսկաստանից 1828-ին», «Անտառը աշնան», «Արարատ», «Սևանայ լիճը» և այլն: Մէկ-մէկ գրում է և ունի նկարագրական սիրուն կտորներ: Ունի նուև զանազան պատկերներ և պատմածքներ վրացիների կեանքից: Գրւածքներում Բաշին-ջաղեանը երգիծական սրամիտ էպիզօդներ է գնում և տիպերը գուրս է բերած կենդանի և իրական: Նրա գրական արտադրութիւններից մի քանի կտոր ժողոված՝ հրատարակւել է փոքրիկ գրքոյկով, որ ունի «Նկարչի կեանքից յիշողութիւններ» վերնագիրը: Մանրմանը զբւածքները ցրւած են զանազան թերթերում նշանաւորներն են՝ «Փուչ Վահանը», «Փոքրիկ գաղթականներ», «Առաջին սէր», «Վրացի իւանէն», «Իշխան Վաշնաձէի ագարակում» և այլն:



ԳԱՄԱԾ-ՔԱԹԻԴԱ.



Ծնվել է 1830 թ. Նոր-Նախիջ., մեռել 1892-թւին: 1854-ին Ռաֆայէլ Պատկանեանը Մինաս Թէմուրեանի և Գէորգ Քանանեանի հատակսում է հրատարակել զանազան հայերէն գրքեր «Գամառ-Քաթիպա» կեղծ անւան տակ, որը կազմում է նրանց անունների սկզբանառնութից Գ., Մ., Ռ., և Ք., Թ., Պ.: Առաջին էին այրբենարանն և տաղարան: Վերջինիս մէջ լոյս տեսաւ Պատկանեանի սուածին յայտնի երգը—«Մայր Արաքսին»:

Երգը մեծ ժողովրդականութիւն ստացաւ և այժմ նաև ամեն հայի սիրած երգերից մէկն է: Այնուհետեւ Բափայէլ Պատկանեանը մնաց մինակ և կեղծ անունը ստորագրեց իր բոլոր դրւածքների տակ: Գամառ-Քաթիպան ունի թէ արձակ թէ սոսանուոր և թէ երգիծական զրւածքներ: Շատ յայտնի են նրա բանուստեղծութիւնները, մանաւանդ որոշ միտումով գրրւած էջերը, որոնց շնորհիւ նա ստացաւ «Աղգային երգիչ» տիտղոսը,

Արձակների մէջ յայտնի են—«Տիկին և Նաժիշտ», «Ես նշանուծ էի», և այլն: Ամենատաղանգաւոր զրւածքները երգիծականներն են՝ զրւած նոր-Նախիջևանի բարբառով: Սրանցից յայտնի են «Փորստողին Աւազը», «Բարովակըրեր», «Քաղկեդոն», «Դրացինս», «Վարթէւոր», «Չափու», «Բաց աղբար» և այլն:

Բոլոր զրւածքները ամփոփած են երեք ստար հասորների մէջ, որոնցից Գ. Հատուրը լոյս տեսաւ 1904-ին:

ԹՈՒՄԱՆԵԱՆ ՅՈՎՀԵԱՆՆԵՍ

Ծնւել է 1869 թւին Լոռուայ Դսեղ գիւղում:
Սկսել է ոսանաւոր գրել շատ վաղ, 10—11
տարեկան ժամանակից: Ամենավաղ գրւածքը
մանկական ամենայայտնի՝ «Շունն ու կատուն»
տապանդաւոր գրոյցն է:


Սակայն Յովհ. Թումանեանը յայտնի է իր
գիւղիկ պէշմանելով, ինչպիսիք են՝ Սասուն-
ցի Դաւիթ, Թմկաբերդի առումը, Անուշ, Դեպի
անհոնը, Փարտանա, Ախթամար և այլն: Լե-
ռեք գրւածքներ ել շատ ունի: Նշանաւորներն
են՝ ե՛յ աստղեր, Համերգ, Մարերում, իմ
սէրը, իմ երգը, Փատուն աչքերը և այլն:

Ունի մի շարք յաջող թարգմանութիւններ
Լեռմնատովից, Լօնգֆէլլօից, Ժուկովսկու «Ա-
քելլէսը», Բայրոնի «Շիլբոնի կամնաւորը»,
«Մուրօմցի Իլիան», յայտնի առևական գուսա-
նական երգը, Պուշկինից, Կոլցովից, Նադոս-
նից, Գէօթէից և այլն:

Յովհ. Թումանեանի լեզուն իր որոշ պօէ-
մաների մէջ (Սասունցի Դաւիթ, Անուշ և այլն)
պարզ է, սահոն և ժողովրդական, բայց միւս-
ներում պատկերաւոր է, հարուստ և ընտիր
դարձւածքներով:

Նրա գրւածքների լիակատար ժողովածու-
ները լոյս են տեսել 1903-ին (շքեղ հրատա-
րակութիւն) և 1908-ին:

Իբր մանկական գրով՝ նա մշտապէս աշ-
խատակցում է «Հասկեր» մանկական ամսա-
գրին և ունի նրա մէջ շատ արձակ և չափածյ
գրւածքներ:





ԻՍԱՀՅԿԵԱՆ ԱՒԵՏԻՔ

Ծնւած է 1875 թվին Ալեքսանդրապոլում: Սկսել է զբել 1891 թվից: Ժողովրդական ոգով, լեզով ու մօտիւով գրող բանաստեղծների լաւագոյն ներկայացուցիչն է: Նրա երկերի առաջին փոքրիկ ժողովածուն «Երգեր ու վերեր» վերնագրով լոյս տեսաւ 1898-ին:

Իսահակեանը համակւած է համաշխարային թափիծով, ողքագին ու վշտալի շեշտ ունի և երգում է ցաւագին սէր, տանչանք, հայրենիքի և մօր կարօտ, ընկնող նահատակների, աղպային աղէտների մահերգ և այլն:

Յաւանի են իսահակեանի հետեւեալ զըրւածքները, որոնց երգում է ժողովուրդը և որոնց ծանօթ է ամեն հայ.—Որսկան ախպէր, Մաճկալ ես, Բեղաբած ես, Դարդու լացէք, Կըռունկները շարան-շարան, և այն:

Վերջերում նիշէյականութիւնը գըաւում է նաև Ա. Իսահակեանին: Գերմանացի մեծ փիլիսոփայի իդէալ գերմարդը ոգեսրում է նրան ևս: Եւ իսահակեանը երգում է նիշշէի անհատը, անհատի գերսալացումը և ըմբոստ թոիչքները:


I. է 0

(Առաքել Բարախանեան)

Ծննդել է 1890-ին, Շուշի: Գեղարվեստական առաջին գրւածքը՝ «Սնապաշտութեան քաւրմը», լոյս է տեսել 1884-ին: Գեղարվեստական գործերը սակաւ են: Ունի երկու պատմական վէպեր ևս՝ Ղարաբաղի կեանքից—«Վերջին վէրքեր» և «Մելիքի աղջիկը»:

Լէօն սակայն յայտնի է իրոք պատմական նիւթերի ժողովով և աշխատասիրով: Յայտնի է նրա «Հայ տպագրութեան պատմութիւն» երկնատոր գործը, ապա՝ «Ե. Մերովիք», «Յով. Արզութեան», «Ստ. Նազարեան» և «Գր. Արծրունի» գրւածքները: 1895-ից յետոյ այլ ևս գրեթէ թողնում է նրա գեղարվեստը և նւիրում է իրեն հայոց պատմութեան՝ նորագոյն ժամանակների, մանաւանդ հայոց գրականութեան պատմութեան:

Նրա ամենալաւ աշխատութիւնն է «Հայոց տպագրութեան պատմութիւնը», երկու հատորու 1908-ին կատարւեց նրա գրական գործունեութեան յօքէլեանը: Գեղարվեստական գրւածքներից (թւով մոտ 10—15) լաւագոյններն են նաև—«Մայրեր», «Գաւառական հերոսներ», «Թաթախման գիշեր», «Կորածներ» են:





ԾԱՏՈՒՐԵԱՆ ԱԼՔԻՔՍԱՆԴՐ

Ծնուել է 1870-ին Զաքաթալա քաղաքում: Առաջին անգամ սկսել է թարգմանական ոտանաւորով, Շիլէրից, «Մանուկն օրօրոցում»: 1886 թւին: Այսուհետև նա գրել է զանազան պարբերական հրատարակութիւններում: Նրա գրւածքների ժողովածուները Յ հատոր հն. դրանցից վերջինը, «Գրչի հանաբներ», բովանդակում է փոքրիկ, երգիծաբանական թեթև կտորներ:

Ա. Ծառութեանը յայտնի է նաև որպէս թարգմանիչ ուսական հեղինակների՝ Շորգիների, Պուշկինի հն: Ունի հրատարակած երկու շքեղ հատորներ՝ այդպիսի թարգմանութիւնների: Խնդիրություն գրւածքներից թարգմանած կան ուսերէն, իսկ ի՞նքը, ի. թիվ Վեսելովսկու հետ միասին, ուսւերէնի է վերածել հայ թատերագիր Գ. Սունդուկեանի «Պէտո» կոմիդիան:





ԿՈՒՐԴԻՆԵԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

Առաջին հայ բանաստեղծուհին՝ ոռւսահայերի մէջ: Ծնվել է 1876 թւին, Ալքըսանդրապոլում:

Ասպարէզի վրայ յայտնւեց իր գողարիկ ոտանաւորնելով՝ 1900 թւականներին: Առաջին գրւածքը տպւել է 1899-ին «Տարագում»: Գրքածքների տպաչին ժողովածուն լոյս տեսաւ 1907 թւին, Նոր-Նախիջևանում:

Կուրդինեանը երգիչն է թշաների, հողի աշխատաւորների և բանւրների: Իբրև ոկրոնակ, ունի յաջողւած կտորներ: Նշանաւոր է մանաւանդ «Հանգըրեք ջահերը»: Մանր-մունը ոտանաւորնել ունի տպած ժամանակակից գըլեթէ բոլոր հայ թերթերում:

Կուրդինեանը գրում է նաև ժողովրդական մօտիւով՝ նման Յովհաննիսեանի և մանաւանդ՝ Աւետիք Խսահակեանի: Զգալապէս աշխատում է նմանւել նաև իտալական յայտնի բանաստեղծուհի Ազա Նեղըիին:






ՄԻՐԱՔԵԱՆ ՎԱՀԱՆ

Յայտնի է միայն իր «Լալարի» որսը՝ պօշ-
մայով։ Ունի թէկ ուրիշ մանր-մունք գրւածք-
ներ «Միք-Կօնօ» ստորագրութեամբ «Ազգիւրի»
և «Տարագի» մէջ, սակայն հռչակւեց այս պօշ-
մայով, որ լոյս տեսաւ 1901 թւին «Մուրճում»,

յետոյ էլ առանձին զբառով։

Միքաքեանը ծնւել է 1875 թւին, Շուլա-
ւէրում։





ՄԱՆԻԿԵԼԵՆ ԼԵՀՈՒՆ

Ծննդել է 1864-ին Ներքին-Ազուլիսում: Առաջին գրածքը, «Լեռնային վտակ», լոյս է տեսել «Աղբիւրում» 1887 թւն: Այնուհետև նա արտադրել է շատ ուսանառութներ, արձակ գրածքներ, թատերգութիւններ և պօէմաներ:

Բանաստեղծութիւնների մէջ անպայման տաղանդաւոր և ուշադրութեան արժանի է նրա «Փոքրիկ» գրամմատիքական պատկերը, որ զըրւած է մեծ շունչով և վարպետ զըշով: Արձակների մէջ յայտնի են «Խորտակւած կհանքը» և «Չէլէրինների արշաւանքը» վեպերը, իսկ թատերգութիւնների մէջ՝ «Շօքաօր Քօշայեան», «Վերածնւածը», «Տիգրանունին» և այլն:

Լ. Մանեկեանի գրւածքները, մանաւանդու պօէմաները, ունին կլասիքական ոճ: Լեզուն, պօէմաների մէջ, աւելի հարուստ է և պատկերառոր:





Մ Ա Խ Ի Ռ Ա Ց Ա Ն

(Գրիգոր Տէր-Յովհաննիսեան)

Ծնւել է 1854 թւին Շուշի քաղաքում և
մնաել 1908-ին Թիֆլիսում:

Սկսել է գրել 1880 թւականին «Փորձ»
ամսագրում: Իսկ 1882-ին գրեց «Մոռզան» թա-
տերգութիւնը, որով և Մուրացանը հաշակւեց: «Մոռզանը» հայ բեմի սիրւած պատմական
պիէսն է:

Մուրացանի վիպական գրւածքներից առ-
մենից առաջ մեծ աղմուկ հանեց «Հայ բողոքականի ընտանիքը», իսկ ամենատաղանդաւոր
գրւածքներն են «Փէորդ Մարզպետունի» պատ-
մա լէպը, այլև «Նոյի ագուած պատմածքը»:

Միս գրւածքներից յայտնի են «Հասա-
րակաց որդեգիրը», «Իմ կաթոլիկ հարսնա-
ցուն», «Չհաս», «Անպատճառ իշխանունի»,
«Պսակների բողոքը», «Խորհրդաւոր միանձ-
նունի», «Առաքեալը», «Անդրէաս երէց» պատ-
մավէսը և այլն:

Գրւածքների ժողովածւի ա. հատորն է
միայն լոյս տևսել:



ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԵԱՆ



Ծնվել է 1864 թւին, Վաղարշապատ: Սկսել է գրել Լազարեան ճեմարանում աշակերտ եղած ժամանակ: Գրւածքներում աչքի է ընկնում Ս. Նազարեանի և Ս. Շահազիզի եղբւի խոր աղ-դեցութիւնը: Գրւածքների առաջին փոքրիկ ժողովածուն լոյս է տեսել 1887-ին Մոսկվա, իսկ երկրորդ, աւելի լիսկատարը, «Բանաս-տեղծութիւններ» խորագրով, լոյս տեսաւ 1908 թւին Վաղարշապատում:

Յովհաննիսեանը մեծ ուշագրութիւն է դարձնում գրելու արւեստի վրայ, ունի բարձր լեզու և առաջին անգամ նա էր, որ սկսեց գր-ընթացքական մօտիւով («Արագն եկաւ», «Ալագեազ բարձր սարին» և այլն): Գրւածք-ները լիրիք-սիրային են, այլև բողոքող և խրա-խուսող հրաւիրող գէպի լոյս, ճշմարտութիւն և արդարութիւն: Ունի և բալագաներ («Ար-տաւագն» և «Վահագնի ծնննդը»):

Ունի շատ յաջող և լաւ լեզուով թարգմա-նութիւններ Ուլանդից, Պետեօֆֆիկից, Լէօ-պարդիկից, Նազարոնից, Նեկրասովից և այլն: Թարգմանութիւնների մէջ յայտնի են՝ «Երգչի անէծքը», «Գերի արագիլը», «Պօլիբւատէսի մատանին», «Մպիտակ զգեստ» և այլն:

Ժողովրդական մօտիւներից «Արագն եկաւ լափին տալով» երգում է և շատ ծանօթ է ամինքին:





ՅԱԿՈԲԵԱՆ ՅԱԿՈԲ

Ծնվել է 1869 թւին, Գանձակում: Սկսել է գրել 1893 թւին «Մուրճում» և զանազան ամսագրերում: Ունի իր գրւածքներից երեք ժողովածու, որոնցից առաջինը փորձեր են, իսկ լաւագոյնները վերջին երկուսում են ամփոփւած:

Յակոբեանը աշխատաւոր և ձնչւած դասկարգի երգիչն է: Յայտնի են նրա «Գալիս են», «Ճեսել ես, ընկեր», «Մեռան՝ չըկորան», «Ե՛յ, ձեզ մատաղ» և այլն կոպճները:

Յակոբեանն էր, որ հայ հասարակութեանը ծանօթացրեց իտալացի համակրելի երգչուհի Ալդա Նեգրիի հետ, թարգմանելով գրեթէ նրա բոլոր երկերը, որոնք հայերէն երկու հրատարակութիւն ունեցան և այնքան ընդունելութիւն գտան: Ունի նաև շատ թարգմանութիւններ Ֆրանցից և այլն:



ՆԱԼԲԱՆԴԵԱՆ ՄԻՔԱՅԵԼ

Յայտնի հրապարակախօս, կեղծ անունով՝ Կոմս Էմմանուէլ, հեղինակ «Յիշատակարանների», «Ազատն Աստած» և «Մեր հայրենիք» երգերի, այլև «Երկրագործութիւն» և «Երկու տող» յայտնի գրւածքների։ Ծնվել է 1829-ին Նոր Նախիջևանում և մեռել 1866-ին։

Մ. Նալբանդեան աւելի հրապարակախօս է եղել քան գեղարւեստական գրող։ Սակայն նրա գրւածքներից յայտնի են «Մեռելանարցուկ» կիսատ վեպը, այլև հետևեալ բանատեղծութիւնները։ Ազատն Աստած, Մանկութեան օրեր, Երազ, Ցուրաը փչեց, Մեր հայրենիք ևն։ Շատ քիչ են գեղարւեստական գրւածքները։ Իր ժամանակակից գրողների հետ համեմատած՝ Նալբանդեանի լեզուն ընտիր լեզու է։

Առանձնապէս ուշագրութեան արժանի է նրա «Երկրագործութիւնը որպէս ուղիղ ճանապարհ» գրւածքը, որ գրւած է քաղաքատընտեսական և ընկերագարական որոշ սկզբունքներով։



Ն Ա Ր - Գ Ո Ս

(Միքայել Յովհաննիսիսեան)

Ծնւել է 1867-ին Թիֆլիսում: Սկսել է դրել 1884-ին: Այս թւելն տպւել է նրա առաջին գրւածքը «Նունչ» վեպը, «Նոր-Դարի» մէջ: Դրանից յետոյ Նար-Դոսը միմեանց ետևից արտադրում է իր լաւագոյն գրւածքները, «Ռոնցից շատ յայտնի են՝ «Սպանւած աղաւնին», «Տանտիրոջն աղջիկը», «Անհա Մարոյեան», «Մեծ գործի սկզբում» և այլն:

Նար-Դոսը կենցաղագիր է և մեծ մասամբ շատ յաջող պատկերացնում է թշւառ անկիւններ ու թշւառ, զրկւած մարդկանց կեանքը: Դրւածքները առանց էֆեկտների, առանց միտումների, պարզ, մանրակիւտ հետազօտութեամբ և լուսանկարչական ճշտութեամբ պատկերներ են:

Ունի վարպետ գրիչ, հարուստ և ճկուն լեզու:



Շիրվանջլուկէ

(Ալեքսանդր Մովսէսեան)

Ծնւել է 1837-ին Շամախի քաղաքում: Առաջին գործը, որ արժանացաւ ուշադրութեան, «Հրդեհը նաւթահանքում», գրել է 1833-ին: Այսուհետև Շիրվանզադէն սկսեց արտադրել միմեանցից լաւ գործեր, որոնցից յայտնի են «Գործակասարի յիշատակարանը», «Նամուս», «Ալբամըին», «Արսէն Դիմաքսեան», «Ցաւագարը», «Նորերից մէկը» և մանաւանդ «Քաօս» մեծ վէպը, որը կարելի է վիպասանի գլուխ-դործոցը համարել:

Շիրվանզադէի բոլոր գրւածքները կենցադագիտական են և գերցրած միջին գասակարդի կեանքից:

Հոգեբանական յաջոր վերլուծութիւն, վարք-քայլաբեր մանրակրկիտ նկարագիր և տիպերի կատարեալ ըմբռնումը Շիրվանզադէի գրւածքների արաւելութիւններն են:

Շիրվանզադէն ունի նաև թատերական գրւածքներ, որոնցից նշանաւըները — «Պատուի համար», «Եւգինէ» և այլն գրւում են միշտ հայ բեմերի վրայ:

Շիրվանզադէն հայ լաւագոյն, սիրւած և շատ կարդացւող վիպասաններից է:

Գրւածքների ժողովածուից առ այժմ միշտն երեք հատոր է լոյս տեսել, իսկ մանր ու մեծ պատմեածքները և վէպերը համարեա բոլորն էլ կան առանձին զրբերով հրասալակւած:






ՇԱՀԱԶԻՋԵԱՆ ՍՄԲԱՏ

Ծնված 1840-ական թւականներին Աշտարակ գիւղում, մեռած 1907-ին Մոսկվայում նրա լաւագոյն բանաստեղծութիւնն է «Աւանի վիշտ» պօէման, գրւած Բայրոնի «Չայրլդ Հարուդի» ազգեցութեան տակ։ Դրել է շատ մեծ ու փոքր ոտանաւորներ, ունի նաև հրապարակախոսական մի քանի աշխատութիւններ։






ՊՐՈՇԵԱՆ ՊԵՐՃ

Ծնւած Աշոտարակում 1837-ին, մեռաւ 1907
թւին; Եղել է ուսուցիչ և եռանդուն մասնակ-
ցութիւն է ունեցել հասարակական գործերում:
Պուշեանը բեղմնաւոր գրող է եղել և ունի մի
շարք խոշոր վեպեր, որոնք գրեթէ բոլորն էլ
վերցրած են որոշ տեղի՝ Աշտարակի կեանքից
և ազգագրական կարեոր նշանակութիւն ունին:
Ամենաառաջին նրա վեպը՝ «Սօս և Վարդի-
թեր», տպւեց «Կոռունկ» ամսագրում: Դրւած է
նա Աշտարակի լեզուով: Այսուհետեւ Պուշեանը
արտադրեց «Կուածաղիկ», «Հացի ինդիր»,
«Շահէն», «Ցեցեր», «Յունն», «Բղդէ» և այլն
մեծ վեպերը՝ խառը գրական լեզուի և դաւա-
աբարբառուի (Երևանիան) հետ:

Այս մեծ վեպերից բացի, Պուշեանը թո-
ղել է զանազան մասր պատկերներ, այլև իր
վարքագլութիւնը՝ «Յուշիկներ» վերնագրով:





ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ ԳԱՅՐԻՔԵԼ

Թատերագիր (գրամատուրդ): Ծրել է 1825 թւին Թիֆլիսում: Առաջին գրւածքը 1863-ին, մի վօդեիլ է «Գիշերւայ սաբրը խէր է» վերնադրով: 1871-ին խաղացում է նրա ամենանշանաւոր գրւածքը—«Պէպօ»-ն, որ այսուհետեւ դարձաւ թէ հայ և թէ վրաց բեմի սիրած պիէսներից մէկը:

Սունդուկեանը ունի նաև ուրիշ պիէսներ, որոնք են—«Խաթաբալ»: «Բանդած օջաղ», «Ելի մէկ զո՞ն», «Ամուսիններ» և այլն:

Բացի վերջինից, բոլոր միւսները գրւած

5. Թիֆլիսի բարբառով:
«Պէպօ»-ն թարգմանւած է մի քանի եւրոպական լեզուներով: Նա մնամ է իբր կլասիք գրւածք հայ նորադոյն թատերական գըրածքների մէջ:

Սունդուկեանը բացի վերոյիշեալ պիէսներից, ունի և մի քանի վօդեվիլներ, այլև թարգմանութիւններ Մօլիէրից:



(Յակոբ Մելիք-Յակոբեան)

Ծնւել է 1835-ին, Սալմաստի Փայտջուկ
դիւղում (Պարսկաստան) և մեռել է 1888-ին
թիվլիսում:

Րաֆֆիի վէպերը, մեծ մասամբ որոշ դի-
տումներով գրւած, թիւրքահայաստանն ունի
իր գոլծողութեան զայր: Պատկերացնում է
թիւրքահայերի անցեալ կեանքի որոշ գծերը և
տիպերը:

Ունի պատմական մի վէպ—«Սամուէլ», որ
Փաւստոս Բիւզանդացու «Հայոց պատմութիւնն»
է, տրւած վէպի ձեռվ ու գեղարւեստական
կերպով: Սակայն Րաֆֆիի հոչակաւոր և տա-
ղանդաւոր գրւածքների մէջ զլինաւորներն են
«Ոսկի աքաղաղը», «Խենթը», «Զալալէդինը»
և «Կայծերը»: Ստւար վէպեր, որոնք միշտ
կարգացւել են մեծ յափշտակութիւնով: Ունի
նաև «Դաւիթ Բէզը» պատմական վէպը, այլև
«Խաչագողի յիշատակարանը» հետաքրքիր վի-
պասանութիւնը խաչագողների կեանքից:

Րաֆֆին թողել է ուսումնասիրական և
պատմական աշխատութիւններ և՛ «Խամսայի
Մելիքութիւններ», թարգմանութիւններ՝ «Կա-
յէնի կտակը», «Դարաբաղի աստղագէտը»:





ՓԱՓԱՍԶԵՍՆ ՎՐԹԱՆԻՄ

Ծնւել է 1866 թւին, Վան քաղաքում։
Սկսել է գրել 1883 թից։ Յայտնի է որպէս
մանր ու սեղմ պատմւածքներ գրող։

Վ. Փափազեանը յայտնի է նաև իր ու-
սումնասիրական և նկարազբական գրածքնե-
րով։ «Ապրօ» կեղծ անունով գրել է «Մշակում»
և «Մուրճում»՝ «Նամակներ թիւրքաց Հայոս-
տանից», «Նամակներ Պարսկաստանից», ունի
նամակներ Անդիւայից, Շվեյցարիայից, Սև ծո-
վի ափերից և գաղթականների միջից։ Թարգ-
մանութիւնների մէջ յայտնի են Էրկման-Շատ-
րիանի «Մի գիւղացու պատմութիւն», Նիշչէի
«Եյսպէս էր խօսում Զբագլածը» և այլն։

Բազմաթիւ մանր պատմւածքների մէջ
յայտնի են նաև հետեւալները։ «Ենիշէրի»,
«Հաջի բէզ», «Անազանդ», «Morituris», «Կոյրեր»,
«Աննա», «Ալէմփիր», «Ասի», «Հողի աշխատա-
ւորներ», «Պատկերներ գիւղից», «Մանթօ»,
«Խաթ-Սաբա», «Բմբոսա երգեր» և այլն։

Լեզուն կտրուկ է, սուր, սեղմ և սահուն,
Պատմելու ձևը զրաւիչ ու հետաքրքրող։

Ֆ Ա Վ. Բ.

(Մի էջանտիպ աշխատութիւնից)

Ծովը հանգչում է:

Միալար, անդուլ շշուկով լի
մի համերգ գէպի ափերը օրօրելով,
վէտվէտ կոհակների կայտառ ոս-
տումները միմեանց վրայ հանած,
անհոգ ծալքերի և շերտաւորում-
ների պչըրանքները քմահաճօրէն
վերջալոյսի տակ զունաւորելով—
փուում է ծովը անծայրածիր ու
վաստակաբեկ, խոնջեցած հսկայի
նման ընկողմանած:

Լուռ, խաղաղ է նա և շնչա-
ռութիւնը կանոնաւոր: Ո՛չ ալիք-
քերն են ծառանում այլևս սպի-
տակ փրփուրներով, ոչ ակօսացող

ծալքեր են զլորւում ու միմեանց
վրայ նետում ճերմակ բաշերի ա-
ճեցուն շարքեր, ոչ էլ անհամար
կոհակները ելնում են իջնում՝
խորքերը տանելու համար յուղ-
մունք ու վրդովմունք:

Ծովը հանգչում է, ծովը լուրջ
է և խոհուն:

Եթէ երեխն, մեղմիկ շշուկով,
պարբերաբար ափերն են լզում
նրա ջրերը և ճապաղ տարածու-
մով աւազը լւանում—կենսունա-
կութեան անշէջ խանդն է այն, որ
արտայայտում է հսկայի մեծ
կրծքի ելեէջներով, լոյն թոքերի
խուլ շփումով...

... Բայց ահա հեռուն, հորի-
շոնի վրայ ջրերը սկսում են ի-
րենց գոյնը փոխել մանրիկ, ճեր-

մտկ բաշենը են ոստոստում կա-
քաւող կայծերի նման. տարածու-
թեան վերջին ծայրիցն սկսած,
զարթնումի մի ազդարար նշանից
կարծես, ներշնչում է իւրաքան-
չիւր կաթիլ, ջրերը երերում են,
ցնցում վարանոտ ելեէջներով,
յետոյ, անհամար թմբիկներ իրար
են ըկերանում, խուճապալից վազ-
քով միմեանց ձեռքիցը բռնում,
մէն մի ցայտումի շարժումը ժո-
ղովում, մէն մի շշուկը հաւաքում,
ի մի են ձուլում և առաջ նետ
ւում...

Ծովը շարժւում է:

Գալիս են ահա ծալքերն այն
մթին՝ միմեանց մղող աճապարու-
մով, ահեղ շառաչիւնի որհարբեր-
նին, լեռների նման դիզացած
զանգւածներով... վազում են ջլ.

ըերը՝ իրար զօրեղացնող մղումնե-
րով, շուրջը համակ՝ կուի միա-
լար, աճեցուն որհան է, որ խլաց-
նում է ամեն ինչ. որոտ, որ
սպառնալից՝ գնում է դէպի ժայ-
ոերը, դողացնում ապառաժները:

Ու յիրաւի, շուրջը ամեն ինչ
դողում է. Կծկուում են ափերը՝
որպէս չափագանց չնշին, չափա-
գանց արհամարհելի շրջափակներ։
Շղթայագերծ ջրերը այլս չեն
սրանում. մարտնչողների գոռ
յամառութիւնով գնում են նրանք
և մոնչում ահեղագոչ. շերտաւոր
փրփրումներով երախներ են բաց-
ւել ամեն կողմից, լեռներ են
բարձրանում աջ ու ահեկ՝ ամեն
ինչ փշողի և խոյացումի մեծ
էափով. իսկ ծովային բոյսերն
ոյն հերարձակ՝ կանաչ գիսակները

հովին տւած, յանկարծակի լարզ-այլող երախների հապճեպ շար-
ւող դրոշների պէս ծփում են եռմիերով և քնից նոր ելածի՝
ոանգագին և ողջունում հսկայի ըբեմի ապուշ և հասկանալ որո-
գարթնումը, վերսկած գնու շար-ողի ոստումներով—
Եւ ծովը կնճոռտ, ծառանման
ժումը...

ամար ետ գալարւող, ապա, զար-
ծովը հմայիչ, ծովը ծփուն ու ուրելի զանգւածներով ժայռերի
գեղածիծաղ, լուսնի շողբերի տակ էմ պայթող—
Ննջող դողահար կոյսի գրաւչու- Զորս պատկերներ են պերձա-
թեամբ, ծովը կաթնագոյն ժպտու օս. տարերային չորս բնական
ու հրապուրիչ—

Ծովը ընկըկող, խոնարհ ու ուջորդումներ, որոնք երբեք չեն
գետնաբարշ, կծկւած ու գծուծ, յլայլուում. այնպէս, ինչպէս ան-
ամեն շարժում միմիայն հնազան- արելի է արևել ոչնչացնել բոռունց-
սերով և կամ ջրի հոսանքը դա-
դութեան համար գործադրող, ծո- սրեցնել թումբերով...
վը՝ հայելու նման միապաղադ ու
ճահճացած—

Ծովը՝ խորքերից դէպի վեր
հանող անորոշ և վարանոտ ծփում-
ներով, մանրիկ թմբիկների ու

Ա. Փափազեան



1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
999
1000

6722

2013

«Ազգային գրադարան»



NL0032170

